

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF HISTORY

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ИСТОРИИ

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ  
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)**

THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA  
(SCIENTIFIC JOURNAL)  
ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ  
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

**1 (28)**

**ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԺԵԱՆ**

**ՄԱՏԵՆԱՇՐ**

**251**



**ARCH.MESROB ASHJIAN**

**BOOK SERIES**

**251**

**ԵՐԵՎԱՆ 2024**

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ**

**Խմբագրական խորհուրդ**

Ա.Ա. Մելքոնյան (նախագահ), Կ.Հ. Խաչատրյան (նախագահի տեղակալ),  
Ա.Ի. Շահնազարյան (գլխավոր խմբագիր), Ա.Ռ. Խոսրովա (ԱՄՆ),  
Ա.Վ. Դումիկյան (ԱՄՆ), Խ.Ր. Գազեր (ԳՖՀ), Ի.Վ. Կրյուչկով (ՌԴ),  
Հ.Ղ. Մուրադյան, Վ.Հ. Թորոսյան, Մ.Կ. Կոնինյան (պատ. քարտուղար)

**Редакционная коллегия**

А.А. Мелконян (председатель), К.Г. Хачатрян (заместитель  
председателя), А.И. Шахназарян (главный редактор), А.Р. Хосроева  
(США), А.В. Думикян (США), Х.Р. Газер (ФРГ), И.В. Крючков (РФ),  
А.Г. Мурадян, В.Г. Торосян, М.К. Конинян (отв. секретарь)

**Editorial board**

A.A. Melkonyan (chairman of the board), K.H. Khachatryan (deputy  
chairman of the board), A.I. Shahnazaryan (editor-in-chief), A.R. Khosroeva  
(USA), A.V. Dumikyan (USA), H.R. Gazer (FRG), I.V. Kryuchkov (RF),  
H.Gh. Muradyan, V.H. Torosyan, M.K. Koninyan (executive secretary)

Պարբերականի հերթական համարում հրատարակվող հոդվածները սկզբնաղբյուրների, արխիվային նյութերի, մամուլի հրապարակումների, հայրենի և համաշխարհային պատմագիտական գրականության լայն հենքի վրա լույս են սփռում Հայոց հին և միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանների պատմության առանձին հիմնահարցերի վրա:

**Տպ. - ISSN 1829-4596**

**Էլ. - ISSN 2953-8084**

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2024

**ԿԱՐԵՆ Ս. ԹՈՒՆԱԹՅԱՆ**

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ.

karen.tokhatyan@gmail.com

ID: 0009-0001-3246-9116

DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-3

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺԱՅՌՈՒՓՈՐԱԳԻՐ ՆՇԱՆՆԵՐԸ ԵՒ  
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԳՐԵՐԸ\***

**Բանալի բառեր՝** ակոսանշան, ժայռապատկեր, խորհրդանշան, հնագիտություն, մեհենագիր, գաղափարագիր, «Նշանագիրք իմաստնոց», վարպետանշան, տառանման նշան:

**Ներածություն**

Հայաստանի ժայռապատկերների բովանդակային բազմազանության մեջ որոշակի է չորս հիմնական ոլորտ՝ բնություն, մարդու առօրյա, արարման արդյունքներ ու ներաշխարհ: Դրանցում առանձնանում է 31 թեմային խումբ. տեղանքի տարր, Երկրագունդ, երկնային լուսատու և երևույթ, օդերևույթ, երկրային երևույթ,

---

\* Ներկայացվել է 09.1.2024 թ., գրախոսվել է 19.1.2024 թ., ընդունվել է պատմության 07.VI.2024 թ.:

բույս, կենդանիներ, գյուղատնտեսություն, որս, գազանամարտ, մարտարվեստ, մարզում, մրցախաղ, պար, զենք, գործիք, փոխադրամիջոց, շինվածք, կիրառական պատկեր, ուսուցման միջոց, խաղի պարագա, հագուստ, պաշտամունք, երևակայական էակ, ներպատկեր, դիմապատկեր, անորոշ պատկեր, զարդանախշ, խորհրդանշան, տառանման նշան<sup>1</sup>:

Դրանց գործառույթի և իմաստի ըմբռնման համար արդյունավետ է համադրումը մշակույթի հարակից ոլորտների արգասիքներում առկա գաղափարագրերի հետ՝ խեցեղեն, քանդակ, դրվագված իր, կնիք, որմնանկար, մանրանկար, դրամ, վիմագիր, գորգ և այլն:

### **Կերտման ժամանակաշրջան**

Ժայռապատկերը Հայաստանի պատկերագրական մշակույթում հնագույնն է: Ժայռապատկերումը սկզբնավորվել է Ք.ա. VII-V հազ. միջակայքում՝ նստակեցության և երկրագործության անցնելուն համընթաց և հաջորդ՝ ավելի կատարյալ գրահամակարգերի լայն կիրառման հետևանքով հետզհետե անկում ապրել<sup>2</sup>:

Հորինվածքների ու ոճերի մի մասը բնական շարու-

---

<sup>1</sup> Թոխաթյան. 2020, 3-4:

<sup>2</sup> Հաղորդակցական նոր ձևերը՝ մեհենագիրը, սեպագիրն ու այբուբենն ավելի հարմար են, արագ ու միարժեք են գրանցում ու փոխանցում տեղեկությունը, առավել պարզ են և մատչելի, թեև՝ պակաս արտահայտիչ և պատկերավոր:

նակություն է գտել հայ մշակույթի բազմաթիվ ոլորտներում: Ժայռապատկերման ավանդույթների վերապրուկային դրսևորումներ՝ հնագույն պատկերի ոճով փորագրություններ ու որմնանկարներ կան բրոնզ-երկաթի դարերի, սեպագրական փուլի, անտիկ ու միջնադարյան աշխարհիկ ու հոգևոր կառույցների սալաքարերին ու պատերին, ճգնավորական անձավներում: Ժայռանկարի ձևիմաստային տարրերը նույնակերպ, հաճախ նույնախորհուրդ դրսևորվել են ըստ տեսքի, ոճի, տեխնիկայի և արտահայտած իմաստի, շարունակաբար լրացվելով նորանոր նշաններով: Միջնադարյան նշանագրերին հաճախ ակնառու նմանությունը կարող է վկայել, որ փորագիր նշանները ստեղծվել և հնում ևս կիրառվել են որպես գաղափարագիր /աղ. 8/:

### **Խորհրդանշան**

Գեղամա, Վայքի, Սյունիքի և Արցախի լեռների, Արագածի, Նավասարի ու Շատախի մոտ 10 հազար կոթողների գրեթե մեկ տասներորդը մեկուսի նշաններ են /աղ. 1/: Ավելին, շատ հաճախ հաճախ դրոշմվել են նաև պարզ, ըմբռնելի տեսարաններում (կենդանի, որս, մարտ, պար, վար): Բնական է համարել, որ դրանք որոշակի իմաստ ու դեր են ունեցել, արվել են սյուժեի լրացման, ճշգրտման, ևս մի կամ այլ իմաստ, նրբերանգ ավելացնելու, շեշտելու համար: Հարկ է ընդունել նշանի գաղափարագիր, որոշիչ (դետերմինատիվ) լինելը: Սա

կարևոր է ժայռապատկերի իմաստի պարզաբանման համար:

Սրանք հիմնականում պարզ նշաններ են՝ կետախումբ, ուղիղ, կոր, անկյունիկ, կեռիկ, բեկյալ, օղակ, պարույր, ալիք, խաչ, սլաք, ճառագայթներ, Ց, տերև, ճյուղ, սեպ, եռանկյունի, քառակուսի և այլն, որոնց համակցումներով կազմվել են բարդերը: Նշանը դրոշմված է որոշակի իրողություն (էակ, իր, երևույթ) ցուցադրող ժայռապատկերի ընդհանուր դաշտում (այս դեպքում հաճախ մեկուսի է, փոքր-ինչ առանձնակի): Թեև սակավ, բայց հանդիպում է լոկ մեկ նշանով ժայռապատկեր: Այս երկու՝ մեկուսի և մենանշանի եղանակով, ըստ երևույթին, առավել շեշտվել է տվյալ նշանի կարևորությունը: Կան նույնիսկ միայն նշաններից կազմված հորինվածքներ՝ առանց որևէ կոնկրետ, իրական պատկերի:

Հնադարի մարդու պատկերային «լեզուն» պարզ էր, համընդունելի, պատկերի և նշանի համակցությամբ արտահայտվող ասելիքը միանշանակ էր՝ անկախ բովանդակային և ոճական տարբերակներից ու նրբերանգներից: Աշխարհի տարբեր ծագերում և բոլոր ժամանակներում մերձ են «պատկերալեզվի» և «պատկերախոսքի» մտածողական ու հոգեբանական հենքերը, ուստի և միտքն արտահայտվել է գրեթե նույն պատկերակերպով: Մտածածն ու զգացածը պատկերելով, կերպավորելով, պատկեր դարձնելով ներկայացնելու, բացատրելու և

փոխանցելու իմաստն ուղղակիորեն ու լիարժեք բացահայտվում է հայերեն պատկերացում բառի կազմությամբ<sup>3</sup>:

Ժայռապատկերներում կան նշաններ և նկարվածքներ, որոնք հավանաբար արտացոլում են դիրքա-շարժումային (ժեստերի) լեզվի տարրեր: Խոսքի գրանցման այս պատկերային ձևը ժամանակի հաղորդակցության միջոցներից էր: Խորհրդանշանն ընդհանրական է և հնարավորինս միարժեք ընկալելի, ուստի վաղ անցյալում միջէթնիկ շփումների միջոց է եղել իր համամարդկային, վերէթնիկ բնույթի շնորհիվ: Ինչպես այլուրեք, գծայնացման արդյունքում նկարը հետզհետե վերաձվել է պատկերագրի, հետագայում՝ նաև գրանշանի: Ուստի, ժայռարվեստի այս ենթաշերտի ուսումնասիրությունն ունակ է լույս սփռելու մտածողության, խոսքի և գրի ծագման, դրանց հաջորդայնության ու համաժամանակության խնդիրներում:

## **Տառանման նշան**

Սա առանձնանում է Հայաստանի ժայռափոր նշանների ծիրում: Այն իրական տառ՝ գրավոր խոսքի կազմատարր և հնչույթի գրառման նշան չէ, որով բառ է կազմ-

---

<sup>3</sup> «Պատկերացում՝ ըմբռնուածին թանձրացեալ կամ մտաւոր վերարտադրութիւնը, պատկերանալը, պատկերացնելը» (**Տէր Խաչատուրեան**. 1992, 679): «Պատկերել՝ պատկերացնել, արտահայտել, արտացոլել, նկարագրել, պատկերագրել, գծել, ներկայացնել, բացատրել» (**Սուքիասյան**. 1967, 539):

վում<sup>4</sup>: Հազվադեպ է 2-3 կից տառանմանով ժայռանկարը, այսպիսի «տառակապակցությունը» լեզվի որևէ իմաստակիր միավոր, բառիմաստ չունի՝ չի «ընթերցվում»: Ընդամին, հարկ է նշել, որ թեև քիչ են տառանմանների համակցություն կրող առանձնակի քարերը, սակայն, միանգամայն հավանական է հարևան ժայռապատկերների իմաստակից լինելը, հատկապես՝ եթե դրանք սոսկ նշաններով են կազմված: Նմանություն կա գրային մի շարք համակարգերի նշանների, հատկապես՝ հնչյուն ու վանկ արտահայտող խեթալուվիական մեհենագրերի հետ /աղ. 7/: Մեր ժայռանկարներում կա Մաշտոցյան (հայոց, վրաց, աղվանից) /աղ. 2/, փյունիկյան /աղ. 3/, հարավսեմական, արամեական, պալմիրյան, հունական /աղ. 4/, լատինական, միջին-պարսկական և այլ այբուբենների տառերին նմանվող ավելի քան 100 նշանաձև<sup>5</sup>:

---

<sup>4</sup> Այբուբենում գրի միավորը տառն է. «գիրը տառի մարմնավորումն է», ըստ Մովսես Քերթոզի՝ «Սկիզբն արարեալ զտառէ, պատմէ զգրոյ» (**Մովսէս Քերթոզ**. 2005, 1196): Ոչ այբբենական համակարգերում գրի միավորը վանկանշանն է, մեհենագիրը և գաղափարագիրը:

<sup>5</sup> Տառաձևի, գրի և ժայռապատկերի աղբյուրների շուրջ տե՛ս **Պետրոսյան**. 1998, 22-23: **Պետրոսյան**. 2005, 11-12, 22-24, 28-30: **Սարգսյան**. 1999, 76-131, 269, 321: **Թոխաթեան**. 2003, 79-81, 90-96: **Թոխաթյան**. 2006, 56: **Թոխաթյան**. 2015, 371, 377: **Թոխաթյան**. 2016, 192: **Մովսիսյան**. 1998, 52-54: **Մովսիսյան**. 2003, 9-21: **Մովսիսյան**. 2021, 95-100, նկ. 4-6: **Tokhatyan**. 2015, 192. **Tokhatyan**. 2020, 139. **Tokhatyan**. 2022, 25, 27. Դրանց անդրադարձել է նաև չեխ ժայռապատկերաբան Մ. Կշիցան (**Ksica**. 1984, 269. **Թոխաթյան**. 2017, 148):



Թեև տառանման նշանները դրսևորված են տարբեր ձևով, ոճով ու դիրքով, սակայն խիստ կենտրոնացած են տվյալ նշանի միջին տեսքի շուրջ, հաճախ նկատելի են անցումային ու զարգընթացային շարքեր, «ձեռագրական» տարբերակներ /աղ. 5/: Մի մասը կենտրոնացած են նաև որևէ առարկայի, կառուցվածքի, երևույթի, մարմնի մասի, ձևի, դիրքի և վիճակի միջին պատկերակերպի շուրջ, այսինքն՝ տառանման նշանը կարող է լինել այդ իրողության գծագիր, սխեմային արտահայտությունը:

## **Ակոսանշան**

Հայկական լեռնաշխարհի մենաշնորհ այս կոթողը նշանագրի հավանական տեսակ է: Հիմնականում բրոնզ-երկաթի դարերի ամրոցներում գտնվող 0.7-3 մ չափի, 4-30 սմ խորության և 6-30 սմ լայնության փորվածք է գետնատարած քարամակերեսի և մեծ ժայռաբեկորի վրա<sup>6</sup>: Ավելի քան 25 հնավայրում արդ հայտնի է մոտ 150 հատ: Գտնվում են հետևյալ վայրերում. ՀՀ տարածքում՝ Հոռոմ, Մեծամոր, Դաշտադեմ, Վանի ավազանում՝ Արտամետ, Հայկաբերդ, Վանի միջնաբերդ,

---

<sup>6</sup> Հայաստանում սրան անդրադարձել է Ա. Մովսիսյանը, կոչելով այն հսկայանշան (**Մովսիսյան**. 2003, 206-211: **Մովսիսյան**. 2021, 195-197): Ակոսանշան եզրն ավելի բնորոշ է կերտվածքին, քանի որ իբրև հսկայանշան կարող է ընկալվել նաև ամեն մի խոշոր չափի պատկեր, օր.<sup>1</sup> գունավոր ժայռանկարը:

Փանգ, Վերին Անձավ, Գայթիս, Օրորան, Դատվան, Արածանիի վերնագավառում (Բագրեանդ)՝ Մուշյան, Վարաժնունիքի հյուսիսում՝ Հերթ (Խըրթ, Կերտ), Արաքսի վերին հոսանքում՝ Արուճագրակ, Բագայառիճ (Դերջան՝ Բարձր Հայք), Պարտիզակ և Մեծկերտ (Բալախովիտ՝ Ծոփք), Խաղտյաց լեռնաշղթայի հյուսիսարևմտյան լանջերին՝ Արդիճ, Արարատի հյուսիս-արևմտյան ստորոտում՝ Մաղարաբլուր (Մասեացուն՝ Այրարատ), Գայլատու լճից հյուսիս-արևելք՝ Վարդամարգ (Ճակատք՝ Այրարատ) լճից հարավ-արևելք՝ Առուն (Կոգովիտ՝ Այրարատ), Կապուտան լճի արևմտյան ափին՝ Ջամբիլ (Թրաբի՝ Պարսկահայք), Կապուտանից հյուսիս՝ Բաստամ (Ճուարշ-Ռոտ՝ Վասպուրական) և այլն: Մի մասը նման են ժայռապատկերների աստղագիտական իմաստակրությամբ նշաններին /աղ. 6/:

### **Վարպետանշան**

Սա առավել ուղղակի է առնչվում նշանագրին: Դեռևս IV դ. սկիզբ առաժ այս վիմագիր նշանների մասին Ս. Բարխուդարյանը գրել է, որ դրանք բաժանվում են «երկու հիմնական խմբի. տառային և զանազան երկրաչափական» և, այբբենական տառերի համեմատ «ավելի շատ են այնպիսիները, որոնք կարող են համեմատվել մեր ձեռագիր մատյաններից հայտնի «նշանագրերի» և նույնիսկ հայ գրերից ժամանակով ավելի հին, զանա-

զան վայրերից հայտնի անձանոթ գրերի կամ նշանների հետ»<sup>7</sup>: Նշանի կրկնվելն իրարից հեռու կառույցներում կարող է վկայել նույն քարգործ վարպետի աշխատանքի, կամ իմաստի ու ոճի շարունակման մասին, նպաստել անձի նույնացմանը, դրանով իսկ՝ հուշարձանի թվագրմանը: Նույնը հնարավոր է նաև ոճով նման ժայռապատկերների պարագայում:

Ս. Մնացականյանը կարևորել է դրանց հայատառ լինելը: Նա նկատել է, որ այդ հանգամանքը վկայում է կառույցի ազգության և մեզանում «այլ երկրներից վարպետներ հրավիրելու սովորության բացակայության մասին: ...Որ նման բազմաթիվ նշանագրեր են հանդիպում Հայաստանի սահմաններից դուրս, ինքնին արդեն վկայում է հայ վարպետների շինարարական գործունեության մասին նաև հարևան երկրներում, ...որն առանձնակի ծավալ է ստանում XI–XIV դարերում»<sup>8</sup>:

Ա. Մովսիսյանն ըստ լեզվաբան Ի. Գելբի տվյալների, առավել վաղ փուլին է առնչել դրանք: Բիայնական խեցեղենի ինը նշան նա դիտարկել է որպես «վարպետի նշան՝ ցույց տալու համար աշխատանքի հեղինակին» և հավելել՝ «Հայկական շինությունների պատերին պահպանվել են մեծ թվով վարպետանշաններ, որոնց մի մասը նույնությամբ առկա է նաև Վանի թագավորության

---

<sup>7</sup> Բարխուդարյան. 1963, 213:

<sup>8</sup> Մնացականյան. 1982, 11-12:

ժամանակաշրջանում»<sup>9</sup>: Նրան հղելով, Գ. Գրիգորյանը նշել է, որ «քարգործ վարպետների նշաններ կիրառվել են նաև վաղնջական ժամանակներում և ավանդաբար դրանք փոխանցվել են հետագա դարերին»<sup>10</sup>:

### **Ուսումնասիրման պատմություն**

Հ. Մարտիրոսյանը հնադարյան, բրոնզեդարյան, բիսյնական և միջնադարյան նշանագրերը համարել է տեղական պատկերագրության ժառանգական շղթայի օղակներ: Նշել է, որ «հետագա դարերում գրչության այդ ձևերը պարզունակ համակարգեր են կազմում և ընկնում ուրարտական հիերոգլիֆիկ գրության հիմքում, որն արմատով իսկ բնիկ Հայաստանյան երևույթ է դառնում: Չնայած սեպագրի լայն կիրառմանը, գաղափարագրությունը պահպանվում է և օգտագործվում վաղ հայկական հեթանոսական մեհյաններում: Գաղափարագրության հարատևման պատճառը Հայաստանում պետք է փնտրել նախնադարյան բնապաշտական գաղափարաբանության առողջ ու կենսունակ երակների, Հայաստանի մշակութային կյանքի անընդմեջ ու վերընթաց ավանդական զարգացման մեջ»<sup>11</sup>:

Հարատևած նշանների մի մասն ախտարական,

---

<sup>9</sup> Մովսիսյան. 1998, 19-21, նկ. 10: Մովսիսյան. 2003, 45-46, աղ. 9: Մովսիսյան. 2021, 183, աղ. 14:

<sup>10</sup> Գրիգորյան. 2000, 89:

<sup>11</sup> Մարտիրոսյան. 1973, 69, աղ. XXIII:

աստղագիտական մեհենագրեր են: Ժայռապատկերներում արտացոլված՝ նախնյաց տիեզերաբանական գիտելիքի մասին Հ. Մարտիրոսյանը նշել է. «նշանագրերի մի զգալի մասը վերաբերում է ժամանակի կոսմիկական հասկացողություններին, աստղահմայությանը և ցույց է տալիս աստղագիտության առաջին, բայց լուրջ քայլերը»<sup>12</sup>: Ձեռագրերում ու հնատիպ գրքերում կան աստղագիտական իմաստներով բազմաթիվ գաղափարագրեր՝ *Աղեղնաւոր, ամառ, Աշխարհ, աշուն, առաւօտ, Առիծ, աստղ, Արեգակն, արեւելք, արեւմուտք, Արուսեակ, գարուն, Եկաւոր, Երկիր, Երկինք, լրումն, Լուսին, Խոյն, հարաւ, ծմեռ, Ջրիոս, վիշապ, Տուն, փայլակն* և այլն<sup>13</sup>:

Ժայռապատկերների լայնածավալ հայտնաբերումների հիմամբ Ա. Աբրահամյանը եզրակացրել է, որ նախամաշտոցյան «Հայաստանում սիմվոլիկ նշաններով պրիմիտիվ ժայռագրություն է գոյություն ունեցել դեռևս վաղ նախնադարում»<sup>14</sup>: Ա. Մովսիսյանը ևս ժայռանկարը դիտարկել է որպես գրի մինչայբբենական փուլ, առնչելով բիայնական մեհենագրերին և միջնադարյան նշանագրերին<sup>15</sup>:

Քրիստոնեության օրոք հնագույն գաղափարագրերի

---

<sup>12</sup> Մարտիրոսյան. 1973, 70:

<sup>13</sup> Նման գաղափարագրերի 40 օրինակ տե՛ս Թումանյան. 1964, 362-364: Մարտիրոսյան. 1973, 68, աղ. XXIII:

<sup>14</sup> Աբրահամյան. 1982, 43:

<sup>15</sup> Մովսիսյան. 1998, 27, 52-57: Մովսիսյան. 2003, 9, 17, 20, 227: Մովսիսյան. 2021, 77-83, 87-90, 95-100, նկ. 4-6:

հարատևման դրսևորում են ձեռագրերի «Նշանագիրք իմաստնոց» («Նշանագիր անուանց», «Այսոքիկ են գրոյս նշանագիրքն», «Այս է նշանագրերն Հայոց ազգի», «Վասն պատուագրաց» և այլ կերպ կոչված) ցանկերը<sup>16</sup> յուրաքանչյուր նշանի բացատրությամբ /աղ. 6/:

Ժառանգության հետազոտությունը սկիզբ առավ 1730 թ., երբ Մ. Սեբաստացին հրատարակեց 46 նշանների մի ցանկ: Մ. Չամչյանցը դրանք այսպես բնորոշեց. «այն գիրք գուցէ չէին յատուկ տառք, այլ՝ նշանագիրք ինչ, որ հնարել էին փոխանակ ամբողջ բառից. զոր կան և այժմ 'ի հին ձեռագիրս այդպիսիք ասելի քան զերկու հարիր»<sup>17</sup>: Ուսումնասիրությունը շարունակեցին Մ. Էմինը (84 նշան), Պ. Մարտինը (257 նշան), Գ. Սրվանձտյանցը (120 նշան), Տ. Պալյանը (511 նշան), Ի. Սրապյանը (25 նշան) և այլք<sup>18</sup>: Ամենամեծ ժողովածուն կազմել է Հ. Աճառյանը, քննել է նաև դրանց նախամաշտոցյան ծագման խնդիրը և իր դիտարկած 509 նշանագրերից 32-ը համարել բուն պատկերագիր՝ հետմետրոպայան շրջանում ստեղծված<sup>19</sup>:

---

<sup>16</sup> Աբրահամյան. 1959, 139: Աբրահամյան. 1973, 201: Աբրահամյան. 1982, 38-43, 144-145:

<sup>17</sup> Չամչեանց. 1784, 761:

<sup>18</sup> Առավել մանրամասն տե՛ս Աճառյան. 1928, 23-30: Աբրահամյան. 1959, 139-142: Աբրահամյան. 1973, 201-202: Մովսիսյան. 2021, 181-182:

<sup>19</sup> Աճառյան. 1928, 24-59 և հավելված: Այդ 509-ից 332-ը համարել է մաշտոցյան տառաձևերից ստեղծված, 124-ը՝ անհայտ ծագման, 21-ը օտար ծագումով: Նշանների ցանկը զետեղվել է գրքի հավելվածում:

«Նշանագիրք իմաստնոց»-ի ուսումնասիրման ասպարեզում մեծ ներդրում ունի Ա. Աբրահամյանը: Քննելով 49 ձեռագիր, նա ցույց է տվել, որ ձեռագրերի՝ «Երզնկայի» խմբի նշանագրերի մեծ մասը (մոտ 180-ը) կապ չունի մեսրոպյան այբուբենի հետ և բազմաթիվ զուգահեռներ ունի Հին աշխարհի այլ գրային համակարգերում<sup>20</sup>:

Բրոնզի դարից միջնադար կիրառված նշանագրերի և ժայռափորագիր նշանների ծավալուն համադրումներ են արել Լ. Բարսեղյանը<sup>21</sup>, Հ. Մարտիրոսյանը<sup>22</sup> և Ա. Մովսիսյանը<sup>23</sup>: Նախամեսրոպյան գրի և հմայագրերի որոշ աղերսների անդրադարձել է Լ. Խաչիկյանը<sup>24</sup>:

### **Եզրակացություններ**

Ժայռապատկերն իմաստաբանությամբ և նկարվածքով աղերսվում է հայ մշակույթի մյուս ոլորտների արգասիքներին, որոնց միահյուս է մշտական թեմայով՝ կան հնագույն ու կայուն մոտիվներ, ընդհանուր-միավորիչ թեմային հաստատուններ: Այս շարքում են հնագույն փորագիր խորհրդանշանները, որոնք իմաստի վերձանման

---

<sup>20</sup> Աբրահամյան. 1959, 144-173: Աբրահամյան. 1973, 204-243:

<sup>21</sup> Барсегян. 1961, 238-244. Барсегян. 1967, 85-90, նկ. 1-3. Բարսեղյան. 1964, 48-51, նկ. 2:

<sup>22</sup> Մարտիրոսյան, Իսրայելյան. 1971, 22: Մարտիրոսյան. 1973, 7-11: Մարտիրոսյան. 1978, 79-89, աղ. IV-VIII: Մարտիրոսյան. 1981, 70-80:

<sup>23</sup> Մովսիսյան. 2003, 8-69, 200-212: Մովսիսյան. 2021, 181-186 և հավելված:

<sup>24</sup> Խաչիկյան. 1963, 157:

դեպքում վերածվում են գաղափարագրի և ունակ են լուսաբանելու նախնադարի մտածողական դաշտի բազմաթիվ նրբերանգներ:

Առկա է կարևորագույն մի հանգամանք ևս՝ տեղաձին, տևական և ավանդական այս մշակութային ոլորտի անընդհատությունը, անցումայնությունն ու ժառանգորդայնությունը: Կերպարվեստի հնագույն այս շերտը՝ ժայռապատկերը, գրեթե բոլոր թեմաներով, իմաստաբանությամբ, փորագրման ավանդույթներով ու տեխնիկայով, տեսակներով և ոճերով հարատևել է ժամանակի հորձանուտում:

Ժայռարվեստի և մշակույթի մյուս ճյուղերի շարունակական լինելը և տարբեր փուլերի արարումների ընդհանրությունն իր բնապատմական տարածքում հայոց հարակայության ևս մի հավաստիք են<sup>25</sup>:

Հայաստանի խորհրդանշանակիր ժայռապատկերներն աշխարհի ճանաչման ու մեկնաբանման վաղագույն բնափիլիսոփայական մտածողության դրսևորումներ են:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Աբրահամյան Ա. Գ.** 1959, Հայ գրի և գրչության պատմություն, Երևան, «Հայպետհրատ», 415 էջ:

**Աբրահամյան Ա. Գ.** 1973, Հայոց գիր և գրչություն,

---

<sup>25</sup> **Թոխաթյան.** 2006, 53-58: **Tokhatyan.** 2015, 205. **Tokhatyan.** 2020, 154. **Tokhatyan.** 2022, 31:



Երևան, «Երևանի համալսարան» հրատ., 373 էջ:

**Աբրահամյան Ա. Գ.** 1982, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, «Հայաստան» հրատ., 150 էջ:

**Աճառեան Հր.** 1928, Հայոց գրերը, Վիեննա, «Մխիթարեան տպ.», 501 էջ, հավելված:

**Բարխուդարյան Ս. Գ.** 1963, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, «ՀՍՍՌ ԳԱ» հրատ., 381 էջ (91 լուս.):

**Բարսեղյան Լ.** 1964, Հայոց գիրը Մաշտոցից շատ առաջ, «Գիտություն և տեխնիկա», Երևան, № 3, էջ 48-51:

**Թոխաթեան Կ.** 2003, Մաշտոցեան տառածեւերի եւ դրանց ժայռապատկեր նմանակների աղերսների շուրջ, «Բազմավէպ», Վենետիկ - Ս. Ղազար, ՃԿԱ տարի (CLXI), № 1-4, էջ 44-100:

**Թոխաթյան Կ.** 2006, Ժայռապատկերները Հայկական լեռնաշխարհում հայոց հարակալության վկաներ, «Հարք» հայագիտական հանդես, Երևան, № 1, էջ 52-59:

**Թոխաթյան Կ.** 2015, Հայաստանի ժայռապատկերները նախնադարյան արվեստի համատեքստում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 2, էջ 368-381:

**Թոխաթյան Կ.** 2016, Հայաստանի ժայռապատկերների բովանդակությունը, «Պատմաբանասիրական հանդես» Երևան, № 2, էջ 180-198:

**Թոխաթյան Կ.** 2017, Ժայռապատկերաբան Միրոսլավ Կշիցան Հայաստանում, «Օտարազգի հայագետների ավանդը Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրության բնագավառում» (միջազգային գիտաժողովի նյութեր), Երևան, «ՊԻ» հրատ., էջ 146-154:

**Թոխաթյան Կ.** 2020, Գործիքը, փոխադրամիջոցը և կառուցվածքը Հայաստանի ժայռապատկերներում, «Հայոց պատմության հարցեր», Երևան, № 21, էջ 3-20:

**Թումանյան Բ.** 1964, Հայ աստղագիտության պատմություն (հնագույն ժամանակներից մինչև XIX դ. սկիզբ), Երևան, «Միտք», 414 էջ:

**Խաչիկյան Լ. Ս.** 1963, Նախամեսրոպյան գրի հարցը և հմայագրերը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, № 4, էջ 145-158:

**Մարտիրոսյան Հ. Ա.** 1970, Ժայռապատկերների դասակարգման մի քանի նախնական տվյալներ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 9, էջ 54-70:

**Մարտիրոսյան Հ. Ա.** 1973, Հայաստանի նախնադարյան նշանագրերը և նրանց ուրարտա-հայկական կրկնակները, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 82 էջ, 23 աղ.:

**Մարտիրոսյան Հ. Ա.** 1978, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, «Սովետական գրող» հրատ., 206 էջ, 40 աղ., 127 նկ.:

**Մարտիրոսյան Հ. Ա.** 1981, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 11, պր. III, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 128 էջ, 40 նկ., 81 աղ.:

**Մարտիրոսյան Հ. Ա., Իսրայելյան Հ. Ռ.** 1971, Գեղամա լեռների ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 6, պր. II, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 66 էջ, 333 նկ.:

**Մնացականյան Ս. Խ.** 1982, Վարպետաց վարպետներ, Մանուել. Տրդատ. Մոմիկ, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 180 էջ, 28 թերթ նկ.:

**Մովսէս Քերթոզ** 2005, Մեկնութիւն քերականին, Մատենագիրք Հայոց, հ. Ե, Անթիլիաս, էջ 1191-1208:

**Մովսիսյան Ա.** 1998, Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Երևան, «Գիտություն», 107 էջ, 35 աղ.:

**Մովսիսյան Ա.** 2003, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, «Երևանի համալսարան» հրատ., 398 էջ:

**Մովսիսյան Ա.** 2021, Հայաստանի նախամաշտոցյան գրավոր մշակույթի պատմություն, Երևան, «Չանգակ» հրատ., 448 էջ:

**Չամչեանց Մ.** 1784, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, «Ի տպ. Պետրոսի Վաղվազեանց», հ. Ա, 803 էջ:

**Պետրոսյան Ա.** 1998, Պատմում են ժայռապատկերները, «Գիտություն և տեխնիկա», Երևան, № 1-3, էջ 18-23:

**Պետրոսյան Ա.** 2005, Հայկական ժայռապատկերներ, Երևան, «Եգեա» հրատ., 244 էջ, 648 նկ.:

**Սարգսյան Վ.** 1999, Հայոց գրերի ծագումը (ներքին վերականգնում), Երևան, «ԵՊՀ» հրատ., 336 էջ:

**Սուքիասյան Ա.** 1967, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, «ՀՍՍՀ ԳԱ» հրատ., 1339 էջ:

**Տէր Խաչատուրեան Ա.** 1992, Հայոց լեզուի նոր բառարան, հ. Բ, Պէյրուֆ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք» հրատ., 1208 էջ:

**Барсегян Л. А.** 1961, Об одной урартской иероглифической надписи, «Պատմա-բանասիրական հանդես», № 3-4, с. 238-244.

**Барсегян Л. А.** 1967, Об урартской иероглифической

письменности, «Պատմա-բանասիրական հանդես», № 2, с. 85-90.

**Ksica M.** 1984, Vypravy za pravekym umenim, Bratislava, “Svetom”, 312 p.

**Tokhatyan K.** 2015, Rock carvings of Armenia, Fundamental Armenology, № 2, p. 184-205 /<fundamentalarmenology.am/datas-/pdfs/180.pdf>.

**Tokhatyan K.** 2020, Petroglyphs of Armenia along the Great Silk Road, Studies on Cultures along the Silk Roads, Budapest, vol. 2, p. 129-154.

**Tokhatyan K.** 2022, Petroglyphs in Armenian Highland, Historical-cultural Heritage of Armenia, Yerevan, “Scientific Research Center of Historical and Cultural Heritage”, p. 21-31.

**Карен С. Тохатян, Институт истории НАН РА, к.и.н.,  
Наскальные изображения Армении и средневековые  
идеограммы**

## Резюме

В армянском наскальном искусстве выделяются четыре основные сферы: природа, повседневная жизнь человека, плоды его творчества и внутренний мир. Их богатое многообразие разделено мной на 31 тематическую группу: элементы местности, Земля, небесные светила, небесные, атмосферные и земные явления, растения, животные, земледелие, охота, борьба животных, сражения, спорт, соревнования, танцы, оружие, инструменты, транспортные средства, конструкции, прикладные изображения, средства обучения, игровые пособия, одежда, культ, мифические существа, анатомия существ, портрет, неопределенное изображение, орнамент, символы, буквообразные знаки.

Наскальное искусство в Армении зародилось в VII-V тысячелетиях до н.э. и постепенно было заменено более развитыми системами письма. Некоторые древние композиции и стили нашли естественное продолжение в других сферах армянской культуры. Традиции петроглифов наблюдаются в барельефах и фресках раннего железного века и клинописного периода, античных и средневековых сооружениях и пещерах. Навыки резьбы сохранились в конструкциях, скульптуре, клинописи и лапидарных надписях. Очевидное сходство со средневековыми пиктограммами может свидетельствовать о том, что наскальные знаки применялись в качестве идеограмм с давних времен.

Почти одна десятая часть из 10 тысяч известных петроглифов – отдельные, изолированные символы. Такой знак часто запечатлен и в простых, обыденных сценах, и следует воспринимать его как идеограмму, детерминатив. Среди разнообразия петроглифов выделяются буквоподобные знаки, но они не алфавитные буквы. Сходства наблюдаются с рядом систем письма, особенно с хеттско-лувийскими иероглифами. В наскальных рисунках Армении встречается более чем 100 видов знаков, похожих на буквы маштоцовского и других алфавитов.

Общепонятный символ в древности служил средством межэтнического общения в силу своей универсальной, надэтнической сущности. Как и везде, в результате линеаризации он превратился в развитую пиктограмму, а на более поздних этапах – в букву. Поэтому изучение этого субстрата петроглифов может пролить свет на проблемы происхождения человеческого мышления, речи и письма, их последовательности и синхронности.

**Ключевые слова:** знаки-борозды, петроглиф, символ, археология, иероглиф, идеограмма, знаки мудрости, знак мастера, буквоподобные знаки.

**Karen S. Tokhatyan**, *Institute of History of NAS RA, PhD in History*, **Rock-carved Signs of Armenia and the Medieval Ideograms**

### **Summary**

In Armenian rock art, four main areas are distinguished: nature, everyday life, results of human creation and the inner world. I've organized their rich diversity into 31 thematic groups: terrain elements, the Earth, heavenly luminaries, celestial, atmospheric and terrestrial phenomena, plants, animals, agriculture, hunting, animal fighting, battles, sports, competitions, dance, weapons, instruments, transportation means, constructions, applied images, learning tools, play aids, garment, cult, mythical creatures, anatomy of creatures, portrait, uncertain image, ornament, symbols, letter-like signs.

Rock art in Armenia originated in the 7<sup>th</sup> - 5<sup>th</sup> millennia BCE and was gradually replaced by more developed writing systems. Certain ancient compositions and styles naturally continued in other areas of Armenian culture. The traditions of petroglyphs are observed in bas-reliefs and frescoes of the early Iron Age and Cuneiform periods, as well as in ancient and medieval structures and caves. The skills of carving have been preserved in constructions, sculpture, cuneiform and lapidary inscriptions. The obvious similarity with medieval pictograms may indicate that rock-carved signs served as ideograms since ancient times.

Nearly one tenth of the 10 thousand known petroglyphs are separate, isolated symbols. Such a sign is often depicted in simple, ordinary scenes, and it should be perceived as an ideogram, determinative. Among the variety of petroglyphs, letter-like signs stand out, but they are not alphabetic letters. Similarities are observed with a number of writing systems, especially with Hittite-Luwian hieroglyphs. In the rock carvings of Armenia there are more than 100 types of signs similar to the letters of Mashtots and other alphabets.

symbol in ancient times served as a means of interethnic communication due to its universal, supra-ethnic nature. As elsewhere, in the result of linearization it turned into a developed pictogram, and at later stages – into a letter. Therefore, the study of this substratum of petroglyphs can shed light on the problems of the origin of human thinking, speech and writing, of their sequence and synchronicity.


***Key words:*** furrow-sign, petroglyph, symbol, archaeology, hieroglyph, ideogram, wisdom ideograms, craftsign, letter-like sign.







հայկական Ա տառանմանի միջին տեսքը, ձևա-ճճական տարբերակներ, անդամային շարք



ամիստական (հայրակ-արաշախան) h, S, k տառանմանների ձևա-ճճական տարբերակների




Լույս նշանի շախային S տարբերակ՝ որևէ առարկայի (ծախ) կամ երևույթի զարգացում»



Մուշակի զանգարան



Աղ. 5 Տառանման նշանների տարբերակներ  
Աղ. 6 Ակոսանշաններ



Աղ. 7 Խեթա-լուվիական գրանշանների բառային իմաստը,  
Ք.ա. XIV-VII դդ.


Աղ. 8 Միջնադարյան ձեռագրերի գաղափարագրեր

**ԱՐԵԳ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

*Երևանի պետական համալսարան, ասպիրանտ*

vardanyanareg1@yahoo.com

ID 0009-0002-8862-8590

DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-27

**ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻՆ ԵՎ ԵՐԿՈՒ  
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ XI Դ. ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԵԶ\***

**Բանալի բառեր՝** Արիստակես Լաստիվերցի, Սամուել Անեցի, Հովհաննես Կոզեռն, Անիի անկում, Հայաստանը XI դարում, Ռուբինյաններ:

**Ներածություն**

Հայոց պատմության առանցքային իրադարձություններից են 1045 թ. Անիի շուրջ ծավալված ռազմաքաղաքական իրողությունները: Դրանք մանրամասն նկարագրվել են Արիստակես Լաստիվերցու պատմական երկում: Հետագայում պատմագիտությունը հիմնականում հիմք է ընդունել Լաստիվերցու նկարագրությունները<sup>1</sup>:

---

\* Ներկայացվել է 07.1.2024 թ., գրախոսվել է 10.1.2024 թ., ընդունվել է պրպագրության 07.VI.2024 թ.:

<sup>1</sup> **Օրմանեան.** 2001, 1430-1438: **Լեո.** 1967, 651, 672-681 և այլն: **Մանանդյան.** 1977, 24-30: Հայ ժողովրդի պատմություն. 1976, 149-154 և այլն: Բացառություն են կազմում **Հ. Բարթիկյանը** և **Կ. Մաթևոսյանը**: Թեպետ երկու հետազոտողներն էլ ներկայացնում են տարբեր մեկնաբանություն, նրանք հեռու են Լաստիվերցու շարադրանքի կրկնությունից, տե՛ս

Այդուհանդերձ, միջնադարում եղել է այս իրողության պատմագրական ներկայացման մեկ այլ ավանդույթ ևս և, ինչն առավել ակնառու է, այն շատ առումներով հակադիր է եղել Արիստակես Լաստիվերցու ներկայացմանը: Ցավոք, այս ավանդույթից մեզ են հասել սուկ կցկտուր տեղեկություններ, սակայն Լաստիվերցու պատումի հետ դրանց համադրումն ի հայտ է բերում էական տարբերություններ: Դրանք ավելի հստակ ցույց տալու համար նախ ներկայացնենք քննության առարկա աղբյուրների տեղեկությունները և ապա անցնենք դրանց համեմատությանը:

### **Սամուել Անեցու տեղեկությունները**

Ըստ Սամուել Անեցու<sup>2</sup>, Հովհաննես-Սմբատի մահվանից հետո «միաբանեալ ազատագունդ զաւրացն եւ իշխանացն, յաւէտ եւս պատրիարզին տեառն Պետրոսի»<sup>3</sup> Գագիկ Բ-ին (1042-1045) կարգեցին Հայոց թագավոր: Սակայն նա «ո՛չ պատերազմական արութեանց ջանայր, որով վարի իշխանութիւնն, մանաւանդ զի առ այնու ժա-

---

**Բարթիկյան.** 1988, 77-84: Հայոց պատմություն. 2014, 158-160:

**Մաթևոսյան.** 2015, 36-83:

<sup>2</sup> Հարկ է նշել, որ Սամուել Անեցու տեսակետների անհամապատասխանությունը Լաստիվերցու տեսակետների հետ նկատել է Անեցու երկի քննական բնագրի աշխատասիրող Կ. Մաթևոսյանը, տե՛ս **Սամուել Անեցի եւ շարունակողներ.** 2014, 394:

<sup>3</sup> **Սամուել Անեցի եւ շարունակողներ.** 2014, 186:

մանական աւելի իմն զդէպ էր քաջանալ»<sup>4</sup>, քանզի հաճախացել էին սելջուկյան հարձակումները, ընդ որում՝ նաև Բյուզանդիայի դէմ. «Բայց սա զի ի մանկութենէ ընդ դպրութեան գրոց վարժեալ էր, ի նոսին զբաւենոյր ու ի տերութեան աւուրս, զոր իմացեալ ազգին Յունաց, առ իւրեանս կոչեցին խաբկանաւք»<sup>5</sup>:

Ըստ Սամուէլ Անեցու ստացվում է, որ Գագիկ Բ-ի շուրջը եղել է իշխանների և կաթողիկոսի միություն, սակայն նա, լինելով անարի գործիչ և անտեղի գրասիրությամբ տարված մեկը, զոհ է գնացել բյուզանդական խարդավանքին: Անեցին ավելացնում է, որ այս ամենը տեղի է ունեցել «ի սադրելոյ իշխանացն, որք երդմամբ հաստատեցին պահել զիշխանութիւն նորա աննենգ ի վերայ իւրեանց»<sup>6</sup>, որոնք այս ամենից հետո անհանգստություններ հրահրեցին և ջանում էին «մատնել զմիմեանս կայսեր»<sup>7</sup>, ապա պատրաստվում էին անգամ «զձեռն տալն առ Հագարացիսն որք եւ իշխանացն, անգամ զհայրապետն»<sup>8</sup>, այսինքն՝ Պետրոս Գետադարձին: Ստացվում է, որ Գագիկի մեկնելուց հետո խռովություններ են եղել, որի հետևանքով Պետրոս Գետադարձի անվտանգությունը դրվել է հարցականի տակ:

---

<sup>4</sup> Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 186:

<sup>5</sup> Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 186:

<sup>6</sup> Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 186:

<sup>7</sup> Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 186:

<sup>8</sup> Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 186:

## **Արիստակես Լաստիվերցու տեղեկությունները**

Լաստիվերցու համաձայն, Հովհաննես-Սմբատի մահվանից հետո Վեստ Սարգիսը նպատակ է դնում թագավոր դառնալ, սակայն Վահրամ Պաղպաղունին իր ազգականների և ազատների հետ «ոչ միաբանեցան ընդ նմա. այլ կոչեալ առ ինքեանս զԳագիկ որդի Աշոտոյ, թագաւորեցուցին ի վերայ իւրեանց, եւ իմաստութեամբ եւ հնարիք մուծին ի քաղաքն»<sup>9</sup>: Իր ծրագրի խափանումից հետո Վեստ Սարգիսը «զգանձս թագաւորութեանն առեալ ի ներքին ամուրն մտանէ՝ յանառն Անի: Այլ Գագիկ այրական քաջասրտութեամբ միայն իջեալ առ նա եւ ողորքական բանիք հաւանեցուցանէ զնա»<sup>10</sup>: Սակայն Սարգիսը շարունակում է դիմադրել և փախչում է Սուրմառի:

Ի վերջո, Գագիկը ձերբակալում է Սարգսին, բայց խնայում է նրա կյանքը: Այստեղ Լաստիվերցին կատարում է հետաքրքիր հավելում, որը ցույց է տալիս նրա վերաբերմունքը դեպի Վեստ Սարգիսը. «Եւ զոր պարտ էր զապստամբն բառնալ ի կենաց, նա զՍաւուղայն խորհեցաւ, զերկրորդ Ագագ խնայեալ... վասն որոյ զՍաւուղայն ընկալաւ զհատուցումն, կեանք, որ քան զմահ դառնագոյն էին»<sup>11</sup>:

---

<sup>9</sup> Արիստակես Լաստիվերցի. 2012, 557:

<sup>10</sup> Արիստակես Լաստիվերցի. 2012, 558:

<sup>11</sup> Արիստակես Լաստիվերցի. 2012, 558:

Պատմիչի այս խոսքը Հին Կտակարանի իրադարձություններին է վերաբերում: Տերը Սավուղից պահանջում է բնաջնջել Ամաղեկը, սակայն Սավուղը խղճում է նրանց արքա Ագագին: Չհպատակվելով տերունական հրամանին՝ Սավուղը զրկվում է նրա հովանավորությունից: Տիրոջ հովանավորությունն անցնում է Դավթին և վերջինիս թագավոր դառնալու ճանապարհի հարթում: Դավթի հզորացումը Սավուղին պատճառում է հոգեկան տվայտանքներ<sup>12</sup>: Իր կյանքի հետագա տարիները թագից զրկված և մտատանջության մեջ ապրող Գագիկին Սավուղի հետ համեմատելով՝ Լաստիվերցին խոր հակերանք է ցուցաբերում Վեստ Սարգսի հանդեպ, վերջինիս համեմատելով Հին Կտակարանից հայտնի բացասական անհատի հետ:

Շարունակելով իր շարադրանքը՝ Լաստիվերցին անցնում է Անիի անկման հանգամանքներին, շեշտելով, որ դա, ոչ թե պատերազմի պատճառ էր, այլ «պատիր բանի»<sup>13</sup>: Գագիկը չի լսում Վահրամ Պահլավունու հորդորը և տրվելով Վեստ Սարգսի խարդավանքին՝ քաղաքի բանալիները հանձնում է Պետրոս Գետադարձին: Այսպիսով՝ Գագիկն ընկնում է կայսեր հյուսած ծուղակը: Այն շատ պարզ էր. Գագիկից ընդամենը պահանջվում էր ներկայանալ կայսերը, նրանից հաստատում ստանալ և վերադառնալ հայրենիք՝ իշխելու իր թագավորություն:

---

<sup>12</sup> Ա Թագ. 15, 16:

<sup>13</sup> Արիստակես Լաստիվերցի. 2012, 561:

նում: Այն, որ կայսրը Գագիկից այլ բան չի պահանջելու, հաստատվում էր «երդմամբ եւ խաչի»<sup>14</sup>:

Լաստիվերցին չգիտի, թե ինչու է Գագիկն ընկնում այս ծուղակը. «Հաւատաց վասն երդմանցն եւ խաչին, եթէ վասն խակութեան մտացն, եթէ վասն երկիւղածութեան բարուցն, ո՛չ գիտեմ»<sup>15</sup>, - տարակուսելով գրում է նա: Այսպիսով՝ Գագիկը դառնում է արքունի պատանդ, որին Բյուզանդիայի տարածքում առաջարկում են կալվածքներ և ամուսնացնում Սենեքերիմ Արծրունու թոռնուհու հետ<sup>16</sup>: Ինչ վերաբերում է Անիին, ապա քաղաքացիները մտադրվում են հարակից տիրակալներից որևէ մեկին հրավիրել՝ տիրելու Բագրատունյաց հոչակավոր մայրաքաղաքին: Նրանք էին՝ Դավիթ Անհողինը, Դվինի ամիրան ու Ափխազաց և Վրաց թագավոր Բագրատ Դ-ն<sup>17</sup>: Պետրոս Գետադարձն այս մտադրության մասին իմանալով, Սամուսատի բյուզանդական կառավարչին գրում է. «Ծանո՛ թագաւորին, թէ մեզ զի՛նչ հատուցանէ փոխարենս եւ ես տաց զքաղաքս եւ զայլ ամուրս, որ յաշխարհիս են»<sup>18</sup>: Կայսրը «գանձիւք եւ իշխանութեամբ»<sup>19</sup> առատորեն հատուցում է Գետադարձին, և Անին իր

---

<sup>14</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 561:

<sup>15</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 561:

<sup>16</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 561-562:

<sup>17</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 561-562:

<sup>18</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 562:

<sup>19</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 562:



շրջակայքով անցնում է Բյուզանդիային<sup>20</sup>:

Ակներև է, որ այս երկու պատումներում գործող անձինք և իրադարձությունները նույնն են, իսկ որակումները՝ տարբեր: Անեցու մոտ Գագիկ Բ-ը թուլամորթ է և իշխելու անարժան, իսկ Լաստիվերցին նրան արի և քաջ է կոչում: Ավելին, նա անգամ վարանում է Գագիկի Բյուզանդիա մեկնելու որոշումը վստահորեն վախկոտություն որակել: Անեցու շարադրանքում Պետրոս Գետադարձն է իշխանների հետ թագադրել Գագիկ Բ-ին, մինչդեռ Լաստիվերցու հանաձայն՝ նախաձեռնությունը Վասակ Պախլավունունն է: Ի դեպ, Վասակ Պախլավունին ընդհանրապես բացակայում է Անեցու մոտ, սակայն վերջինս խոսում է Վեստ Սարգսից, ում հատկացնում է կարճառոտ, սակայն փառաբանական տողեր՝ նրան ներկայացնելով իբրև նշանավոր բարերարի<sup>21</sup>: Ինչ վերաբերում է Լաստիվերցուն, ապա Սարգսի նկատմամբ նրա վերաբերմունքը, ինչպես տեսանք, ծայրաստիճան բացասական է:

### **Կողեռնի «տեսիլը»**

Անեցու պատմությունը Լաստիվերցուն հակասող միակ հայկական աղբյուրը չէ: Մեզ է հասել միջնադարյան մի բնագիր, որը ձեռագրերում ավանդված է Լաստիվերցու հայտնի ժամանակակից, վարդապետ Հով-

<sup>20</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2012, 562:

<sup>21</sup> Սամուէլ Անեցի եւ շարունակողներ. 2014, 183-184:

հաննես Կոզեռնի անվամբ: Այս բնագիրն ունի մի քանի տարբերակ: Մենք կանդրադառնանք, այսպես կոչված, «բյուզանդամետ» տարբերակին: Արդեն վաղուց է նկատվել, որ այս տարբերակը որոշ առումներով տարբերվում է նույն Կոզեռնին վերագրվող «տեսիլի» մեկ այլ տարբերակից, որը հայտնի է Ուռհայեցու երկի էջերից<sup>22</sup>: Լ. Խաչիկյանը ցույց է տվել, որ, ամենայն հավանականությամբ, Կոզեռնն այս վախճանաբանական բնագրի հետ կապվել է իբրև աստղագիտական գիտելիքների տեր վարդապետ<sup>23</sup>: Բնագրի՝ մեզ հետաքրքրող հատվածում նկարագրվում է, թե ինչպես է տեղի ունեցել Պետրոս Գետադարձի հայտնի «հրաշագործությունը»: Վասիլ Բ կայսեր (976-1025) և Գետադարձի հանդիպման շրջանակներում եկեղացապետն օրհնում է գետի ջուրը, ինչին հետևում է «հուր» և «փայլակ» հիշեցնող նշան: Բյուզանդացի հոգևորականներն ի պատասխան աղավնի են բաց թողնում: Սակայն աղավնին դառնում է արծվի զոհը: Գետադարձի «հրաշագործությունն» այնքան է ազդում Վասիլ Բ-ի վրա, որ նա, գնալով Սև լեռան հայոց վանքերից մեկը, գալիս է հայոց հավատին և դառնում հայ ազգի «հայրը»<sup>24</sup>:

Արիստակես Լաստիվերցու պատմության մեջ էլ անդ-

---

<sup>22</sup> Հովհաննիսյան. 1957, 40-48: Мapp. 1895, 9-34. Խաչիկյան. 2012, 165-200: Andrews. 2017, 30-37.

<sup>23</sup> Խաչիկյան. 2012, 172-173:

<sup>24</sup> Խաչիկյան. 2012, 172-173:

րադարձ կա այս դրվագին, սակայն նորից՝ այլ լույսի ներքո: Ինչպես և Կոզեռնի «տեսիլում», այստեղ ևս Պետրոս Գետադարձը և Վասիլ Բ-ը հանդիպում են, և տեղի է ունենում «հրաշագործությունը». «... լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեաց ի ջուրցն»<sup>25</sup>: Սակայն սրանից հետո Լաստիվերցին ավելացնում է մի աներկբա արտահայտություն. «Եւ բարձրացաւ եղջիր հաւատոյս մերոյ: Եւ եւս առաւել պատուով մեծարեալ ի թագաւորէն եւ ի սպահիցն՝ հայրապետն Պետրոս դառնայ ի տուն իւր: Բայց անդ եղեւ Հայոց կորստեան գիր եւ նամակ, քանզի Յովհաննէս պատուէր տուեալ էր հայրապետին»<sup>26</sup> իր մահվանից հետո իր երկիրը հանձնել Բյուզանդիային:

Այսպիսով, չնայած Լաստիվերցին Կոզեռնի «տեսիլի» հեղինակի հետ համամիտ է առ այն, որ Գետադարձի և Վասիլ Բ-ի հանդիպումը հավատի տեսանկյունից դրական էր, դրա քաղաքական հետևանքների առումով նրանց ընկալումները տրամագծորեն տարբեր են: Եթե «տեսիլի» հեղինակը «հրաշագործությունից» հետո հայության քաղաքական խնդիրների լուծումը բացատրում է Վասիլի Բ-ի՝ հայ ազգի «հայր» դառնալով, ապա Լաստիվերցին արձանագրում է հայոց քաղաքական անկման սկիզբը: Այս երկու արտահայտությունների գաղափարական ներհակությունն ավելի ակնբախ է, եթե նկա-

---

<sup>25</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2014, 535:

<sup>26</sup> Արիստակէս Լաստիվերցի. 2014, 535:

տի առնենք հետևյալ նշանակալից հանգամանքը. Վասիլ Բ-ը հայ մատենագրության մեջ ընկալվում էր իբրև հզոր քրիստոնյա արքա, որը հաջողությամբ իր երկիրը պաշտպանում էր մուսուլմանների հարձակումներից և պետք եղած դեպքում նվաճում նրանց տարածքները<sup>27</sup>: Այսպիսով՝ նրա հայոց «հայր» դառնալը կարելի է իբրև հայերի՝ Բյուզանդական կայսրության քաղաքական տիրապետության դաշտ մտնել մեկնաբանել: Տարօրինակ այս տեսակետի պաշտպան հեղինակի համար մի սկզբունքային պայման կա, որի դեպքում այս խաղաղ նվաճումն իրավական է. սեփական թագավորությունից զրկված հայերը պետք է պահեն իրենց կրոնական նկարագիրը: Եթե Վասիլը թեկուզև գաղտնի ընդունում է հայոց դավանանքը, ապա հայերը «հանգիստ խղճով» կարող են հրաժարվել քաղաքական անկախությունից: Այսպիսով՝ «տեսիլի» հեղինակը, Վասիլին դարձնելով հայադավան, իրավական հիմք է փորձում հաղորդել Բյուզանդական նվաճմանը: Ահա, այս մոտեցմանն է ընդդիմանում Լաստիվերցին՝ արձանագրելով, որ Վասիլ Բ-ի և Պետրոս Գետադարձի հանդիպումը թեպետ հավատի

---

<sup>27</sup>Մահեի առաջարկած տեսակետը, ըստ որի պայմանական «բյուզանդասիրությունը» հատուկ էր Վասպուրականի կամ «Հարավային Հայաստանի» տիրակալներին և խորթ Շիրակի Բագրատունիներին (**Mahé**. 1991, 562-564, 571-572), համոզիչ չէ, եթե հաշվի առնենք Լաստիվերցու դրական վերաբերմունքը Վասիլ Բ-ի նկատմամբ (Լաստիվերցու կողմից Վասիլ կայսեր նկատմամբ դրական վերաբերմունքի մասին մանրամասն տե՛ս **Հովհաննիսյան**. 1957, 43-44):

խնդիրների տեսնակյունից հաղթանակ էր, սակայն պետականության տեսնակյունից՝ պարտություն:

Վերլուծության համակողմանիության համար պետք է նաև պարզել, թե որտեղից կարող էր գալ Լաստիվերցուն հակադիր այս տեսակետը: Եթե անգամ ընդունենք Լևոն Խաչիկյանի վարկածը<sup>28</sup>, որ Կոզեռնի «տեսիլը» գալիս է Լաստիվերցու ժամանակակից Հակոբ Սանահնեցու կորուսյալ երկից, նույնը չենք կարող ասել Անեցու դեպքում, քանզի նա գործել է XII դ. երկրորդ կեսին և իր երկը գրել Գրիգոր Գ Պահլավունու պատվերով<sup>29</sup>: Այսպիսով, հարց է ծագում, թե Անեցին որտեղի՞ց կարող էր քաղած լինել իր տեղեկությունները, և ինչո՞ւ են դրանք այդքան տարբերվում Լաստիվերցու պատմածից: Եթե համարենք, որ Անեցու օգտագործած պատմական երկի հեղինակը մեզ հայտնի պատմիչ է, ապա, Հակոբ Սանահնեցուց բացի, կա ևս երկու կորուսյալ պատմություն՝ Հովհաննես Կոզեռնի<sup>30</sup> և Հովհաննես Սարկավազի հեղինակությամբ<sup>31</sup>: Այս երեք հեղինակներից խնդրո առարկա իրադարձություններին ականատես կարող էին

---

<sup>28</sup> **Խաչիկյան**. 2012, 165-200:

<sup>29</sup> **Սամուել Անեցի եւ շարունակողներ**. 2014, 3, 10-11:

<sup>30</sup> Երկից հասել է մի պատահիկ, որ հրատարակվել է Մատենագիրք Հայոց շարքի շրջանակներում (հ. ԺԶ., էջ 70-78):

<sup>31</sup> Անեցու պատմությունից իմանում ենք նաև, որ նա օգտվել է միայն այս՝ ներկայումս կորուսյալ պատմական երկից, սակայն այն վերաբերել է սելջուկների նախապատմությանը և Մելիք շահի շրջանին, տե՛ս **Մաթեոսյան**. 2005, 122-131:

լինել միայն Հակոբ Սանահնեցին և Հովհաննես Կոզեռնը: Սակայն Սանահնեցին քիչ հայտնի հեղինակ է, ինչը չի կարելի ասել Կոզեռնի մասին: Նույն Սամուել Անեցու կրտսեր ժամանակակից Մխիթար Անեցին իր աղբյուրների շարքում նշում է Կոզեռնին<sup>32</sup>: Հաշվի առնելով այն, որ Կոզեռնը հանդես է գալիս նաև «տեսիլ»-ում ու Սանահնեցու դրվագում, կարող ենք ենթադրել, որ Լաստիվերցու հակադիր տեսակետը պատկանում է Կոզեռնին կամ նրա շրջանակին: Ակնհայտ է, որ քաղաքական առումով այս շրջանակը սպասարկում էր Պետրոս Գետադարձի բյուզանդամետ քաղաքական գիծը:

### **Եզրակացություններ**

Նախընթաց շարադրանքում փորձեցինք մատնացույց անել մի կողմից Լաստիվերցու, մյուս կողմից՝ Անեցու և Կոզեռնի «տեսիլ»-ի հեղինակի խորքային տարակարծությունը 1045 թ. Անիի շուրջ ծավալված իրադարձությունների կապակցությամբ: Այսպիսով՝ ի հայտ է գալիս Լաստիվերցու երկի կերտման գաղափարական հետնախորքերից մեկը: Լաստիվերցին ջանում է իր պատմության մեջ հերքել Անիի անկման՝ Պետրոս Գետադարձի և նրան հարող «բյուզանդամետ» խմբակի կողմից զարգացված տեսակետը: Նույն իրողությունների համար ներկայացնելով հավելյալ մանրամասներ՝ նա ձգտում է

---

<sup>32</sup> Մխիթար Անեցի. 1983, 73:

ներկայացնել մի պատում, ըստ որի Գագիկ Բ-ն թուլամորթ չէր, Պետրոս Գետադարձը բնավ պետականամետ գործիչ չէր, իսկ Վեստ Սարգիսը ոչ թե փառավոր մեկենաս էր, ինչպես գրում է Անեցին, այլ Բագրատունյաց անկմանը խորապես նպաստած գործիչ: Ավելացնենք, որ Լաստիվերցու «Պատմության» մեջ արտահայտված քաղաքական մտայնությունը որոշակի հասարակական շերտի մտածողություն էր:

Վերջում նշենք, որ գաղափարական այս հակամարտի խորքային բնույթի առհավատյան է տարիներ անց հեռավոր Կիլիկիայում դրա ծավալումը: Մասնավորապես, հայ ազնվականության գաղթից հետո՝ XII դ. 20-30-ական թվականներին, երբ Կիլիկիայում տեղի ունեցավ հայկական իշխանությունների որոշակի կայունացում, նկատելի դարձավ Ռուբինյանների և լամբրոնացի իշխանների միջև քաղաքական մտածողության ցցուն մի տարբերություն: Առաջինները վարում էին Բյուզանդիայից առանձնանալու քաղաքական գիծ, մինչդեռ երկրորդները հավատարմորեն ծառայում էին Բյուզանդիային: Ավելին, Հովհան Բ Կոմնենոսի (1118-1143) դեպի Կիլիկիա արշավանքի ժամանակ նրանք նեցուկ էին Բյուզանդիային՝ ընդդեմ Ռուբինյանների: Այս փաստը նկատի առնելով է, որ մեր առջև բացվում է Կիլիկյան միջավայրի մի նոր տեսարան: Փաստորեն, այստեղ է «գաղ-

թել» ոչ միայն XI դ. հայ հասարակական կառույցը<sup>33</sup>, այլև նրա քաղաքական գաղափարախոսությունը՝ իր ներքին հակամարտով, որ գալիս է դեռ առնվազն XI դ. կեսերից: Այս լույսի տակ կարելի է ենթադրել, որ Գագիկ Բ-ին սպանած Մանդակի եղբայրներից վրեժի լուծումը Ռուբինյանները հանրայնացրել են ոչ միայն ելնելով Բագրատունյաց ժառանգ դիտվելու դրդապատճառից<sup>34</sup>, այլև ի սկզբանե էլ եղել են թագավորության անկմանը դեմ գործիչներից, ինչպիսիք էին Վասակ Պահլավունին և նրա համակիրները:

### **Գրականություն**

**Արիստակէս Լաստիվերցի** 2012, Պատմութիւն, աշխ. Գ. Մանուկեանի, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ., Երևան, էջ 523-633:

**Բարթիկյան Հ.** 1988, Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 1, Երևան, էջ 77-84:

**Լեո** 1967, Երկեր, հ. 2, Երևան, 786 էջ:

**Խաչիկյան Լ.** 2012, Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, «Աշխատություններ», հ. Ա, Երևան, էջ 165-200:

Հայ ժողովրդի պատմություն 1976, հ. III, Երևան, 1023 էջ:

Հայոց պատմություն 2014, հ. II, գիրք II, Երևան, 800+24 էջ:

**Հովհաննիսյան Ա.** 1957, Դրվագներ հայ ազատագրական

---

<sup>33</sup> Mutafian. 2012, 53. Մալխասյան. 2020, 43:

<sup>34</sup> Հմմ. Տեր-Պետրոսյան 2007, 202 (տողատակ 63):



մտքի պատմության, գր. Ա, Երևան, 524 էջ:

**Մաթեոսյան Կ.** 2005, Հովհաննես Սարկավազի պատմական թղթերն ըստ Սամվել Անեցու, «Հայոց պատմության հարցեր», № 6, էջ 122-131:

**Մաթեոսյան Կ.** 2015, Անիի ազնվականության պատմությունից կամ երեք Գրիգոր Մագիստրոս, Երևան, 144 էջ:

**Մալխասյան Մ.** 2020, Հայոց պատմություն–2. Դասախոսություններ, Երևան, 51 էջ (ծեռագրի իրավունքով):

**Մանանդյան Հ.** 1977, Երկեր, հ. Գ, Երևան, 504 էջ:

**Մխիթար Անեցի** 1983, Մատենան աշխարհավէպ հանդիսարանաց, աշխ. Հ. Մարգարյանի, Երևան, 140 էջ:

**Սամուէլ Անեցի եւ շարունակողներ** 2014, Ժամանակագրութիւն, աշխ. Կ. Մաթեոսյանի, Երևան, էջ 502:

**Տեր-Պետրոսյան Լ.** 2007, Խաչակիրները և հայերը, հ. Բ, Երևան, 670 էջ:

**Օրմանեան Մ. արք.** 2001, Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1870 էջ:

**Март Н. Я.** 1895, Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, «Восточные заметки», Санкт-Петербург, с. 9-34.

**Andrews** 2017, *Matteos Urhayeci and His Chronicle: History as Apocalypse in a Crossroads of Cultures*, Leiden/Boston, 272 p.

**Mahé J-P** 1991, *Basile II et Byzance vus par Grigor Narekac'i*, “Travaux et Memoirs”, n. 11, pp. 555-574.

**Mutafian C.** 2012, *L'Arménie du Levant (XI-XIV siècles)*, t. I, Paris, p. 736.

**Арег А. Варданян, Ереванский государственный университет, аспирант, Аристакеc Ластиверци и два направления армянской историографии XI в.**

### **Резюме**

Традиционно армянская историография освещала события правления царя Гагика II (1041-1045) на основе информации Аристакеcа Ластиверци. Цель данной статьи – показать, что в середине XI века существовала и другая традиция освещения правления Гагика II, во многом отличающаяся от Ластиверци. В частности, сведения поздних авторов (Самуел Анеци, «Видение» Ованнеса Козерна) позволяют предположить наличие идейных разногласий между Ластиверци и представителями другой традиции. Если Ластиверци был представителем «патриотической» партии, то существовала также историческая традиция, связанная с так называемой «провизантийской» партией. Вероятно, источником этой традиции был утерянный исторический труд Ованнеса Козерна. Идеологическая борьба «патриотической» и «провизантийской» партии нашла свое отражение и в Киликии.

**Ключевые слова:** Аристакеc Ластиверци, Самуел Анеци, Ованнес Козерн, Падение Ани, Армения в XI веке, Рубениды.

**Areg A. Vardanyan, Yerevan State University, Ph.D student, Aristakes Lastivertsi and Two Trends in 11<sup>th</sup>-Century Armenian Historiography**

### **Summary**

For a long time, Armenian historiography has interpreted the rule

of Gagik II (1041-1045) through the lens of the *History* of Aristakes Lastivertsi. This article aims to show that in the 11<sup>th</sup> century, an alternative historiographical tradition emerged that significantly contrasted with Lastivertsi. We can trace its main tenets through a careful analysis of later sources at our disposal (Samuel Anetsi, *Apocalypse* of Hovhannes Kozern). In short, the two historiographical traditions interpreted the events of Bagratid decline in light of the partisan confrontation active at that time, with Lastivertsi leaning to the so-called “patriotic” party, while the other tradition being more sympathetic to the Byzantine perspective. Most probably, this other source was the now-lost *History* of Hovhannes Kozern. It is also worth noting that the ideological struggle between the “patriotic” and “pro-Byzantine” parties eventually “migrated” with the Armenian society into Cilicia.

**Key words:** Aristakes Lastivertsi, Samuel Anetsi, Hovhannes Kozern, Fall of Ani, Armenia in 11<sup>th</sup> century, the Rubenids.

**ՍԱԹԵՆԻԿ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

*Մեսրոպ Մաշտոցի անվան Մարտենադարանի կրտսեր  
գիտաշխատող*

satenikgrigoryan04@gmail.com

ID 0009-0006-7502-376X

DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-44

**ՄԱՆՎԵԼ ՎԱՐԴԱՊԵՏ ԿՅՈՒՄՈՒՇԽԱՆԵՑԻ.  
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ (1768-1801)\***

**Բանալի բառեր՝** Մանվել վարդապետ Կյումուշխանեցի, գործունեություն, մատենագիր, Մարզվան, ձեռագիր մատյաններ, Կ. Պոլիս:

**Ներածություն**

Անվանի հայ մատենագիր, բանասեր, եկեղեցական ու հասարակական գործիչ Մանվել (Ստեփանոս) վարդապետ Կյումուշխանեցին<sup>1</sup> (1768-1843) իր ժամանա-

---

\* Ներկայացվել է 20.1.2024 թ., գրախոսվել է 25.1.2024 թ., ընդունվել է տպագրության 07.VI.2024 թ.:

<sup>1</sup> Թեև, որոշ ուսումնասիրողներ անդրադարձել են Մանվել վարդապետ Կյումուշխանեցու անձին ու գործունեությանը, արվածն անբավարար համարելով նպատակահարմար ենք գտնում ևս մեկ անգամ անդրադառնալ նրան:

Among the theological seminaries, it is also worth mentioning the Theological Seminary of Kharberd. "Adult and married people" from different places gradually began to attend the educational center "for theological studies"<sup>42</sup> opened in 1859<sup>43</sup>. The activities of the seminary were greatly affected by the Hamidian pogroms, and then by the emigration to the USA. The seminary was reopened in Kharberd in 1900.

Among the schools organized by the Evangelicals in Constantinople, the Inchir Typi Armenian Evangelical School was of particular importance (1920)<sup>44</sup>. The language of instruction at the school was Armenian, although it operated under the pressure of the Kemalists. However, in 1923, along with other church schools, the activity of the school of Incir Typi was also banned<sup>45</sup>. The school was reopened in 1927 with 80 pupils<sup>46</sup>.

Girls were also given the opportunity to be educated, which was a significant shift from the previous belief that education for them was "...unnecessary and pointless"<sup>47</sup>. In fact, that there were no schools for girls before that "and very few women could hardly read"<sup>48</sup>. In 1856, evangelicals founded the first school for girls. The purpose of the school was "...to educate girls and

---

<sup>41</sup> **Էքմէքնեան**. 2016, 41:

<sup>42</sup> **Քասունի**. 1947, 99:

<sup>43</sup> **Քասունի**. 1947, 99:

<sup>44</sup> **Էքմէքնեան**. 2016, 21:

<sup>45</sup> **Էքմէքնեան**. 2016, 22:

<sup>46</sup> Հարիրամեակի Յուշամատենան Կետիկ-Փաշայի Հայ Աւետարանական եկեղեցւոյ. 1950, 41:

<sup>47</sup> **Չորմիսեան**. 1974, 435:

<sup>48</sup> Աւետագիր. 1946, № 3:

especially married ladies..."<sup>49</sup>. Similar schools for girls were opened in Ayntap, Constantinople, Kharberd, Marzvan and other places. Missionary Myra Pracht opened a seminary for girls in Ayntap. Later, the American College of Aleppo continued the work of the seminary<sup>50</sup>. In 1869, there were three schools for girls in which "most of the women could read"<sup>51</sup>. It should also be noted that at the end of the 19th century, the majority of teachers working in Armenian schools were women<sup>52</sup>. Boarding schools for girls were also established in Hachn, Marzvan, Sebastia and other places. Among the colleges, the "Girls' College"<sup>53</sup> operating in Marash during the leadership of the missionary Ellen Blake stood out. Students studied there not only from Marash but also from Adana, Aleppo, Zeytun and other places.

Along with the aforementioned educational institutions, the evangelicals opened schools for the deaf (Marzvan Deaf School) and the blind (Edesia)<sup>54</sup>. Sometimes they also provided financial support to existing structures. One of the issues of "Avetaber" stated that when looking for a school for the deaf in Turkey, they found only one "for Islamic boys", despite there were hundreds deaf and dumb people. With financial support, the School for the Deaf in Marzvan was opened in 1900. Initially, six Armenian girls and boys attended learning to "read the

---

<sup>49</sup> Քասունի. 1947, 99:

<sup>50</sup> Քասունի. 1947, 150:

<sup>51</sup> Աւետազիր. 1946, № 3:

<sup>52</sup> Tarihte Türkler ve Ermeniiler. 2014, 131.

<sup>53</sup> Կոչնակ. 1912, № 6:

<sup>54</sup> Յուշարձան. 1952, 474:

teacher's lips and write successfully as well as to solve simple educational questions"<sup>55</sup>.

The educational activities of the American missionaries had significant results: there were 23679 students in 437 elementary schools, 5190 in 54 secondary schools, 2451 in 11 colleges, 24 students in 4 theological colleges. A total of 1369 teachers worked in those schools, with the majority of students being Armenians<sup>56</sup>. After the Genocide, several evangelical schools operated in Constantinople, although the educational activity of the evangelicals took a different course: "...non-Turkish private schools were placed under state control, although Articles 40 and 41 of the Treaty of Lausanne recognized the right of minorities (non-Muslim minorities; the Turks meant only Armenians and Greeks<sup>57</sup>) to maintain their own schools".

### **Conclusion**

The Armenian Evangelical Community, as an ecclesiastical structure, was active in the field of education. In schools opened by missionaries and Armenian evangelists, students were taught not only religious subjects but also the Armenian language, Armenian history, medicine, mathematics and other subjects. Many preschools, colleges, schools and later higher education institutions were opened. In 1900, there were 370 preschools, 44 higher schools, 8 colleges, 5 theological schools within the Ottoman Empire. Graduates of these educational centers successfully continued their studies in prestigious domestic educational centers.

---

<sup>55</sup> Ավետարան. 1913, № 16:

<sup>56</sup> Tarihte Türkler ve Ermeniiler. 2014, 130:

<sup>57</sup> **Բառու՛**. 2010, 161:



Missionaries also opened educational institutions for girls, where they learned not only to read and write but also to specialize in various professions. With the opening of schools for the deaf and mute, dozens of children also had the opportunity to get an education. As a result of these activities, the entire educational system was revitalized, both in Western Armenia and in other large Armenian settlements in the Ottoman Empire.

### **BIBLOGRAPHY**

**Անտինյան Ս.** 2011, Սփյուռքի հայկական կազմակերպությունների, միությունների և հայ եկեղեցու դերը հայկական դպրոցների ստեղծման ու զարգացման գործում, «21-րդ դար» Նորավանք գիտակրթական հիմնադրամի հանդես, Երևան, № 5(39), էջ 46-67:

**Աշյան Վ. Ս.** 1995, Կրթությունը Կ.Պոլսում 18-րդ դ. վերջին և 19-րդ դարի առաջին կեսին, «Էջմիածին» հանդես, ԾԲ տարի, փետրվար-մարտ, էջմիածին, էջ 81-89:

**Բաում Վ.** 2010, Թուրքիան և նրա քրիստոնյա փոքրամասնությունները, Երևան, 220 էջ:

Բերայի Աետ. Եկեղեցին նուիրումը, Ավետաբեր, Կ. Պոլիս, 1907, № 44:

**Գասպարյան Ռ.** 2003, Կիլիկիահայրության կրթական վիճակը 19-րդ դ. վերջին - 30-րդ դ. սկզբին, «Հայոց պատմության հարցեր», Երևան, № 4, էջ 65-76:

**Դանիելյան Ռ.** 1989, Օսմանյան կայսրությունում բողոքական միսիոներների գործունեության պատմությունից (XIX դ. վերջ XX դ. սկիզբ), «Արևելագիտական ժողովածու», Երևան, հ. XV, էջ 138-157:

**Դևիս Լ.** 2001, Սպանդի նահանգը: Ամերիկյան դիվանագետի զեկուցագիրը հայկական ցեղասպանության մասին, 1915-1917 թթ. (թարգմանությունը՝ Գրիգոր Զանիկյանի), Երևան, 368 էջ:

**Էքմէքճեան Վ.** 2016, Արմատներու Մրմունջը, ԱՄՆ, 91 էջ:  
Ինչպե՞ս կորուստէ փրկել մեր գանձերը, Աւետագիր, Նիւ Եորք, 1945, № 9:

**Հ. Ստեփան Խ. Իլթիւճեան** 1914, Ծագումն եւ ընթացք Աւետարանականութեան ի հայս, Կ.Պոլիս, 302 էջ:

Հայ Աւետարանական եկեղեցին 1845-1986 (պատմական ակնարկ) 1986, Պէյրութ, 78 էջ:

Հարիւրանեակի Յուշամատեան Կետիկ-Փաշայի Հայ. Աւետարանական եկեղեցոյ 1950, Պոլիս, 126 էջ:

**Հայկ Վ.** 1959, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը, Նյու Յորք, 1500 էջ:

Մարաշի հնութիւնները, Կոչնակ, Նիւ Եորք, 1912, № 6:

Մարզումի խուլերու Քինկ սքուլ վարժարանը, Ավետաբեր, Կ. Պոլիս, 1913, № 16:

**Մարտիրոսյան Հ.** 2016, Գերմանական միսիոներական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը (1896-1919թթ.), գիրք Ա. 224 էջ:

Մեր գոլէճները, Աւետաբեր, Կ. Պոլիս, 1913, № 19:

Մեր դպրոցները հարիւր տարի առաջ, Աւետագիր, Նիւ Եորք, 1946, № 3:

Յիշատակարան Եփրատ Քոլէճի 1878-1915. 1942, Պոսթոն, 491 էջ:

Յուշամատեան Հայաստանեայց Ավետարանական եկեղեցոյ 2021 (աշխատ., Վահան Յ. Թութիկեան), 208 էջ:

Յուշարձան Հայ Աւետարանականաց եւ Ավետարանական եկեղեցւոյ (գրեց Կ. Պ. Ատանալեան) 1952, Կալիֆորնիա, 527 էջ:

Ոսկեմատեան (երկասիրեց՝ Տիգրան Ճ. Խլորեան) 1950, հ. Ա, Պէյրուս, 479 էջ:

**Չորմիսեան Լ.** 1974, Համապատկեր Արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Ա, Պէյրուս, 612 էջ:

**Սեփմեան Յ.** 2020, Հայ ավետարանական շարժման սկզբնատրումը Օսմանեան Թուրքիոյ մէջ, «Լրաբեր հասարակական գիտությունների» Երևան, № 1, էջ 158-167:

**Քասունի Ե.** 1947, Լուսաշաւիղ, Պատմութիւն հայ աւետարանական շարժման 1846-1946, Պէյրուս, 603 էջ:

**Apper L.** 1946, A Century of Armenian protestantism 1846-1946, New York, 96 p..

**Arpee L.** 1946, A history of Armenia Christianity, New York, 386 p..

Fifty years in Constantinople and recollections of Robert College, by George Washburn. 1909, Boston and New York, 386 p..

**Greene R. J.** 1916, Leaving The Levant, New York, 221 p..

**Herrick R. George.** 1891, The Missionary Herald, Boston, 66 p..

Modern Turkey 1924, By Eliot Crinnell Mears, New York, 800 p..

Tarihte Türkler ve Ermeniler: Ermeni Nüfusu ve Kilisesi: Misyonerlik, Editör: Mehmet Metin Hülagü ve başk 2014, с. 8, ТТК Yayınları, Ankara, p. 128-144.

**Зимина Н.** 2009, Американские миссионеры в Османской империи (начало века), Известия Саратовского университета, История, Международные отношения, Саратов, т. 9, вып 2, с. 48-51.

<https://www.houshamadyan.org/arm/mapottomanempire/vilayetofmamuratulaziz-harput/harput-kaza/economy/trades.html>

**Աստղիկ Բ. Ղազարյան, ԳԱԱ պատմության ինստիտուտ,  
հայցորդ, Ամերիկյան միսիոներների կրթական գործու-  
նեությունը Օսմանյան կայսրությունում (XIX դարի երկրորդ  
կես - XX դարի սկիզբ)**

### **Ամփոփում**

XIX դ. առաջին կեսից սկսած ամերիկյան միսիոներների մուտքն Օսմանյան կայսրություն, բազում դժվարությունների հանդիպելով հանդերձ, հանգեցրեց հայ ավետարանական համայնքի ձևավորմանը: Ավետարանականների նկատմամբ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ճնշումները չխանգարեցին նրանց, որպես առանձին համայնքի ձևավորման գործընթացին: Հայ ավետարանականները հիմնեցին «Բարեպաշտության միություն» ընկերությունը, որի հիման վրա էլ 1846 թ. հուլիսի 1-ին Կ. Պոլսում ձևավորվեց Հայ ավետարանական եկեղեցին: Եկեղեցու հովիվները, հոգևոր քարոզչությանը զուգահեռ, տանում էին նաև կրթական աշխատանքներ: Նրանք լրջորեն էին վերաբերում կրթությանը՝ նպատակ ունենալով հայ երիտասարդներին դարձնել ուսյալ թարգմանիչներ, հրահանգիչներ, բողոքական քարչոզիչներ: Բացվում են մի շարք նախակրթարաններ, քոլեջներ, ապա՝ բարձրագույն հաստատություններ, որոնց առարկայացանկում կարևոր տեղ էր հատկացվում Հայոց լեզվին և Հայոց պատմությանը:

Օսմանյան կայսրության տարածքում 1914 թ. միայն ամերիկյան միսիոներների շնորհիվ գործել է 675 դպրոց՝ 34,317 աշակերտով, որից ավետարանական՝ 370 նախակրթարան,

44 բարձրագույն վարժարան, 8 քոլեջ, 5 աստվածաբանական դպրոց:

**Քանալի բաներ՝** Ավետարանական եկեղեցի, Միսիոներներ, Կ.Պոլիս, Օսմանյան կայսրություն, Մարաշ, քոլեջ, Քրիստոնեքեր Ռոբերտ, մշակույթ:

**Астхик Б. Газарян, *Институт истории НАН РА, соискатель, Образовательная деятельность американских миссионеров в Османской империи (вторая половина XIX – начало XX вв.)***

### Резюме

Начиная с первой половины XIX века, прибытие американских миссионеров в Османскую империю, несмотря на множество трудностей, привело к формированию армянской евангелистской общины. Армянские евангелисты основали общество «Союз благочестия», на основе которого в 1846 году был создан армянский патриархат Константинополя. 1 июля в Константинополе была образована Армянская евангелистская церковь. Они серьезно относились к образованию, стремясь превратить армянскую молодежь в образованных переводчиков, инструкторов, протестантских проповедников. Были открыты несколько начальных школ, колледжей и затем высших учебных заведений, в предметном списке которых важное место отводилось армянскому языку и истории Армении.

На территории Османской империи в 1914 году благодаря американским миссионерам действовало 675 школ с 34 317 учениками, из которых 370 были евангелическими начальными

школами, 44 – высшими учебными заведениями, 8 – колледжами, 5 – богословскими школами.

***Ключевые слова:*** Евангелическая церковь, миссионеры, Константинополь, Османская империя, Мараш, колледж, Кристофер Роберт, культура.

### ՍԻԼՎԱՐԹ Յ. ՄԱԼԽԱՍԵԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, հայցորդ, Իսթանպուլ

silvamalhasyan@yahoo.com

ID: 0000-0001-5152-8516

DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-87

### ՊՈԼՍՈՅ ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ (1918-1922)\*

**Բանալի բառեր՝** Կ. Պոլսոյ հայեր, Հայաստան, Մուտրոսի Ջինադադար, Կ. Պոլսոյ Հայ Կարմիր Խաչ, Հայոց Պատրիարքարան, Տօքթ. Վահրամ Թորգոմեան, Բժշկական Առաքելութիւն:

#### **Ներածութիւն**

Մուտրոսի Ջինադադարէ ետք Կ.Պոլիս հասան հայ այրիներու, որբերու եւ աքսորեալներու մեծաքանակ խումբեր, որոնք խեղճ վիճակ ունէին եւ տեղահանուած, տարագրուած ու հեռաւոր անապատեր քշուած ազգին ողջ մնացած բեկորներն էին: Համայնքին կարօտ անդամներուն թիւը օր ըստ օրէ զգալիօրէն բարձրացաւ քաղաքին մէջ: Պոլսոյ Պատրիարքութեան Վարչութիւնը այդ ընթացքին կազմալուծուած եւ անկերպարան վիճակ ունէր, հետեւաբար կարող չէր նիւթական օգնութիւն

---

\* Ներկայացվել է 06.1.2024 թ., գրախոսվել է 09.1.2024 թ., ընդունվել է տպագրության 07.VI.2024 թ.:

հասցնել բոլոր կարօտեալներուն: Համայնքը ստիպուած էր գլխուն ճարը նայելու: Նախ հիմնուեցան Հայ Տարագրելոցը եւ Հայ Որբախնամը<sup>1</sup>, յետոյ՝ օգնութեան միւս ընկերութիւններն ու միութիւնները<sup>2</sup>, միաժամանակ վերակազմուեցան նմանօրինակ հաստատութիւններ որոնք չէին գործեր 1916 թուին Հայոց Սահմանադրութեան ջնջման պատճառաւ<sup>3</sup>:

#### **Կ.Պոլսոյ Հայ Կարմիր Խաչի հիմնումը եւ ընդունման հարցը միջազգային Կարմիր Խաչի Կողմէ**

Պոլիս հաւաքուած վտարանդիներու եւ որբերու միջեւ հիւանդներու բարձր թիւը զգալի դարձուց Կարմիր Խաչի ոգիով հաստատութիւն մը կազմելու անհրաժեշտութիւնը: Այս ուղղութեամբ համայնքի մտաւորականները եւ մանաւանդ Բերա թաղի կանայք եւ աղջիկներ առաջին քայլերը նետեցին, յետագայ օրերուն եւս մեծ նպաստ բերելով ընկերութեան գործունէութեան<sup>4</sup>:

Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը իր 18 Նոյեմբեր 1918 թուակիր ընդհանուր Ժողովի նիստին Կեդրոնական Վար-

---

<sup>1</sup> Թէոդիկ. 1921, 299-308:

<sup>2</sup> Ժամանակ. 1918, № 3366:

<sup>3</sup> Օսմանեան պետութիւնը 17 Յուլիս 1916 թուականին ջնջած է 1863ի Ազգային Սահմանադրութիւնը, վերջ տալով նաեւ միութիւններու գործունէութեան: Այդ որոշումէն ետք գործադրուած է Կաթողիկոս Պատրիարքի Կանոնագրութիւնը: Այս վերջինը 19 Հոկտեմբեր 1918ին օրէնքով այլեւ ի զօրու չէր, ուստի վերահաստատուած է Ազգային Սահմանադրութիւնը:

<sup>4</sup> Արդարամարտ. 1918, № 3: Ժամանակ. 1918, № 3355:



չական Խորհուրդի ատենապետ ընտրեց Տքթ. Վահրամ Թորգոմեանը, իսկ երկրորդ ատենապետ դարձաւ Զարուհի Պահրի: Ընկերութիւնը պարզեց իր նպատակները, որոնք էին՝ Պոլսոյ եւ գաւառներու մէջ տարագիր ու որբ հայ հիւանդներ խնամել ու դարմանել, ընկեցիկներ դիեցնել, մայրանոցներու մէջ ծննդաբերութիւնները հովանաւորել, ապաստարաններու ու մանկանոցներու մէջ ազատագրուած հայ աղջիկներն ու տղաքը պատսպարել<sup>5</sup>: Ընկերութիւնը դարձաւ մէկը այն հաստատութիւններէն, որոնք 1919-1922 տարիներուն ամենէն բեղուն գործունէութիւնը ցոյց տուին եւ որուն մէջ մանաւանդ Հայ կիներ պատուաբեր կերպով ունեցան իրենց անուրանալի աւանդը: Այդ կիներէն մէկն էր յայտնի գրող Հայկանոյշ Մառքը որ Բերայի մասնաճիւղին մէջ նպաստ բերաւ իբր ատենադպրուհի, Զարուհի Պահրի տքնաջան աշխատեցաւ թէ՛ կեդրոնական վարչութեան մէջ՝ իբր ատենապետուհի եւ թէ Շիշլիի մասնաճիւղի հիւանդանոցին մէջ: Իսկ Մարի Ստամպուլեան որպէս տիպար գործունեայ, անունի տիրացաւ հաստատութեան աշխատանքներու ընթացքին<sup>6</sup>:

Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը շրջան մըն ալ ստանձնեց Կ. Պոլսոյ Ետիքուլէ թաղի Սուրբ Փրկիչ Ազգային Հիւան-

---

<sup>5</sup> Թէոդիկ. 1921, 299-300:

<sup>6</sup> Դարման. 1920, № 1-2:

դանոցի<sup>7</sup> մատակարարությունը, բայց կարճ ժամանակի մէջ վերջ գտաւ այդ դրութիւնը<sup>8</sup>:

Ընկերութիւնը պաշտօնապէս հաստատուելու համար կազմելէ յետոյ իր դիւանը եւ պատրաստած կանոնագիրը ներկայացուց Պոլսոյ Պատրիարքական Խառն Ժողովին<sup>9</sup>: 59 յօդուածէ բաղկացեալ կանոնագիրը 26 Նոյեմբեր 1918-ին վաւերացուելէ ետք, հրատարակուեցաւ նաեւ գրքոյկի ձեւով: Յանձնարարուեցաւ որ այս մարմինը աջակցութիւն բերէ նաեւ տարագրեալներու եւ որբերու հոգաձութեան համար կազմուած այլ միութիւններուն<sup>10</sup>:

Կարմիր Խաչի ընկերութիւնը Պոլսոյ Պատրիարքութեան կողմէ հաստատուելէ ետք դիմում կատարեց Կարմիր Խաչի Միջազգային Կազմակերպութեան՝ պաշտօնապէս ճանաչման համար, բայց մերժուեցաւ: Ըստ Միջազգային Կարմիր Խաչի կանոններու կարելի չէր պաշտօնապէս ճանչնալ Կարմիր Խաչ մը, որ ճանաչման չէր արժանացած զայն ստեղծող ժողովուրդի պետութեան կողմէ<sup>11</sup>: Միութիւնը պաշտօնապէս ճանաչում չունեցաւ թէեւ, բայց ի վերջոյ իր աշխատութիւններու շնորհիւ յաջողեցաւ հրաւեր ստանալ եւ խորհրդակցական ձայնով

---

<sup>7</sup> Սուրբ Փրկիչ Ազգային Հիանդանոցը հիմնուած է Գազազ Արթին Ամիրա Յարութին Պէգեանի կողմէ 1832 թուականին Սուլթան Մահմուտի օրով:

<sup>8</sup> Ժամանակ. 1920, № 3797: **Ղազարեան**. 2021, 644:

<sup>9</sup> Ժամանակ. 1918, № 3368:

<sup>10</sup> Ժամանակ. 1918, № 3375:

<sup>11</sup> Ժողովուրդի ձայն. 1919, № 59-139:

մասնակցիլ ժընեւի համալսարանին մէջ գումարուած Միջազգային Կարմիր Խաչի 10-րդ Խորհրդաժողովին: Հրաւիրեալի հանգամանքով որպէս ներկայացուցիչ դրկուեցաւ ժընեւաբնակ Տօքթ. Ղեւոնդ Աճէմեանը<sup>12</sup>:

Ընկերութեան Կեդրոնական Վարչութեան հիմնումէն ետք 1918-ի վերջին ամիսներէն սկսեալ մասնաճիւղեր բացուեցան Կ.Պոլսոյ զանազան թաղերու եւ գաւառի մէջ: Ըստ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութեան տեղեկատուութեան, Յուլիս 1919-ին, ներառեալ Փոքր Ասիոյ մասնաճիւղերը, ընդհանուր մասնաճիւղերու թիւը հասաւ 27-ի<sup>13</sup>: Թէ՛ Կեդրոնական Վարչութիւնը, թէ՛ մասնաճիւղերը տեղեկագիրներ<sup>14</sup> կը հրատարակէին իրենց գործունէութեանց մասին:

Ընկերութիւնը մեծ ընդունելութիւն գտաւ Պոլսահայ համայնքէն եւ օգնութիւններ՝ գրեթէ բոլոր խաւերէն: Այս մարմնին զօրավիզ հանդիսացան հայկական հաստատութիւններ, միութիւններ եւ անհատներ՝, մինչեւ վերջ ցոյց տալով իրենց բարոյական եւ նիւթական աջակցութիւնը: Հաստատութիւններու կարգին կարելի է յիշել Հայ Ատամնաբուժական Միութիւնը<sup>15</sup>, Հայ Դեղագործական

---

<sup>12</sup> Ժողովուրդի ձայն. 1921, № 787:

<sup>13</sup> Ժողովուրդի ձայն. 1919, № 144-235: Նոր կեանք. 1919, № 121, 247: Ժամանակ. 1919, № 3640:

<sup>14</sup> Առաւօտ. 1919, № 3: Դարման. 1920, № 6: Երկամեայ Տեղեկագիր Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութեան 1918-1920. 1921: Հայ Բուժակ. 1922, № 10:

<sup>15</sup> Ժողովուրդի ձայնը. 1919, № 299-208:

Միութիւնը եւ Հայ Բժշկական Միութիւնը<sup>16</sup>: Հայ մամուլը թէ՛ նիւթական օգնութեամբ<sup>17</sup> եւ թէ քաջալերական գրութիւններով նեցուկ կանգնեցաւ ընկերութեան<sup>18</sup>: Զօրակցեցան նաեւ Միջազգային Կարմիր Խաչը, օտար ազգերու կարմիր խաչեր<sup>19</sup>, արտասահմանի մէջ հաստատուած հայ կարմիր խաչեր, Համաձայնական Պետութիւններու Պոլսոյ ներկայացուցիչները, օտար ազգերու հիւանդանոցներ<sup>20</sup>, Կ. Պոլսոյ Հայ կաթոլիկ համայնքը<sup>21</sup>, տեղական եւ արտասահմանի օտար ընկերային օժանդակութեան հաստատութիւններ<sup>22</sup> եւլն: Համայնքէն մտաւորականներ, ականաւոր գործիչներ, բժիշկներ, դեղագործներ, իրենց ծառայութիւնը բերին թէ՛ կեդրոնական վարչութեան կողքին եւ թէ մասնաճիւղերու մէջ: Տեղին է յիշել, որ բաւական արգելքներ ալ եղած են ընկերութեան հաստատման ընթացքին, ինչպէս կը վկայէ Տօքթ. Վահրամ Թորգոմեան՝ իր յուշերուն մէջ: Ան կ'ըսէ. «Այս բոլորը իրականացած են ի հեճուկս Թուրք Կարմիր Մահիկի բժիշկներու ոտնձգութիւններուն, բողոքատու վարչութիւններուն եւ հակառակ Միջազգային Կարմիր

---

<sup>16</sup> Դարման. 1920, № 1-2:

<sup>17</sup> Նոր կեանք. 1918, № 71:

<sup>18</sup> Արիամարտ. 1918, № 14:

<sup>19</sup> Ժամանակ. 1918, № 3386:

<sup>20</sup> Ժամանակ. 1918, № 3390:

<sup>21</sup> Ժողովուրդի ձայնը. 1922, № 1229:

<sup>22</sup> Ժամանակ. 1918, № 3390:

Խաչի ներկայացուցիչ Գօնդ տը Լաբալիսի»<sup>23</sup>:

Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը ունեցաւ եկամուտի տարբեր աղբիւրներ. ընկերութեան անդամներու կողմէ վճարուած ամսականները, անձերու կամ հաստատութիւններու կողմէ եղած դրամական կամ գոյքի նուիրատուութիւնները<sup>24</sup>, ընկերութեան կողմէ տպագրուած օրացոյցերու վաճառումէն գոյացած հասոյթները<sup>25</sup>: Եկամուտի աղբիւրներ դարձան նաեւ պազարները<sup>26</sup>, գեղարուեստական զանազան երեկոյթներ<sup>27</sup>, ամենամեայ պարահանդէսներ<sup>28</sup>, թէյանուագահանդէսներ<sup>29</sup>, թատրոնի, սինէմայի<sup>30</sup> եւ օփերայի ներկայացումներ<sup>31</sup>, հանգանակութիւններ<sup>32</sup>, զօգարդի վաճառքներ եւլն<sup>33</sup>:

### **Պոլսոյ Հայ Կարմիր Խաչի Գործունէութիւնը**

Կարմիր Խաչը իր գործունէութիւն սկսաւ նախ անպաշտպան երախաներէն՝ ստանձնելով հինգ տարեկա-

---

<sup>23</sup> Վէմ. 1937, № 18:

<sup>24</sup> Ժողովուրդի ձայնը. 1919, № 144:

<sup>25</sup> Ժողովուրդի ձայնը. 1919, № 358: Ժողովուրդի ձայնը. 1920, № 655:

<sup>26</sup> Ժողովուրդի ձայնը. 1919, № 376: Ժողովուրդի ձայնը. 1920, № 675:

<sup>27</sup> Ժողովուրդի ձայնը. 1922, № 1172:

<sup>28</sup> Ժողովուրդի ձայնը. 1921, № 692: Ժողովուրդի ձայնը. 1922, № 990:

<sup>29</sup> Ժողովուրդի ձայնը. 1919, № 49-129:

<sup>30</sup> Ժողովուրդի ձայնը. 1919, № 332-241: Ժողովուրդի ձայնը. 1920, № 655:

Ժողովուրդի ձայնը. 1921, № 932:

<sup>31</sup> Ժողովուրդի ձայնը. 1921, № 875:

<sup>32</sup> Վերջին լուր. 1921, № 2164:

<sup>33</sup> Նոր կեանք. 1919, № 99:

նէն վար եւ տասնչորս տարեկանէն վեր որբերու պաշտպանութիւնը: Կոչ ուղղեց հայ տիկիներուն, որ 10-15 օրուան համար իրենց յարկերուն տակ հիւրընկալեն այն որբերը, որոնք դեռ չէին կրցած տեղաւորուիլ որեւէ որբանոցի մէջ<sup>34</sup>: Հաստատութեան ապաստանարաններու մէջ հովանի գտան նաեւ տարագրութենէ վերադարձող 18 տարեկան որբուհիներ<sup>35</sup>:

Մասնաճիւղերը առաջին հերթին բացին հիւանդանոցներ<sup>36</sup>, ապաքինարաններ<sup>37</sup>, մանկանոցներ եւ դեղարաններ<sup>38</sup>: Կեդրոնական վարչութիւնը հիւանդապահութեան դասընթացքներ հաստատեց՝ կանոնաւոր կերպով իրականացնելով ընդունելութեան քննութիւնները: Դասընթացքները շարունակուեցան մինչեւ 1922-ի գարուն<sup>39</sup> եւ Հայ Բժշկական Միութեան կողմէ նշանակուած բժիշկները ձրիաբար դասաւանդեցին այս յարկերուն տակ<sup>40</sup>: Ընկերութիւնը իր քով առաւ այն հիւանդապահուիները, որոնք մեծ փորձառութիւն ձեռք բերած էին Կարմիր Մահիկի մէջ աշխատելու ընթացքին: Հ.Կ. Խաչի Կեդրոնական վարչութեան նման մասնաճիւղերն ալ հրատարա-

---

<sup>34</sup> Նոր կեանք. 1918, № 53:

<sup>35</sup> Ժամանակ. 1918, № 3398:

<sup>36</sup> Առաւօտ. 1919, № 4:

<sup>37</sup> Վերջին լուր. 1921, № 2314:

<sup>38</sup> Ժողովուրդի ծայնը. 1920, № 565: Հայ Կին. 1919, № 3:

<sup>39</sup> Ճակատամարտ. 1920, № 638: Ժողովուրդի ծայնը. 1922, № 1009:

<sup>40</sup> Դարման. 1920, № 6: Նոր կեանք. 1919, № 127, 249:

կեցին իրենց առանձին տեղեկագրերը<sup>41</sup>:

### **Հայաստանի մէջ գործունէութիւն**

Պոլսոյ Հայ Կարմիր Խաչի Կեդրոնը Պոլսէն դուրս եւս գործունէութիւն ունեցաւ<sup>42</sup> եւ ամենակարեւոր գործունէութեան վայրը եղաւ Հայաստան: Ընկերութիւնը հիմնադրութեան առաջին օրերէն իսկ իր կարողութեան սահմաններուն մէջ օգնելու ջանք թափեց ի նպաստ Հայրենիքին եւ հայրենակիցներուն<sup>43</sup>: Բժշկական առաքելութիւն ուղարկեց 1922 տարւոյ Յունուար ամսուան մէջ: Առաքելութեան նպատակն էր՝ կազմակերպել առողջապահական սպասարկութիւն, հաստատել դարմանատուներ այն քաղաքներուն մէջ, ուր համաճարակ կար<sup>44</sup>: Առաքելութիւնը, արժանացաւ սիրալիր ընդունելութեան<sup>45</sup>, որ կը բաղկանար հինգ անդամներէ, որոնց միջեւ կը գտնուէին երեք բժիշկ, մէկ դեղագործ եւ մէկ հիւանդապահուիի: Իրենց հետ տարին 150 սնտուկ, որոնց պարունակութիւնն էր՝ դեղ, շարժուն հիւանդանոցի կազմաձեւեր, վիրաբուժական եւ ծննդաբերական գործիքներ, զանազան պատուաստներ, շիճուկներ, դեղարանի կազմաձեւեր, զգեստ, ճերմակեղէն, սննդեղէն, ելն: «Պոլսի Հ. Կ. Խաչի Բժշկ. Առաքելութեան Դարմանա-

<sup>41</sup> Դարման. 1922, № 8: Ժողովուրդի ձայնը. 1922, № 1184:

<sup>42</sup> Ժողովուրդի ձայնը. 1922, № 1206, 1230, 1259:

<sup>43</sup> Ճակատամարտ. 1920, № 589: Ժողովուրդի ձայնը. 1920, № 625:

<sup>44</sup> Ժողովուրդի ձայնը. 1921, № 964:

<sup>45</sup> Վերջին լուր. 1921, № 2354:

տուն» անուան տակ բացուեցաւ դարմանատուն մը ուր դարմանում տեսան զինուորականներ, պետական պաշտօնեաներ եւ պարզ ժողովուրդը<sup>46</sup>: Դեղարանի գործունէութիւնը այնպէս կազմակերպուեցաւ, որ իւրաքանչիւր հիւանդ քննութենէն տասը վայրկեան ետք կը ստանար իր դեղը: Պայման էր, որ հարուստները վճարովի գնէին զանոնք: Բացի դարմանատան ընթացիկ աշխատանքներէն, Առաքելութիւնը, Ամերիկեան Կոմիտէի խնդրանքով, ստանձնեց նաեւ նոյն Կոմիտէի Երեւանի Ս. Սարգիս եկեղեցւոյ բակը բացուած գաղթականական հիւանդանոցի բժշկական պարտականութիւնը: Այդ պարտականութիւնը շարունակուեցաւ մինչեւ Ապրիլ 1922՝ իր մեկնումի թուականը<sup>47</sup>:

Ըստ տեղեկագրի, Առաքելութիւնը չորսուկէս ամսուան ընթացքին իր դարմանատան մէջ բուժեց 10.160 հիւանդներ, որոնցմէ 3.017 զինուորականներ, իսկ մնացեալը քաղաքացիներ էին: Տնային պայմաններուն մէջ դարմանում տեսան 686 ծանր հիւանդներ, որով ընդհանուր գումարը հասաւ 10.846ի: Կատարուեցան 17 փոքր վիրաբուժական գործողութիւններ: Երեւանի եւ 9 գիւղերու զանազան հիւանդանոցներու, միութիւններու եւ ուրիշ մարմիններու կողմէ հովանաւորուած չքաւորներուն բաժնուեցաւ 6.200 տուփ խտացած կաթ, 1900 տուփ միսի պահածոյ, 27 սնտուկ կալէթա, 2.846 զոյգ գուլպայ,

---

<sup>46</sup>Ժողովուրդի ձայնը. 1922, № 1136:

<sup>47</sup>Ժողովուրդի ձայնը. 1922, № 1136:



1.130 ֆանէլա, 471 շապկընկեր, 146 շապիկ, 440 բարձ եւ բարձի երես, 351 խանձարուր եւլն<sup>48</sup>: «Հայ Բուժակ» հանդէսը, այս առաքելութեան մասին արտայայտուելով, կ'ըսէր թէ անոր գործունէութիւնը եղաւ իսկապէս առաքելական եւ բարեխնամական գործ եւ Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը իրաւունք ունէր պարծանքով արձանագրել իր գործունէութեան հասցէին եղած արտայայտութիւնները<sup>49</sup>:

Գէորգ Ե. Կաթողիկոսի դիւանապետին կողմէ Կ. Պոլսոյ Պատրիարքարան տեղեկութիւն տրուեցաւ, որ Առաքելութիւնը շրջած է ամբողջ Արարատեան դաշտը եւ իր գործունէութեամբ գոհունակութիւն պատճառած ժողովուրդին<sup>50</sup>: Եւ Կաթողիկոսը Հ.Կ.Խաչի Պոլսոյ Կեդրոնական վարչութեան շնորհեց կոնդակ, որուն մէջ իր գոհունակութեան առընթեր, մաղթանք կար Առաքելութիւնը շարունակելու մասին<sup>51</sup>: Առաքելութիւնը Կ. Պոլիս վերադարձին Կեդրոնական Վարչութեան ներկայացուց ընդարձակ տեղեկագիր մը, որ տեղեկատուութեան ձեւով հրատարակուեցաւ հայկական թերթերու մէջ<sup>52</sup>:

Կարմիր Խաչի Ընկերութիւնը, որ լայն ընդունելութիւն գտած էր Պոլսահայերու կողմէ, իր գործունէութիւնը յաջողապէս շարունակեց մինչեւ 1922 տարւոյ վերջին

---

<sup>48</sup> Ժողովուրդի ձայնը. 1922, № 1137:

<sup>49</sup> Հայ բուժակ. 1922, № 11:

<sup>50</sup> Երկիր. 1922, № 709:

<sup>51</sup> Ճակատամարտ 1922, № 1028:

<sup>52</sup> Ժողովուրդի ձայնը. 1922, № 1136: Վերջին լուր. 1921, № 2354:

ամիսները: Վերջին կեդրոնական ընդհանուր ժողովը գումարուեցաւ Սեպտեմբեր 1922ին<sup>53</sup>: Նոյն տարւոյ Դեկտեմբերին Պոլսոյ կեդրոնը դադրեցուց իր գործունէութիւնը՝ միութեան անդամներուն Պոլսէն բացակայութեան եւ նիւթական միջոցներու անբաւարարութեան պատճառով: Կեդրոնի հետ մասնաճիւղերն ալ վերջ տուին իրենց աշխատանքին<sup>54</sup>: Որոշման մասին տեղեակ պահեցին Ազգային Կեդրոնական Վարչութեան Քաղաքական Ժողովը, խնդրելով որ ազգը տէր ըլլայ ընկերութեան գոյքերուն եւ վճարէ անոր պարտքերը: Ժողովը պաշտօն յանձնեց Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի Հոգաբարձութեան երկու անդամներու, որպէսզի քննեն ընկերութեան վիճակը<sup>55</sup>: Ի վերջոյ Պատրիարքարան յանձնուեցան գոյքերը եւ Պատրիարքարանը յանձնառու դարձաւ հատուցանելու ընկերութեան 500 ոսկի պարտքը պաշտօնէութեան եւ դեղավաճառներու, փոխան իր տրամադրութեան տակ դրուած մէկ քանի հազար արժող գոյքերուն<sup>56</sup>:

### **Եզրակացութիւն**

Մուտրոսի Զինադադարէ ետք Պոլիս հաւաքուած վտարանդիներու եւ որբերու միջեւ հիւանդներու բարձր

---

<sup>53</sup> Ժողովուրդի ծայնը. 1922, № 1194:

<sup>54</sup> Ժողովուրդի ծայնը. 1922, № 1280:

<sup>55</sup> Ժողովուրդի ծայնը. 1922, № 1288:

<sup>56</sup> Վերջին լուր. 1923, № 2691:

թիւր զգալի դարձուց Կարմիր Խաչի ոգիով հաստատութիւն մը կազմելու անհրաժեշտութիւնը: Կ. Պոլսոյ Հայ Կարմիր Խաչը հիմնուեցաւ 18 Նոյեմբեր 1918ին գումարուած ընդհանուր ժողովէ մը ետք: Հիմնումէն անմիջապէս յետոյ, այս մարմինը մասնաճիւղեր բացաւ քաղաքի զանազան թաղերու եւ գաւառներու մէջ. Պոլսէն դուրս ամենակարեւոր գործունէութեան վայրը դարձաւ հայրենիքը:

Կարմիր Խաչի Ընկերութիւնը, որ լայն ընդունելութիւն գտած էր պոլսահայերու կողմէ, իր ծառայութիւնները յաջողապէս շարունակեց մինչեւ 1922 տարւոյ վերջին ամիսները: Վստահաբար կարելի է հաստատել, որ Հայ Կարմիր Խաչը աշխատանքի չորս տարիներու ընթացքին ազգին ծովածաւալ կարիքներու դարման գտնելու նպատակաւ Պոլսոյ Հայ Համայնքի կողմէ կազմուած բարեսիրական կազմակերպութիւններու եւ ընկերութիւններու յաջողագոյն մարմիններէն մին հանդիսացաւ, մարդասիրական գնահատելի առաքելութիւն տանելով ազգի համար ամենադժուար եւ կարօտ շրջաններուն:

### **ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ**

Բարեգործական Պազար Սկիստարի մէջ, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1920, № 675:

Գատըգիւղի Հ. Կ. Խ-ի մասնաճիւղը, Հայ Բուժակ, Կ. Պոլիս, 1922, № 10:

Գատըգիւղի մասնաճիւղի ի նպաստ կը ներկայացնէն Անոյշ օբէրան: Շքեղ Ներկայացում, ժողովուրդի ձայնը, Կ.

Պոլիս, 1921, № 875:

Երկամեայ Տեղեկագիր Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութեան, 1918 նոյեմբեր 18 - 1920 դեկտեմբեր 31, 1921, Կ. Պոլիս, «Մ. Յովակիմեան» հրատ., 42 էջ:

**Թէոդիկ** 1921, Ամէնուն Տարեցոյցը, Կ. Պոլիս, «Մ. Յովակիմեան» հրատ., ԺԵ տարի, 404 էջ:

Իզմիրի Հ. Կ. Խաչի, Դարման, Կ. Պոլիս, 1920, № 6:

Կ. Խաչի 1922 տարեշրջանի, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1194:

Կ. Խաչի Բերայի Մանկանոցը, Դարման, Կ. Պոլիս, 1922, № 8:

Կ. Պոլիս Երկամեայ Տեղեկագիր Հայ Կարմիր Խաչի Կեդրոնական Վարչութեան 1921, Կ. Պոլիս, «Մ. Յովակիմեան» հրատ., 42 էջ:

Կարմիր Խաչ, Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, № 3355:

Կարմիր Խաչը Սեւ Խաչերուն Տեղ, Արիամարտ, Կ. Պոլիս, 1918, № 14 -1829:

Կարմիր Խաչը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1288-4573:

Կարմիր Խաչի Առաքելութիւնը Հայաստանի մէջ, Երկիր, Կ. Պոլիս, 1922, № 709:

Կարմիր Խաչի ի նպաստ, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1921, № 692:

Կարմիր Խաչի կանոնագիրը, Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, № 3368:

Կարմիր Խաչի Վաւերացումը, Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, № 3375:

Կարմիր Խաչի Փոխանցումը, Վերջին Լուր, Կ. Պոլիս,

1923, № 2691:

Կարմիր խաչի, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1280-4565:

Կոչ Հայ ժողովուրդին, ժամանակ, Կ. Պոլիս, 1920, № 3797:

Հ. Կ. Խաչ, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 332-241:

Հ. Կ. Խաչ, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 299-208:

Հ. Կ. Խաչը, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1206:

Հ. Կ. Խաչի Բժշկ. Առաքելութիւնը Դէպի Հայաստան, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1921, № 2354:

Հ. Կ. Խաչի Հիանդապահուիիներ, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1009:

Հ. Կ. Խաչի Հիանդապահուիիներ, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1920, № 638:

Հ. Կ. Խաչի Ձեռնարկները, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1259:

Հ. Կ. Խաչի տարեկան պարահանդէսը, ժողովուրդի ձայնը, 1922, № 990:

Հ. Կ. Խաչի Օրացոյցը, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 358:

Հ. Կ. Խաչի Օրացոյցը, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1920, № 655:

Հ. Կ. Խաչի օրացոյցը, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1920, № 655:

Հ. Կ. Խաչի, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1920, № 565:

Հ. Կ. Խաչի, ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1184:

Հ. Կարմիր Խաչի Գումգաբուի մասնաճիւղ, ժողովուրդի

ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1172:

Հ.Կ. Խաչը եւ բժշկական Առաքելութիւնը, Հայ բուժակ, Կ. Պոլիս, 1922, № 11:

Հ.Կ. Խաչի, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1230:

Հ.Կ. Խաչի, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1229:

Համահաւաք Ատենագրութիւններ Թուրքիոյ Հայոց Ազգային Երեսփոխանական Ժողովի Համագումար Ազգային Ժողովի եւ Համազգային Խորհուրդի (1919 -1922) 2021, (խմբ. և ծանոթ.՝ Ղազարեան Վ. ), գիրք Ա, Երուսաղեմ, 882 էջ:

Հայ Բարի Տանտիկիներու, Նոր կեանք, Կ. Պոլիս, 1918, № 53:

Հայ Կ. Խաչի Կեդր. Վարչութիւնը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 144-235:

Հայ Կ. Խաչի, Ժամանակ, Կ. Պոլիս, 1919, № 364:

Հայ Կարմիր Խաչ, Նոր կեանք, 1919, № 247:

Հայ Կարմիր Խաչը եւ Հայ Մամուլը, Նոր կեանք, Կ. Պոլիս, 1918, № 71:

Հայ Կարմիր Խաչը Հայաստանի եւ Կիլիկիոյ Համար, Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1920, № 589 (2410):

Հայ Կարմիր Խաչի Բերայի մասնաճիւղը, Նոր կեանք, Կ. Պոլիս, 1919, № 249:

Հայ Կարմիր Խաչի գործունէութիւն, Հայ կին, Կ. Պոլիս, 1919, № 3:

Հայ Կարմիր Խաչի Թէյ Նուագահանդէսը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 49:

Հայ Կարմիր Խաչի ի նպաստ, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1921, № 2164:

Հայ Կարմիր Խաչի Կազմութիւնը, Արդարամարտ, Կ.

Պոլիս, 1918, № 3:

Հայ Կարմիր Խաչի Կեդրոն., Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 144-235:

Հայ Կարմիր Խաչի Հայաստանի Առաքելութեան Տեղեկագիրը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1922, № 1136, 1137:

Հայ Կարմիր Խաչի, Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, № 3398:

Հայ Կարմիր Խաչի, Նոր կեանք, Կ. Պոլիս, 1919, № 99:

Հայ Կարմիր Խաչին մէջ, Նոր կեանք, Կ. Պոլիս, 1919, № 121:

Հայ Կինը Կարմիր Խաչի Մէջ, Դարման, Կ. Պոլիս, 1920, № 1-2:

Հայաստանի Բժշկ. Առաքելութիւն, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1921, № 964:

Հայկական կեանք. Ազգ. ժողով., Ճակատամարտ, Կ. Պոլիս, 1922, № 1028:

Հիւանդապահութեան Դասընթացք, Դարման, Կ. Պոլիս, 1920, № 6:

Մաքրիգիւղի Հ.Կ. Խաչի Շիշլիի հիւանդանոցի ի նպաստ, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1920, № 625:

Մեծ Կղզիի Կ. Խաչի Ապաքինարանը, Վերջին լուր, Կ. Պոլիս, 1921, № 2314:

Մեր նպատակը, Դարման, Կ. Պոլիս, 1920, № 1-2:

Միջազգային Կարմիր Խաչը եւ Հայ Կարմիր Խաչը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 59-139:

Միջազգային Կարմիր Խաչի Ժ-րդ Համաժողովը եւ Հայ Կարմիր Խաչը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1921, № 787:

Յունական Կարմիր Խաչը, Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, №

3386:

Յուշատետրէս, Տօքթ. Վահրամ Յ. Թորգոմեան, ՎԷՄ, 1937, թիւ 1, էջ 48:

Շիշլիի Հ. Կարմիր Խաչ, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1921, № 932:

Պոլսոյ Ֆրանսական հիանդանոցը որբերու եւ տարագրեալներու համար կը յանձնէ 200 անկողին: Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, № 3390:

Ս. Խաչը, Ժողովուրդի ձայնը, Կ. Պոլիս, 1919, № 376:

Սկիստարի Կարմիր Խաչը, Նոր կեանք, Կ. Պոլիս, 1919, № 127:

Տօքթ. Թորգոմեանի Մէկ Բանախօսութիւնը, Առաւօտ, Կ. Պոլիս, 1919, № 4:

Քառամեայ տեղեկատուութիւն Կարմիր Խաչի Գումգաբուի Չորս թաղերու Մասնաճիւղի, Առաւօտ, Կ. Պոլիս, 1919, № 3:

Ֆրանս. Հիանդանոցէն, Ժամանակ, Կ. Պոլիս, 1918, № 3390:

**Сильварт О. Малхасян, *Институт истории НАН РА, соискатель, Константинопольское Армянское общество Красного Креста и его деятельность (1918-1922)***

## Резюме

После Мудросского перемирия в Константинополе собралось большое количество больных среди ссыльных и сирот. Необходимость создания комитета в формате Армянского Красного Креста в Константинополе стала существенной.



Армянский Красный Крест был основан 18 ноября 1918 года во время заседания общего собрания. Через несколько недель после своего основания организация открыла филиалы в различных районах города и провинциях страны. Важнейшим местом деятельности стала Западная Армения.

Общество Красного Креста, получив широкое признание, продолжало свою работу до последних месяцев 1922 года. Можно с уверенностью сказать, что Армянский Красный Крест за четыре года своей деятельности стал одной из важнейших благотворительных организаций созданных Армянской общиной Константинополя. Эта организация удовлетворяла нужды нации и осуществляла ценную гуманитарную деятельность в наиболее труднодоступные регионы.

**Ключевые слова:** Константинопольские армяне, Армения, Мутросское перемирие, Константинопольский Армянский Красный Крест, Армянский Патриархат, доктор Ваграм Торгомян, Медицинская миссия.

**Silvart H. Malhasyan, *Institute of History of the NAS RA*, Applicant of historical sciences, **The Armenian Red Cross Society of Constantinople and its Activities (1918-1922)****

### Summery

After the Armistice of Mudros, the large number of patients among orphans and deportees who gathered in Polis (Istanbul) highlighted the need to create an institution in the spirit of the Red Cross. The Armenian Red Cross of Istanbul was established in 1918, after the general assembly convened on November 18 of the same year. Soon

after its establishment, this organization opened branches in different districts of the city and in the provinces. Western Armenia became the most important place of activity outside of Istanbul.

The Red Cross Society, which was widely accepted by Istanbul Armenians, successfully continued its services until the last months of 1922.

It can be confidently confirmed that during the four years of work, the Armenian Red Cross was one of the most successful charitable organizations formed by the Armenian Community of Istanbul. It aimed to address the needs) of the nation, carrying out a valuable humanitarian mission to the most difficult and needy are you mean of the region.

***Key words:*** Armenians of Constantinople, Armenia, Armistice of Mutros, Armenian Red Cross of Constantinople, Armenian Patriarchate, Dr. Vahram Torgomyan, Medical Mission.

**ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ**

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ  
r.azizbekyan@mail.ru

ID 0009-0004-40950809

**ՏԱՐՈՆ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ  
hakobyan76taron@gmail.com

ID 0009-0009-9124-4273

DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-107

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ  
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ  
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ (1991 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ - 1992 Թ.  
ԴԵԿՏԵՄԲԵՐ)\***

**Բանալի բառեր՝** Ղարաբաղյան հակամարտություն, ԼՂՀ, ՀՀ, ՌԴ, ԱՀ, ԵԱՀԽ, խաղաղ կարգավորում, միջ-նորդական նախաձեռնություն:

**Ներածություն**

Ղարաբաղյան հակամարտությունը հետխորհրդային տարածաշրջանում թերևս ամենաբարդ և հակասական հիմնախնդիրներից էր: Այն առաջինն էր ԽՍՀՄ տարածքում պատերազմների վերաճած ազգամիջյան հակամարտությունների շարքում, երբ Լեռնային Ղարաբաղի

---

\* Ներկայացվել է 20.III.2024 թ., գրախոսվել է 29. III. 2024 թ., ընդունվել է պապագրության 07.VI.2024 թ.:

ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանն ի պատասխան՝ Ադրբեջանը որդեգրեց կոշտ ուժային քաղաքականություն: Խորհրդային Միության մայրամուտին նրա տարածքում ծագած այլ հակամարտություններից Ղարաբաղյանը նախևառաջ տարբերվում էր նրանով, որ արցախահայությունը մինչև ԽՍՀՄ անկումը անթերի իրացրել էր ինքնորոշման իր իրավունքը<sup>1</sup>:

Միության փլուզման հետևանքով Ղարաբաղյան հիմնախնդիրը դադարելով լինել այլևս գոյություն չունեցող երկրի ներքին հիմնահարց, հայտնվեց զանազան միջազգային ուժերի մրցակցության կենտրոնում, քանի որ Հարավային Կովկասում առաջացած վակուումը մեծացրեց վերջինիս հանդեպ աշխարհի հետաքրքրությունը: Դա գլխավորապես պայմանավորված էր տարածաշրջանի աշխարհաքաղաքական և ռազմավարական կարևորությամբ: Այստեղ ազդեցության համար մղվող պայքարին մասնավորապես ներգրավված էին Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Թուրքիան, Իրանը և այլ երկրներ: Հարավային Կովկասում ազդեցության համար ծավալված պայքարն առավելապես արտահայտվեց Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում միջնորդություն ստանձնելու շուրջ: Թվում էր, թե խնդրի լուծումն առանձնապես բարդ չպետք է լիներ, քանի որ միջազգային հանրությունը պետք է ճանաչեր միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից մե-

---

<sup>1</sup> Գևորգյան. 2010, 44: Кочарян. 2016, 4.

կը՝ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման իրավունքը<sup>2</sup>: Սակայն, ի հայտ եկան տարանոյթ հակասական շահեր ու դիրքորոշումներ, քանի որ հակամարտության կարգավորման գործընթացում ներքաշված տերություններն այն օգտագործում էին իրենց նպատակների իրականացման համար: Դա բացասական ազդեցություն էր գործում հիմնախնդրի խաղաղ կարգավորման վրա՝ նպաստելով հակամարտության էլ ավելի ծավալմանը: Ըստ էության, հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված միջազգային դերակատարների միջև գոյություն ունեցող լուրջ հակասությունների հետևանքով, 1991-1992 թթ. հակամարտության գոտում նոր թափ ստացավ ռազմական էսկալացիան:

Ստեղծված իրավիճակում, բնականաբար, Ռուսաստանը ևս փորձում էր ջանքեր գործադրել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղղությամբ, քանի որ սեփական ազգային շահերի պաշտպանությունը կովկասյան տարածաշրջանում իր արտաքին քաղաքականության բաղկացուցիչ մասն էր: Հարավային Կովկասը Մոսկվայի համար ոչ միայն էներգետիկ կարևոր տարանցիկ գոտի էր, այլև կապող օղակ հարավի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների հետ, մինչդեռ Ղարաբաղյան խնդրի գոյությունն այդ ու-

---

<sup>2</sup> Քոչարյան. 2002, 94:

դիների լիարժեք շահագործման լուրջ խոչընդոտ էր<sup>3</sup>: Այդ պատճառով էլ ՌԴ-ն չէր կարող չեզոք մնալ հակամարտության կարգավորման գործում, մանավանդ, որ դրանում ներգավվածությունը զգալիորեն նպաստեց կովկասյան տարածաշրջանում նրա դիրքերի ամրապնդմանը:

### **Ռուսաստանի Դաշնության առաջին նախաձեռնությունը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման ուղղությամբ (1991 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր)**

Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին ներգրավվելու առաջին լուրջ քայլը Ռուսաստանի Դաշնությունը ձեռնարկեց դեռևս ԽՍՀՄ գոյության վերջին շրջանում: Այն նախևառաջ պայմանավորված էր մի շարք քաղաքական գործոններով: Մասնավորապես, Բորիս Ելցինին անհրաժեշտ էր ցույց տալ, որ ի տարբերություն միութենական կենտրոնական իշխանությունների՝ ռուսաստանյան ժողովրդավարական նոր իշխանություններն ի զորու էին լուծելու Ղարաբաղյան հիմնախնդիրը: Դրա հետ մեկտեղ, կանխատեսելով Խորհրդային Միության մոտալուտ վախճանը, նա ձգտում էր պահպանել Ռուսաստանի առաջատար դերը տարածաշրջանում, նաև ապացուցել, որ

---

<sup>3</sup> Шакарянц. 2001, 207.

ԽՍՀՄ-ում իրական իշխանությունն արդեն իրեն է պատկանում՝ դրանով իսկ փորձելով բարձրացնել սեփական հեղինակությունը միջազգային ասպարեզում: Առաջին միջնորդական առաքելությանն առավել մեծ կշիռ տալու նպատակով ՌԴ նախագահին իր նախաձեռնության մեջ ներգրավեց նաև Ղազախստանի նախագահ Նուրսուլլան Նազարբաևին: Դա պայմանավորված էր թուրքալեզու մահմեդական պետությունների հետ Ղազախստանի ունեցած էթնոմշակութային սերտ առնչություններով և, հատկապես, Անկարա-Ալմաթա-Բաքու մերձեցման ուրվագծվող միտումներով<sup>4</sup>:

1991 թ. սեպտեմբերի 20-23-ը Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների գլխավորած պատվիրակությունն այցելեց Բաքու, Ստեփանակերտ և Երևան: Արդյունքում, սեպտեմբերի 23-ին ռուսական ժելեզու՛վուղսկ քաղաքում Ռուսաստանի, Ղազախստանի, Հայաստանի և Ադրբեջանի կողմից ստորագրվեց հակամարտության կարգավորմանը նպատակամիտված «Ռուսաստանի Դաշնության նախագահ Բ.Ելցինի և Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևի միջնորդական առաքելության մասին համատեղ կոմյունիկե»<sup>5</sup>, որով պետք է բանակցային գործընթաց ստեղծելու պայմաններ ստեղծվեին: Ընդ որում, փաստաթղթում հակամարտության կարգավորման ժամկետը նշվում էր մինչև 1992

---

<sup>4</sup> Բալայան. 2004, 24:

<sup>5</sup> Гаспарян. 1999, 84.

թ. հունվարի 1-ը: Կոմյունիկեի ստորագրմանը դիտորդի կարգավիճակով ներկա էին նաև ԼՂՀ ներկայացուցիչները<sup>6</sup>: Հատկանշական է, որ հենց Ժելեզնովոդսկից սկսած առանցքային էր բանակցություններում Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչների մասնակցության և կարգավիճակի հարցը, որի շուրջ կողմերը հակասական դիրքորոշում ունեին: Ադրբեջանական կողմը դեմ էր Ղարաբաղի մասնակցությանը թե՛ որպես առանձին պատվիրակություն, թե՛ որպես Հայաստանի պատվիրակության մաս և թե՛ որպես աշխատանքային խմբի անդամ: Ի դեպ, վերջին տարբերակն առաջարկել էր ռուսաստանյան կողմը<sup>7</sup>:

Ժելեզնովոդսկի կոմյունիկեի կարևոր կետերն էին կրակի դադարեցումը, հակասահմանադրական որոշումների չեղյալ հայտարարումը և հակամարտության գոտուց զինված կազմավորումների դուրս բերումը<sup>8</sup>, որոնք փաստաթղթում շարադրված էին որպես հավասարազոր: Այս առումով կողմերի համար պարզ չէր, թե ինչ հերթականությամբ է անհրաժեշտ ապահովել դրանց կատարումը, ինչն անհամաձայնության հիմնական պատճառներից մեկը դարձավ: Այնուամենայնիվ, «Ժելեզնովոդսկի գործընթացի» գլխավոր ձեռքբերումներից էր հակամարտող երկու կողմերի միջև բանակցություն-

---

<sup>6</sup> <https://www.aniarc.am/2022/01/05/>.

<sup>7</sup> <https://www.tert.am/am/news/2019/05/15/Karabakh-konflikt/2999281>.

<sup>8</sup> <http://www.vn.kazimirov.ru/doc1.htm>



ների սկիզբը: Ընդհատումներով բանակցություններ անցկացվեցին Իջևանի (ՀՀ) և Ղազախի (ԱՀ) սահմանամերձ շրջաններում, սակայն ադրբեջանական կողմի ոչ կառուցողական դիրքորոշման հետևանքով բանակցային գործընթացը շուտով մտավ փակուղի<sup>9</sup> և այդպես էլ խաղաղություն չպարգևեց արցախյան հողին:

Ադրբեջանը ոչ միայն չդադարեցրեց կրակը, այլև 1991 թ սեպտեմբերի 2-ին, բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ, ժողովրդական պատգամավորների ԼՂ մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ու դրան կից Շահումյանի շրջանի սահմաններում անկախ Լեռնային Ղարաբաղի հանրապետության ստեղծման մասին Հռչակագրի ընդունումից<sup>10</sup> և, հատկապես, հոկտեմբերի 11-ին Թուրքիայի Գերագույն շտաբի պետ Դ. Գյուրեշի Բաքու այցելելուց հետո<sup>11</sup>, սաստկացրեց ռազմական ճնշումը ԼՂՀ նկատմամբ: Հատկանշական էր, որ այն չդատապարտվեց ոչ միութենական կենտրոնական իշխանությունների և ոչ էլ միջնորդական առաքելությամբ հանդես եկած վերոնշյալ երկու երկրների կողմից<sup>12</sup>:

Այսպիսով՝ պաշտոնական Բաքուն օգտվելով հոգե-

---

<sup>9</sup> <https://www.nkr.am/hy/zheleznovodsk-process>

<sup>10</sup> «Հայաստանի Հանրապետություն» 1991, 3 սեպտեմբերի:

<sup>11</sup> <https://www.nkr.am/hy/azerbaijani-aggression>

<sup>12</sup> **Գևորգյան**. 2010, 46:

վարքում գտնվող ԽՍՀՄ-ում տիրող ներքաղաքական ճգնաժամից, ընտրել էր Ղարաբաղյան հակամարտության լուծման ուժային ճանապարհը, ինչի հետևանքով ԽՍՀՄ գոյության իրավաբանական դադարեցումից հետո Ելցին-Նազարբան նախաձեռնությունը մարեց:

### **Ռուսաստանի Դաշնության միջնորդական ջանքերը (1992 թ. հունվար-դեկտեմբեր)**

ԽՍՀՄ փլուզումից անմիջապես հետո՝ 1992 թվականից, Ադրբեջանը լայնածավալ ռազմական գործողություններ իրականացրեց ԼՂՀ դեմ, որի պաշտպանությանը լծվեցին նաև հայաստանաբնակ և սփյուռքահայ բազմաթիվ հայեր: ՀՀ իշխանությունները, Ղարաբաղի հիմնախնդրի քաղաքական լուծումներ գտնելու ակնկալիքով և Ադրբեջանի ու Հայաստանի միջև ռազմական գործողությունների ծավալումը կանխելու նպատակով, ձեռնամուխ եղան Լեռնային Ղարաբաղի հարցը միջազգային հանրության և հեղինակավոր կազմակերպությունների մտահոգության խնդիր դարձնելուն<sup>13</sup>:

Ռուսաստանը, ստանձնելով Խորհրդային Միության իրավահաջորդի առաքելությունը, սկսեց Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը նպատակամիտված քայլեր ձեռնարկել: 1992 թ. հունվարի վերջին ՌԴ արտաքին գործերի նախարարությունը տարածեց հատուկ հայտարարություն, որում հակամարտող

---

<sup>13</sup> Ազիզբեկյան. 1992, 79:

կողմերին կոչ էր արվում անհապաղ դադարեցնել ռազմական գործողությունները և Մոսկվայի միջնորդությամբ վերսկսել բանակցային գործընթացը<sup>14</sup>: Սակայն ադրբեջանական կողմը դրան պատասխանեց Ստեփանակերտի հրետակոծումով: Ավելին, իր տարածքում գտնվող նախկին Խորհրդային Միության զինապահեստներից մեծաքանակ սպառազինություններ ձեռք բերելուց հետո Բաքուն սկսեց զանգվածային հրետակոծության ենթարկել ԼՂՀ գրեթե բոլոր բնակավայրերն ու Հայաստանի սահմանամերձ շրջանները:

Անհանգստացած տարածաշրջանում օրեցօր ահագնացող լարվածությունից 1992 թ. փետրվարին Ադրբեջան, Հայաստան և Լեռնային Ղարաբաղ այցելեց ԵԱՀԽ հատուկ առաքելությունը՝ Միջազգային հելսինկյան ֆեդերացիայի նախկին նախագահ, Չեխոսլովակիայի նախագահի աշխատակազմի այն ժամանակվա ղեկավար Կ. Շվարցենբերգի գլխավորությամբ: Այցի արդյունքներով կազմվեց զեկույց, որը քննարկման առարկա դարձավ ԵԱՀԽ Ավագ պաշտոնյաների կոմիտեի (ԱՊԿ) 7-րդ և 8-րդ նստաշրջաններում: Փետրվարի 28-ին ԱՊԿ-ն որոշում ընդունեց, որի կարևորագույն բաղադրիչներն էին կրակի դադարեցումը, մարդասիրական միջանցքների ստեղծումը և հակամարտության տարածաշրջան սպառազինության մատակարարման արգելքը<sup>15</sup>: Սա-

---

<sup>14</sup> Казимиров, 2000, 82.

<sup>15</sup> <https://www.nkr.am/hy/osce-minsk-process>

կայն, Ադրբեջանի որդեգրած կոշտ դիրքորոշման հետևանքով, միջազգային հանրության գործադրած այս ջանքերը ևս ոչ մի արդյունք չտվեցին:

Իրադրությունը տարածաշրջանում էլ ավելի բարդացավ, երբ 1992 թ. գարնան սկզբին ռուսական կողմի միջնորդությամբ Ստեփանակերտից դուրս բերվեց ԱՊՀ զինված ուժերի 366-րդ մոտոհրաձգային գունդը<sup>16</sup>:

1992 թ. մարտի 24-ին, Եվրոպայի անվտանգության ու համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) Ավագ պաշտոնյաների կոմիտեի առաջարկությամբ, Հելսինկիում տեղի ունեցավ խորհրդի արտաքին գործերի նախարարների մակարդակով առաջին լրացուցիչ հանդիպումը: Որոշում ընդունվեց ԵԱՀԽ հովանու ներքո Մինսկում հրավիրել համաժողով 11 պետությունների (Ադրբեջան, Հայաստան, Բելառուս, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, ԱՄՆ, Թուրքիա, Ֆրանսիա, Չեխոսլովակիա, Շվեդիա), ինչպես նաև «որպես շահագրգիռ կողմեր Լեռնային Ղարաբաղի ընտրված և այլ ներկայացուցիչների» մասնակցությամբ: Հենց այդ ժամանակ էլ որոշում ընդունվեց տարածաշրջան ուղարկել ԵԱՀԽ գործող նախագահ, Չեխոսլովակիայի արտաքին գործերի նախարար Ի. Դինստրիին<sup>17</sup>: Փաստորեն, իր պատմության ընթացքում ԵԱՀԽ-ն առաջին անգամ պարտավորվում էր հակամարտությունը լուծել խաղաղության

---

<sup>16</sup> Ռուսաստանը և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը. 2004, 574:

<sup>17</sup> Документ СБСЕ. 1992, 24 марта.

համաժողովի միջոցով: Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում ԵԱՀԽ-ի և այլ պետությունների ակտիվացմամբ (Իրան, Թուրքիա) Ռուսաստանի Դաշնության միջնորդական դերը փաստորեն մղվեց երկրորդ պլան<sup>18</sup>:

Վերջինից ելնելով, ռուսաստանյան կողմը Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացում իր աշխատանքների ակտիվացման նպատակով, 1992 թ. մայիսի 5-ին ստեղծեց միջնորդական առաքելություն՝ ՌԴ ԱԳՆ հատուկ հանձնարարություններով դեսպան Վ. Կազիմիրովի գլխավորությամբ<sup>19</sup>: Սակայն, մինչ այդ առաքելության ստեղծումը Մոսկվան հանդես էր եկել մի շարք նախաձեռնություններով: Մասնավորապես, ապրիլի 9-ին Ստեփանակերտ ժամանեց ՌԴ արտգործնախարար Ա. Կոզիրևը, որը ԼՂՀ իշխանության ներկայացուցիչներին առաջարկ ներկայացրեց ապրիլի 24-ին Միներալնիյե Վոդի քաղաքում խորհրդաժողով գումարելու վերաբերյալ՝ Ղարաբաղի կողմից հայկական և ադրբեջանական համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>20</sup>: Արցախի իշխանությունները մերժելով այն հայտարարեցին, որ ցանկացած բանակցություններում ԼՂՀ-ն կարող են ներկայացնել միայն նրա օրի-

---

<sup>18</sup> **Գևորգյան.** 2010, 46:

<sup>19</sup> **Казимиров.** 2009, 28.

<sup>20</sup> **Арутюнян.** 194, 162.

նական իշխանությունները<sup>21</sup>:

1992 թ. ապրիլի 13-ին Մոսկվան առաջ քաշեց Ղարաբաղյան հակամարտության կարգավորման երկփուլ ծրագիր՝ այն ներկայացնելով ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարին և ԵԱՀԽ գործող նախագահին, ինչպես նաև՝ հակամարտող կողմերի ղեկավարներին: Ըստ Ռուսաստանի Դաշնության, կարգավորման գործընթացը պետք է լիներ երկու փուլով՝ նախ կողմերից պահանջվում էր դադարեցնել զինված գործողությունները և վերադառնալ 1992 թ. հունվարի 1-ի իրավիճակին, այնուհետև ձեռնամուխ լինել ԼՂ ապագա կարգավիճակի որոշմանը<sup>22</sup>: Սակայն Ռուսաստանի տվյալ առաջարկը մերժվեց ԵԱՀԽ-ի Մինսկի համաժողովի թեկնածու մի քանի երկրների կողմից: Դա պայմանավորված էր տարածաշրջանում միջնորդների միջև առկա անզիջում մրցակցությամբ: Նրանք ջանքերը միավորելու փոխարեն, ամեն կերպ փորձում էին շրջանցել մեկը մյուսին: Այս առումով ուշագրավ էր, որ հաջորդ տարվա հոկտեմբերին Մինսկի խումբը մշակեց «Վերանայված ժամանակացույց», որն ըստ որոշ հայ և ռուս դիվանագետների՝ փաստորեն կրկնում էր մերժված ռուսաստանյան տարբերակում առկա տեսակետները<sup>23</sup>:

1992 թ. մայիս-հունիսին ԼՂՀ-ում և նրա շուրջ նոր

---

<sup>21</sup> Հակոբյան. 2011, 69:

<sup>22</sup> Казимиров. 2009, 29.

<sup>23</sup> Независимая газета. 1994, 12 января.

զարգացումները Ռուսաստանին հարկադրեցին էապես վերանայել տարածաշրջանային քաղաքականության գերակայությունները և առաջնորդվել ռազմական ներկայությամբ «խաղաղություն պարտադրելու» սկզբունքով: Դրանից ելնելով, նշյալ թվականի ամառվանից Մոսկվան սկսեց ավելի հաստատակամ ու հետևողական մասնակցել Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործընթացին: Մասնավորապես, 1992 թ. երկրորդ կեսից ռուսաստանյան կողմը սկսեց կարևորել վերջինիս ուղղությամբ ԵԱՀԽ-ի և ԱՊՀ-ի համատեղ ջանքերի գործադրման անհրաժեշտությունը, մանավանդ, որ նույն թվականի մարտի 20-ին ԱՊՀ մասնակից 11 պետություն Մոսկվայում ստորագրել էին «Դիտորդների խմբի և խաղաղության ապահովման հավաքական ուժերի ստեղծման մասին» համաձայնագիրը: Ընդ որում, փաստաթուղթը ստորագրած բոլոր պետությունները ԵԱՀԽ-ի անդամներ էին:

1992 թ. օգոստոսին, Ղազախստանի նախագահ Ն.Նազարբաևը, ըստ երևույթին, Մոսկվայի հետ համաձայնեցված, հանդես եկավ նոր միջնորդական նախաձեռնությամբ: Նրա Երևան և Բաքու այցելություններից հետո օգոստոսի 27-ին Ալմաթիում կայացավ ՀՀ և ԱՀ արտգործնախարարների հանդիպումը՝ Ղազախստանի իրենց գործընկերոջ մասնակցությամբ: Հանդիպման արդյունքում ստորագրվեց հուշագիր, որով կողմերը, հավաստելով ուժային միջոցներով խնդրի լուծման ան-

հեռանկարայնությունը, պայմանավորվեցին սեպտեմբերի 1-ից ԵԱՀԽ Մինսկի խմբի կոչին համապատասխան՝ դադարեցնել ռազմական գործողությունները: Հատկանշական է, որ փաստաթղթում առանձին կետով նշվում էր Ղազախստանի միջնորդական առաքելությունը ԵԱՀԽ-ի խաղաղարար գործունեության շրջանակներում իրականացնելը<sup>24</sup>: Սակայն Ն. Նազարբանի միջնորդական առաքելությունը հաջողություն չունեցավ: Այն, ըստ որոշ վերլուծաբանների, ոչ մի նոր առաջարկություն և գաղափար չէր պարունակում՝ փաստորեն կրկնելով Մինսկի խմբի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունները, որոնց իրականացմանը հիմնականում խոչընդոտում էր խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու Ադրբեջանի որդեգրած դիրքորոշումը<sup>25</sup>:

1992 թ. օգոստոս-հոկտեմբեր ժամանակահատվածում Ռուսաստանը հանդես եկավ մի շարք միջնորդական նախաձեռնություններով: Մասնավորապես, օգոստոսի 8-ին ՌԴ միջնորդությամբ հանդիպեցին Հայաստանի և Ադրբեջանի նախագահները: Արդյունքում ստորագրվեց Ղարաբաղյան ճակատի հարավային հատվածում զինադադարի մասին համաձայնագրի նախագիծ<sup>26</sup>, որն այդպես էլ չիրականացվեց:

1992 թ. մայիսի 1-ին ԱՊՀ միացյալ զինված ուժերից

---

<sup>24</sup> **Բալայան**. 2004, 46-47:

<sup>25</sup> **Mooradian**. 1996, 359-362.

<sup>26</sup> Ռուսաստանը և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը. 2004, 574:



անկախ՝ ՌԴ պաշտպանական գերատեսչության հիմնումը<sup>27</sup>, թերևս, լուրջ հակակշիռ ստեղծեց հետխորհրդային հակամարտությունների նկատմամբ Ռուսաստանի ԱԳՆ-ի հիմնականում լիբերալ և ոչ միշտ հստակ մոտեցումներին: 1992 թ. սեպտեմբերի 19-ին ՌԴ պաշտպանության նախարար Պ. Գրաչովի նախաձեռնությամբ Սոչիում կայացավ Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների հանդիպումը, որի ժամանակ ստորագրվեց համաձայնագիր՝ սեպտեմբերի 25-ի լույս 26-ի գիշերը երկու ամիս ժամկետով բոլոր տեսակի զենքերից կրակի ժամանակավոր դադարեցման մասին: Դրա հետ մեկտեղ, սեպտեմբերի 25-ին ՀՀ և ԱՀ պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչները Մոսկվայում ստորագրեցին Սոչիի համաձայնագրի իրագործման ընթացքի վերահսկման վերաբերյալ արձանագրություն: Վերոնշյալ թվականի հոկտեմբերին, ի կատարումն սեպտեմբերին ձեռք բերված համաձայնության, Հայաստան և Ադրբեջան գործուղվեցին ՌԴ զինված ուժերի ռազմական դիտորդներ, որոնք, սակայն դեկտեմբերի վերջին հետ կանչվեցին՝ հակամարտության գոտում հրադադարի մասին պայմանավորվածությունների խախտման պատճառով:

Փաստորեն, 1992 թ. ամռանը Խորհրդային բանակի ունեցվածքի բաժանման արդյունքում Ադրբեջանը, տիրանալով մեծաքանակ մարտական տեխնիկայի և սպա-

---

<sup>27</sup> Ազիզբեկյան. 2019, 195:

ռազինության, նախընտրում էր հարցը լուծել ռազմական ճանապարհով<sup>28</sup>:

### **Եզրակացություններ**

Ադրբեջանի կողմից դեռևս դեյուրե գոյություն ունեցող ԽՍՀՄ շրջանակներում Ռուսաստանի և Ղազախստանի նախագահների միջնորդական առաքելության ձախողումը մեկ անգամ ևս ապացուցեց, որ պաշտոնական Բաքուն հակված էր հակամարտությունը լուծել ռազմական ճանապարհով:

1991-1992 թթ., Ժելեզնովոդսկում և նրան հաջորդած այլ միջազգային հարթակներում ձեռք բերված պայմանավորվածությունների չիրականացման հետևանքով, տարածաշրջանում կայուն իրավիճակ այդպես էլ չհաստատվեց: Աստիճանաբար ավելի էր մեծանում վերահաս լայնածավալ պատերազմի սպառնալիքը:

Բանակցային գործընթացի անհաջողությունը պայմանավորված էր նաև տարածաշրջանում միջնորդների միջև գոյություն ունեցող սուր մրցակցության առկայությամբ: Նրանցից յուրաքանչյուրը, ելնելով սեփական աշխարհաքաղաքական շահերից, ամեն կերպ ձգտում էր առաջնային դեր ստանձնել միջնորդական առաքելության գործընթացում: Դրան զուգընթաց, միջազգային

---

<sup>28</sup> Ռուսաստանի խաղաղարար նախաձեռնությունները, <https://www.nkr.am/hy/russian-mediation>: Ռուսաստանը և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը. 2004, 574:

հանրության մոտ Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործում Ռուսաստանի հավակնությունների նկատմամբ գոյություն ունեւ թերահավատություն: Մանավանդ, որ վերջինս փաստորեն առաջնորդվում էր երկակի ստանդարտների քաղաքականությամբ, որն իր բացասական ազդեցությունն էր թողնում հակամարտության կարգավորման գործընթացի վրա: Ըստ էության, ՌԴ հիմնական գործողություններն ի սկզբանե միտված էին ոչ այնքան հակամարտության կարգավորմանը, որքան երրորդ երկրների՝ տարածաշրջանի հիմնախնդիրներին միջամտելու փորձերին խոչընդոտելուն<sup>29</sup>: Միաժամանակ, ըստ որոշ փորձագետների, Մոսկվան այդ հակամարտության առկայությունը օգտագործում էր նաև որպես լծակ թե՛ Հայաստանի և թե՛ Ադրբեջանի նկատմամբ ազդեցությունը պահպանելու և իր համար կենսական նշանակություն ունեցող հարցերում ՀՀ-ից և ԱՀ-ից անհրաժեշտ զիջումների հասնելու համար<sup>30</sup>: Նման քաղաքականության հետևանքով, 2023 թ. սեպտեմբերին Ադրբեջանի լայնամասշտաբ ռազմական ագրեսիայի պատճառով, Լեռնային Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը հարկադրված լքեց իր բնօրանը:

---

<sup>29</sup> Hovhannisyan. 1999, 51:

<sup>30</sup> Գևորգյան. 2010, 47:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Ազիզբեկյան Ռ.** 1992, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն. Համառոտ ակնարկ, Երևան, Հայաստանի ԳԱ հրատ., 106 էջ:

**Ազիզբեկյան Ռ.** 2019, ՀՀ և ՌԴ միջև ռազմաքաղաքական համագործակցության սկզբնավորումն ու զարգացումը 1991-2008 թթ., «Հայոց պատմության հարցեր», Երևան, № 20, էջ 191-220:

**Բալայան Տ.** 2004, Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Երևան, «Գասպրինտ», 183 էջ:

Բոլոր մակարդակների խորհուրդների պատգամավորների մասնակցությամբ ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանի 1991 թ. սեպտեմբերի 2-ի որոշումը 1991, «Հայաստանի Հանրապետություն», 3 սեպտեմբերի:

**Գևորգյան Կ.** 2010, Ռուսաստանի Դաշնության դերը Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործում, «Բանբեր Երևանի համալսարանի» (միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն), Երևան, № 130.6, էջ 44-53:

Ինչպես Ելցինն ու Նազարբաևը սկիզբ դրեցին ԼՂ կոնֆլիկտի բանակցություններին և ինչ տեսք ունեն դրանք այսօր. Բանակցային խրոնիկան 1991 թ.-ից մինչ օրս 2019, Երևան, <https://www.tert.am/am/news/2019/05/15/Karabahconflic-t/2999281>.

**Հակոբյան Տ.** 2011, ԼՂՀ հռչակումը և պետական

շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Երևան, «Էդիտ պրինտ», 206 էջ:

Ռուսաստանը և Ղարաբաղյան ազատագրական պատերազմը 2004, Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, Երևան, «Հայկական հանրագիտարան» հրատ., էջ 573-575:

Ռուսաստանի խաղաղարար նախաձեռնությունները, <https://www.nkr.am/hy/russian-mediation>, 8 էջ:

**Քոչարյան Վ.** 2002, Միջազգային իրավունք (ուսումնական ձեռնարկ), Երևան, «Երևանի պետական համալսարանի» հրատ., 504 էջ:

**Арутюнян В.** 1994, События в Нагорном Карабахе, хроника часть IV, январь 1991 г. – январь 1993 г., Ереван, изд-во «Гитутюн» НАН РА, 297 с.

**Гаспарян А.** 1999, Динамика Карабахского конфликта и роль Российской Федерации в его урегулировании, «Центральная Азия и Кавказ», Лулео, Швеция, N 5 (6) с. 83-88.

Документ СБСЕ 1992, Первая дополнительная встреча Совета СБСЕ. Резюме. Хельсинки, 24 марта, <http://www.vn.kazimirov.ru/doc2.htm>

Интервью президента Армении **Л. Тер-Петросяна** 1994, Москва, «Независимая газета», 12 января.

**Казимиров В.** 2009, Мир Карабаху. Посредничество России в урегулировании Нагорно-Карабахского конфликта, Москва, «Международные отношения», 456 с.

Казимиров В. 2000, О Карабахском кризисе, «Международная жизнь» Москва, N 6, с. 79-87.

**Кочарян Ш.** 2016, Почему до сих пор не урегулирован Нагорно-Карабахский конфликт? Ереван, ООО «МИА», 33 с.

**Шакарянц С.** 2001, Россия и фактор энергоносителей в Закавказье, Политика постсоветской России на Кавказе и ее

перспективы, Ереван, Армянский центр национальных и международных исследований, с. 207-233.

**Шакарянц С.** 2001, Россия и закавказские конфликты, Политика постсоветской России на Кавказе и ее перспективы, Ереван, Армянский центр национальных и международных исследований, с. 19-159.

<https://www.aniarc.am/2022/01/05/zheleznowodsk-communicue-1991-nk/>.

**Hovhannisyan N.** 1999, The Karabakh Problem, Erevan, «Չափազանց-97», 111 էջ:

**Mooradian M.** 1996, Third partymediations and missed opportunities un Nagorno-Krababakh: A Design for possible Solution.Gorge Mason UnivesityVirginia, USA, 450 p.

<https://www.nkr.am/hy/osce-minsk-process.>

**Рубен Л. Азизбекян, Институт истории НАН РА, к.и.н, доцент, Тарон В. Акопян, Институт истории НАН РА, к.и.н, доцент, Российская Федерация в процессе урегулирования Нагорно-Карабахского конфликта (сентябрь 1991 г.- декабрь 1992 г.)**

## Резюме

В преддверии распада СССР, с 20 по 23 сентября 1991 года, Президент России Б. Ельцин вместе с коллегой из Казахстана Н. Назарбаевым посетили регион с целью прекращения военных действий на армяно-азербайджанской линии соприкосновения и начала переговоров между конфликтующими сторонами. По результатам визита 23 сентября в Железноводске было подписано совместное Коммюнике. Однако, главным образом ввиду жесткой позиции Азербайджана, стороны так и не смогли

договориться об осуществлении положений документа. Для активизации усилий по мирному урегулированию карабахско-азербайджанского конфликта, Москва 5 мая 1992 года учредила посредническую миссию под руководством Посла по особым поручениям МИД РФ В. Казиминова. Весной Россия предложила программу урегулирования конфликта, которая была отвергнута СБСЕ, что было обусловлено конкуренцией посредников в регионе. Это было следствием того, что представленные в регионе государства и международные организации преследовали только свои цели. Не случайно, что ни одна акция посредников по урегулированию конфликта не отражала ее суть, ибо это требовало глубокий причинно-следственный анализ его происхождения (конфликта).

Созданное в мае 1992 года, Министерство обороны РФ также приняло меры по урегулированию конфликта. 19 сентября 1992 года в Сочи, при посредничестве министра обороны РФ П. Грачева, его армянский и азербайджанский коллеги подписали Соглашение о перемирии на карабахских фронтах с 25 сентября на два месяца, но достичь прекращения огня так и не удалось.

В Карабахском вопросе позиция России существенно отличалась от других конфликтов на постсоветском пространстве. Москва имела свои интересы среди противоборствующих сторон и старалась сохранять хорошие отношения и с Арменией, и с Азербайджаном. В то же время Россия, стремясь сохранить свое влияние на Южном Кавказе и в конфликтующих республиках, избегала решения единолично взять на себя обязательство в процессе урегулирования конфликта.

**Ключевые слова:** Карабахский конфликт, НКР, РА, РФ, АР, СБСЕ, мирное урегулирование, посредническая инициатива.

**Ruben L. Azizbekyan, PhD, Professor, Institute of History, NAS RA, Taron V. Hakobyan, PhD, Professor, Institute of History, NAS RA, Russian Federation in the settlement of the Nagorno Karabakh conflict (September 1991 - December 1992)**

### **Summary**

On the eve of the collapse of the USSR, on September 20-23, 1991, Russian President B. Yeltsin, together with his colleague from Kazakhstan N. Nazarbayev, visited the region to put an end to hostilities on the Armenian-Azerbaijani contact line and start negotiations between the conflicting parties. As a result of the visit, a joint Communiqué was signed on September 23 in Zheleznovodsk. However, mainly due to the tough position of Azerbaijan, the parties were unable to agree on the implementation of the provisions of the document. To intensify efforts for a peaceful settlement of the Karabakh-Azerbaijan conflict, on May 5, 1992, Moscow established a mediation mission under the leadership of Ambassador-at-Large of the Russian Foreign Ministry V. Kazimirov. In spring, Russia proposed a conflict resolution program that was rejected by the CSCE, which was a result of a competition between mediators in the region. This stemmed from the fact that states and international organizations represented in the region pursued their own goals exclusively. It is no coincidence that none of the the mediators' actions to resolve the conflict reflected its essence, as this required a deep cause-and-effect analysis of its origin.

After the creation of the Russian Ministry of Defense in May 1992, it also took some steps to resolve the conflict. On September 19, 1992, in Sochi, through the mediation of Russian Defense Minister P. Grachev, his Armenian and Azerbaijani colleagues signed a ceasefire agreement on the Karabakh fronts from September 25 for two months, but it was not possible to achieve a ceasefire.

On the Karabakh issue, Russia's position differed significantly



from other conflicts in the post-Soviet space. Moscow had its interests among the conflicting parties and tried to maintain good relations with both Armenia and Azerbaijan. At the same time, seeking to maintain its influence in the South Caucasus and the conflicting republics, Russia avoided the decision to single-handedly take responsibility in the conflict resolution process.

***Key words:*** Karabakh conflict, NKR, RA, RF, AR, CSCE, peaceful settlement, mediating initiative.

**ДЖЕННИ Л. ТАМАРЯН**

*Институт истории НАН РА, младший научный сотрудник*

*jen344992@gmail.com*

*ID 0000-0002-8890-1772*

*DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-130*

## **ОТНОШЕНИЕ ВЛАСТЕЙ ГРУЗИИ К ЭТНИЧЕСКИМ МЕНЬШИНСТВАМ В УСЛОВИЯХ НОВЫХ ПОСТСОВЕТСКИХ РЕАЛИЙ\***

**Ключевые слова:** Постсоветская Грузия, этническое меньшинство, правительство, приграничный регион, грузинское население, грузинская демократия, Советский Союз, партийные программы, личные связи, Квемо Картли.

### **Введение**

На протяжении веков в Грузии различные этнические и религиозные группы мирно жили бок о бок. Этноконфликты, произошедшие в конце прошлого века, по праву можно рассматривать как политические события, спровоцированные внешними силами. Хотя в Грузии не было других вооруженных конфликтов с участием представителей других народов, кроме абхазов и осетин, полная и мирная интеграция компактно проживающих этнических меньшинств в грузинское общество остается одним из основных вызовов современного грузинского государства. Параллельно с развивающимися процессами в постсоветской Грузии становилось все более необходимым комплексное изучение проблем этнических меньшинств.

---

*\* Представлена 11.II.2024 г., рецензирована 18.II.2024 г., принята к печати 07.VI.2024 г..*

В приграничных районах, где проживает большое количество этнически негрузинского населения, наличие подобных поселений требует особого внимания. Общественные дискуссии по этому особо важному вопросу недостаточно организованы. Отношение общества и политические интересы к проблеме не всегда были адекватными, что в значительной степени определяет важность и актуальность проблемы.

Подобный взгляд и недостаточный интерес к национальным меньшинствам обусловлены чувствительностью проблемы, поскольку опыт этнорегиональных конфликтов 1990-х годов и разрушительные последствия этих конфликтов все еще видны. Именно по этим причинам большая часть грузинского общества с осторожностью подходит к проблеме этнических меньшинств. Однако следует отметить, что в последние годы постепенно возрастает интерес к проблеме национальных меньшинств и гражданской интеграции.

### **Проблемы этнических меньшинств Грузии в период правления первого президента Звиада Гамсахурдии**

Благодаря своему привлекательному стратегическому положению Грузия с незапамятных времен находилась в зоне интенсивной миграции. Страна также была одним из ключевых направлений знаменитого «Шелкового пути». Естественно, что миграционные процессы были особенно активными между Грузией и соседними регионами. В Грузии обосновались представители различных кавказских этнических групп, а также отдельные группы с Ближнего

Востока.

Одним из главных вызовов для развития грузинского государства и грузинской демократии стала полная интеграция этнических меньшинств в гражданскую, социальную и политическую жизнь.

Несмотря на то, что за последнее десятилетие было много новых инициатив и проектов в этом направлении, существенного прогресса достигнуто не было. Причиной тому являлся низкий уровень вовлеченности этнических меньшинств в общественную жизнь постсоветской Грузии. Это особенно заметно, когда речь идет об участии меньшинств в политической жизни, их представительстве в избирательных и государственных органах.

Между тем, интересы грузинского государства заключаются в построении либеральной демократии, при которой должны быть созданы все условия для обеспечения мирного сосуществования различных этнических групп в стране, чтобы права ни одной из групп не были ущемлены. Ведь одним из факторов, препятствующих международным стандартам, построению демократического и стабильного государства, является низкий уровень интеграции национальных меньшинств в гражданскую и политическую жизнь.

В то же время этнические меньшинства, проживающие в Грузии, до сих пор мало интегрированы в грузинское государство, а большинство из них изолированы от грузинского общества. Среди различных причин языковой барьер играет ведущую роль. Большинство этнически негрузинского населения, проживающего в разных местах, не знают государственного языка. В советское время

основным средством общения был русский язык, который значительно потерял свои позиции в последние годы после распада Советского Союза. Следовательно, национальные меньшинства не были полностью информированы о социальных, политических и экономических процессах, происходящих в стране. Даже присутствие представителей этнических меньшинств в высшем законодательном органе носило формальный, а не основной характер.

Другим определяющим фактором слабой политической вовлеченности была пассивность политических партий. В сфере интересов последних были в меньшей степени представлены этнические меньшинства, а также содействие их интеграции. Они включали в свои партийные программы важные для национальных меньшинств вопросы, но не уделяли им серьезного внимания или вообще игнорировали эти проблемы. При всех его противоречивых аспектах, период правления первого президента Грузии Звиада Гамсахурдии (1991-1992 трудно оценить), но его можно рассматривать как начальный этап грузинской государственности и демократизации. Поскольку правление Гамсахурдии длилось очень недолго, было невозможно сформировать прочную политическую систему и сплотить общество вокруг нее. Международное признание государственной независимости, провозглашенной при Звиаде Гамсахурдии, наступило только тогда, когда он больше не был у власти. Возможно, ему не удалось разрушить советское политическое наследие за короткий период своего правления из-за отсутствия опыта политического управления.

По словам З. Гамсахурдии, следование требованиям

независимости Грузии вызывало опасения национальных меньшинств относительно (возможной) дискриминации, и они не приветствовали независимость Грузии. Этнонационалистическая риторика Гамсахурдии часто упоминалась как одна из ключевых причин этих опасений. Звиада Гамсахурдию часто обвиняют в формировании этнического отчуждения и раскола общества, предполагая, что он стремился систематизировать ультранационалистический лозунг «Грузия для грузин». По мнению политических аналитиков, основной причиной потери международной легитимности правления Гамсахурдии стал этнонационализм. Важно отметить, однако, что во времена З. Гамсахурдии не было (значительных) межэтнических конфликтов, за исключением отдельных случаев.

Окончательное обострение этноконфликтов произошло при Э. Шеварднадзе, когда в результате этноконфликтов с абхазами и осетинами исторические территории страны были отделены от юрисдикции Грузии. Подводя итог, мы можем констатировать, что насильственное свержение власти Гамсахурдии привело к негативным последствиям для Грузии: страна была втянута в международный хаос, из которого до сих пор не может окончательно выбраться.

### **«Демократическое» правление Эдуарда Шеварднадзе и «Революция роз»**

По мнению аналитиков так называемое фасадное демократическое правление Э. Шеварднадзе привнесло определенные элементы гражданского правления и смогло узаконить внешнюю политику страны. Этот факт является

адекватной реакцией на мировые политические изменения того времени, а не заслугой личных связей и авторитета Шеварднадзе<sup>1</sup>.

Этнические меньшинства больше официально не прислушивались к этнонационалистической риторике Шеварднадзе и практически оказались за пределами публичного политического пространства. Фактически, правление Шеварднадзе ничего не привнесла для гражданской интеграции, национальные меньшинства упоминались только в предвыборный период.. Ошибочно думать, что при Шеварднадзе межнациональные отношения были урегулированы, напротив, он еще больше их закрыл и отложил на будущее.

На фоне эйфории по поводу обретения Грузией независимости и националистической риторики некоторых политических групп ситуация в Квемо Картли обострилась. По мнению аналитиков<sup>2</sup>, этническая политика Шеварднадзе была настолько некомпетентной, что при нем население Джавахка не имело доступа к государственным пособиям. В этом отношении населению неоднократно помогала 62-я российская военная база, дислоцированная в Ахалкалаки, которая обеспечивала местные семьи средствами к существованию. Наличие военной базы рассматривалось местным армянским населением как гарантия защиты от

---

<sup>1</sup> ციციშვილი გიორგი, თანამედროვე სახელმწიფოს დემოკრატიული მახასიათებლები, თბილისი, 2021.

<sup>2</sup> კომახია მამუკა, აზერბაიჯანელები (თანამედროვე მდგომარეობა) ეთნოსები საქართველოში, თბილისი, 2008. კანდელაკი სალომე, ეთნიკური უმცირესობების ინტეგრაცია საქართველოში: პოლიტიკური ჩართულობის ბარიერები, პოლიტიკის დოკუმენტი №16, საქართველოს პოლიტიკის ინსტიტუტი. თბილისი, 2020.

соседней Турции. Поэтому любая попытка грузинского правительства закрыть базу встречала сопротивление местного населения.

С 1990-х годов в Самцхе-Джавахети действовали две самые влиятельные национальные организации – «Джавакх» и «Вирк», которые пользовались значительным влиянием и популярностью. Иногда выдвигалась идея этической автономии, хотя она не переросла в широкое сепаратистское движение. В результате ухода российской военной базы и прекращения правления Шеварднадзе их влияние значительно снизилось.

Что касается региона Квемо Картли, то в годы правления Эдуарда Шеварднадзе азербайджанская общественная организация «Geirati» пользовалась популярностью среди населения Марнеули и Болниси. Однако после революции роз «Geirati» почти полностью исчезла с политической арены. Центральные органы управления и правоохранные структуры приобрели полную монополию на процесс урегулирования конфликтов в регионе, а «Geirati» утратила функцию основного посредника<sup>3</sup>.

Политическое руководство, пришедшее к власти в результате «революции роз» 2003 года в лице Михаила Саакашвили, преследовало основную цель реформировать государство как институт и постепенно институционализировать его. Несмотря на то, что повсеместная коррупция было искоренена, политика (грузинских властей) и политические институты (Грузии) оставались все еще далеки от желаемых результатов.

---

<sup>3</sup> თოფჩიშვილი როლანდ, ქართველთა ეთნოგენეზისა და ეთნიკური ისტორიის პრობლემები. თბილისი, 2008.



Одним из критериев политической и гражданской активности и вовлеченности меньшинств в государственную жизнь является степень их участия в выборах. Однако представители меньшинств, проживающих в Грузии, часто рассматривают участие в выборах скорее как ритуал поддержки государства, а не как средство определения политических предпочтений. Об этом свидетельствуют случаи, когда параллельно со сменой правительства представители национального меньшинства безоговорочно переходили на сторону нового правительства.

Национальные меньшинства составляют довольно значительную часть населения Грузии, однако их участие в общественно-политической жизни страны остается крайне незначительным. С правовой точки зрения, с учетом законодательства Грузии и Европейской конвенции о защите меньшинств, для национальных меньшинств, проживающих в стране, созданы равные условия. Однако степень участия меньшинств в процессе принятия политических решений остается низкой. Действующая избирательная система не может предложить национальным меньшинствам полную реализацию их политической активности, что само по себе обуславливает низкий уровень политической активности национальных меньшинств<sup>4</sup>.

Если говорить о политических и гражданских проблемах армянского и азербайджанского меньшинств, то на первый план выходят незнание государственного языка, отсутствие гражданского образования и недостаточная политическая

---

<sup>4</sup> კახიშვილი ლევან, კონკურენცია ეთნიკური უმცირესობების ხმებისთვის საქართველოში, 2017 წლის ადგილობრივი არჩევნები, პოლიტიკური ნარკვევი, თბილისი 2018.

вовлеченность. Этот комплекс проблем, в свою очередь, определяет их низкую активность и представленность в политических и гражданских процессах.

После 1990-х годов политико-культурное поле в стране изменилось в лучшую сторону, хотя проблемы, связанные с интеграцией национальных меньшинств, все еще существуют. Состав представительных структур страны и, конечно, качество демократии определяются типом и спецификой избирательной системы. Поэтому формирование оптимальной избирательной системы является одним из решающих факторов для обеспечения полноценного участия армянского и азербайджанского населения в политической жизни страны и устранения проблем, связанных с интеграцией.

На сегодняшний день избирательная система Грузии включает в себя определенный механизм для увеличения представительства национальных меньшинств. Центральная избирательная комиссия обеспечивает обучение членов окружной избирательной комиссии, представляющих национальные меньшинства, избирательным процедурам, переводу избирательных документов, подготовке информационных и рекламных видеороликов на армянском и азербайджанском языках.

Права человека, включая защиту прав меньшинств, являются одной из основных ценностей Европейского союза. Обеспечение надлежащего управления и уважение демократических принципов является одним из предварительных условий для формирования развитого государства, поэтому его следует учитывать, как отмечают

ანალიტიკის<sup>5</sup>.

Принимая во внимание основные ценности Европейского союза, правительство Грузии разработало стратегический план по решению проблем национальных меньшинств, который должен обеспечить гражданское равенство и интеграцию (меньшинств), независимо от их этнического происхождения, и внести вклад в экономическое развитие страны. Например, перевод документов, связанных с выборами, предоставление образовательных материалов и обучение на языках, доступных для меньшинств, способствуют развитию электоральной культуры этнических меньшинств, проживающих в приграничных регионах. Однако только наличие предвыборных брошюр и буклетов на их родном языке недостаточно для обеспечения их полноценного участия в политической жизни. На выборах 2008 года из 1 767 кандидатов, участвовавших в партийных списках, только 24 были азербайджанцами, 16 – армянами.

На выборах 2012 года коалиция «Грузинская мечта» включила в свой партийный список 9 представителей национальных меньшинств. Однако в 72-страничной предвыборной программе лишь один подраздел был посвящен теме «Гражданская интеграция и защита прав национальных меньшинств». Можно сказать, что в отсутствие конкретной кампании, адаптированной к интересам национальных меньшинств, оппозиционная партия не пыталась привлечь голоса национальных

---

<sup>5</sup> მარგველაშვილი ქრისტინე, წიკლაური ანა, საარჩევნო სისტემები და ეროვნული უმცირესობები. ეროვნული უმცირესობების ინტეგრაცია საქართველოში - პოლიტიკის ნარკვევები - 2017.

меньшинств. Все это подчеркивает тенденцию, что тема национальных меньшинств не является приоритетной для политических партий. Многие международные организации считают неизбежной реформу избирательной системы в Грузии, поскольку принимают смешанную избирательную систему как историческую реликвию, утверждают эксперты<sup>6</sup>.

Эволюция избирательных систем независимой Грузии имеет недолгую историю. Основой для первых свободных выборов послужил «регламент выборов в Учредительное собрание», принятый парламентом Республики Грузия 22 ноября 1918 года, который предусматривал избрание 130 членов (по партийным спискам) всеобщим, равным и тайным голосованием по пропорциональной избирательной системе. Выборы в органы местного самоуправления, состоявшиеся в 1918 году, были демократическими, свободными и многопартийными. В них приняли участие как партийные, так и беспартийные независимые кандидаты.<sup>7</sup>

Создание идеальной избирательной системы является довольно сложной задачей. Грузинская политическая элита стоит перед выбором, однако важно, чтобы при выборе избирательной системы учитывались и в равной степени защищались права всех граждан Грузии.

---

<sup>6</sup> მარგველაშვილი ქრისტინე, წიკლაური ანა, საარჩევნო სისტემები და ეროვნული უმცირესობები. ეროვნული უმცირესობების ინეგრაცია საქართველოში - პოლიტიკის ნარკვევები - 2017.

<sup>7</sup> საქართველოს დემოკრატიული რესპუბლიკის სამართლებრივი აქტების კრებული. 1918-1921. შემდგენელი ე. გურგენიძე. თბილისი, 1990, გვ.84. ირაკლი ხვადაგიანი. საქართველოს დამფუძნებელი კრება 1919. საბჭოთა წარსულის კვლევის ლაბორატორია. თბილისი, 2016.

Говоря о представленности национальных меньшинств, мы должны сосредоточиться на местном самоуправлении. Практика победы на выборах представителей в регионах, населенных меньшинствами, показывает, что они испытывают определенное чувство безопасности, выражая доверие к власти и желая сохранить статус-кво. Что касается степени участия национальных меньшинств в парламентской жизни, то она всегда была минимальной. Их роль в инициировании проблемы на национальном уровне и участии в процессе принятия решений незначительна. Многие из них никогда не появлялись на заседаниях парламента по той простой причине, что не знают грузинского языка – единственного языка, на котором работает парламент Грузии. Их участие во встречах было и остается скорее формальным, чем практическим. Их присутствие в высших избирательных органах формально подтверждает участие национальных меньшинств в политической жизни, но не более того.

Например, в парламенте созыва 1992-1995 годов было 235 депутатов, из которых 6 депутатов представляли национальные меньшинства: 2 армянина, 1 абхаз, 1 грек, 1 еврей и 1 русский. В парламенте созыва 1995-1999 годов было 235 депутатов, 18 из которых представляли национальные меньшинства: 5 армян, 5 азербайджанцев, 3 русских, 1 осетин, 1 абхаз, 1 грек, 1 грузинский еврей и 1 курд/езди. В 1999-2004 годах 17 из 235 депутатов были из национальных меньшинств: 7 армян, 6 азербайджанцев, 2 абхаза и 2 грузинских еврея. Согласно результатам всеобщей переписи населения 2002 года, доля национальных меньшинств в Грузии составляла 16,25%, а

их доля в парламенте 2004-2008 годов составляла 4,7%. 11 из 235 депутатов представляли национальные меньшинства: 5 армян, 3 азербайджанца, 2 грузинских еврея и 1 осетин. В 2008-2012 созыв парламента, 6 из 150 депутатов представляли национальные меньшинства: 3 армянина, 3 азербайджанца. В 2012-2016, 8 из 150 депутатов были из национальных меньшинств: 3 армянина, 3 азербайджанца, 1 осетин и 1 курдский езид. Их доля в парламенте созыва 2016-2020 годов составляет 7,3%: 11 из 150 депутатов представляют этнические меньшинства: 4 азербайджанца, 3 армянина, 2 абхаза, 1 курд/езиди и 1 осетин<sup>8</sup>.

Если мы сравним политическую деятельность армян и азербайджанцев, то увидим, что в случае Ахалкалакского и Ниноцминдского муниципалитетов управление полностью доверено представителям местной армянской этнической группы. Они занимают посты мэра, заместителя мэра или другие ключевые должности. В свою очередь, в муниципалитетах Квемо Картли этнические азербайджанцы никогда не занимали пост мэра.

Незнание государственного языка большей частью населения Самцхе-Джаваха и Квемо Картли является одной из важнейших проблем. Это препятствует реальному участию меньшинств в политической и гражданской жизни, а также снижает их шансы на успех. Представители меньшинств в таких регионах плохо информированы о политической жизни. Они сталкиваются с дополнительными трудностями в отношениях с государственными органами и

---

<sup>8</sup> მარიამ ცეცხლაძე, ეთნიკური უმცირესობების როლი პოსტსაბჭოთა პერიოდის საქართველოს საზოგადოებრივ-პოლიტიკურ ცხოვრებაში, ბათუმი 2022.

чувствуют себя отчужденными от большинства. С другой стороны, незнание грузинского языка вызывает раздражение и недоверие грузинского населения, что приводит к подозрениям недостаточной лояльности представителей меньшинств к грузинскому государству.

В отличие от армян, живущих в Джавахке, которые интересуются политическими вопросами, азербайджанцы, живущие в Квемо Каргли, в основном ограничиваются экономическими проблемами. Их главной заботой является вопрос распределения земель, поскольку основным источником дохода азербайджанской общины является сельское хозяйство.

На основании вышеизложенного, азербайджанцев и армян, проживающих на территории Грузии, отличаются друг от друга. Однако обе этнические группы, в основном, обращаются к грузинскому правительству из-за социально-экономических проблем, не обращая внимание на то, что они подвергаются дискриминации из-за своей этнической принадлежности. Несмотря на добрососедские отношения, существующие между грузинами и национальными меньшинствами, они не могут считаться достаточными для интеграции на общественно-политическом уровне и формирования общих интересов.

Таким образом, можно заключить, что разные правительства постсоветской Грузии по-разному относились к национальным меньшинствам. При Звиаде Гамсахурдиа, в период новой независимой Грузии, произошли значительные изменения в подходах и риторике, связанных с этнонационалистическими вопросами. Под руководством Эдуарда Шеварднадзе относительно мультикультурный

подход к меньшинствам оставался скорее формальным, чем содержательным. В свою очередь, правительство Михаила Саакашвили, несмотря на определенные позитивные шаги, не достигло желаемых результатов в отношении различных социальных групп общества. Политику «Грузинской мечты» в отношении национальных меньшинств можно рассматривать на формальном уровне как прогрессивные усилия, но в действительности она мало что изменила. Даже сегодня этнические меньшинства не полностью интегрированы в грузинское общество. В теории государство продолжает поддерживать этнические меньшинства, но в реальности это скорее символическое, чем практическое действие.

## ЛИТЕРАТУРА

**გურგენიძე ე.** 1990, საქართველოს დემოკრატიული რესპუბლიკის სამართლებრივი აქტების კრებული. 1918-1921, თბილისი, გვ.84.

**თოფჩიშვილი რ.** 2008, ქართველთა ეთნოგენეზისა და ეთნიკური ისტორიის პრობლემები, თბილისი, გვ. 240.

**ხვადაგიანი ი.** 2016, საქართველოს დამფუძნებელი კრება 1919. საბჭოთა წარსულის კვლევის ლაბორატორია. თბილისი, გვ. 554.

**კახიშვილი ლ,** 2018, კონკურენცია ეთნიკური უმცირესობების ხმებისთვის საქართველოში, 2017 წლის ადგილობრივი არჩევნები, პოლიტიკური ნარკვევი, თბილისი, გვ. 30.

**კანდელაკი ს,** 2020, ეთნიკური უმცირესობების ინტეგრაცია საქართველოში: პოლიტიკური ჩართულობის ბარიერები, პოლიტიკის დოკუმენტი №16, თბილისი, გვ.40.





րականում ավելի շատ խորհրդանշական բնույթ ունի, քան գործնական:

**Բանալի բառեր՝** Հետխորհրդային Վրաստան, ազգային փոքրամասնություն, կառավարություն, սահմանային շրջան, վրացական բնակչություն, վրացական ժողովրդավարություն, խորհրդային Միություն, կուսակցական ծրագրեր, անձնական կապեր, Բվեմո Բարթի:

**Jenni L. Tamaryan, *Institute of History of the NAS RA, Junior Researcher, The attitude of the Georgian authorities towards ethnic minorities in the context of new post-Soviet realities***

### Summary

The article presents the years of post-Soviet governance of Georgia. As a multi-ethnic state with a large number of ethnic minorities, Georgia has not yet been able to meet the needs of the latter. Despite good-neighbourly relations between Georgians and national minorities, their integration into Georgian social and political life is not complete even today. In theory, the state continues to support ethnic minorities, but in reality this is more symbolic than practical.

**Key words:** Post-Soviet Georgia, ethnic minority, government, border region, Georgian population, Georgian democracy, Soviet Union, party programmes, personal ties, Kvemo Kartli.

**ՄՀԵՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

*ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ.գ.թ., դոցենտ*

*hamher@yandex.ru*

ID: 0000-0002-0719-8860

DOI:10.59523/1829-4596.2024.1(28)-147

**2016 Թ. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՐՇԱՎԻՑ ՀԵՏՈ  
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԲԱՆԱԿՈՒՄ ՁԵՌՆԱՐԿՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ\***

**Բանալի բառեր՝** Արցախի Հանրապետություն, պաշտպանության բանակ, շտաբ, ռազմարշավ, անձնակազմ, ռազմաճակատ, ագրեսիա

**Ներածություն**

2016 թ. գարնանային ռազմարշավում<sup>1</sup> Արցախի Հանրապետության(ԱՀ) պաշտպանության բանակի (ՊԲ) համառ դիմադրության շնորհիվ հաջողվեց ձախողել

---

\* Ներկայացվել է 21.II.2024 թ., գրախոսվել է 25.II.2024 թ., ընդունվել է տպագրության 07.VI.2024 թ.:

<sup>1</sup> 2016, 2020 և 2023 թվականների ռազմական գործողությունների տերմինաբանության քննությունը ներկայացրել ենք 2023 թ. դեկտեմբերի 4-5-ը ԵՊՀ կազմակերպած «Պատմության կեղծարարություն և իրականություն» թեմայով գիտաժողովում: Մեր «Արցախի Հանրապետության պաշտպանության բանակի նորոյա պատմության խեղաթյուրումների մասին» զեկուցման հիման վրա շարադրված գիտական հոդվածը տպագրության ընթացքում է:

ագրեսիան վերսկսած Ադրբեջանի զինված ուժերի (ՀՈՒ) ստրատեգիական պլանները: Սակայն, ԱՀ ՊԲ կազմակերպական, ղեկավարման, մարտավարության, մարտական պատրաստության և այլ ասպարեզներում ակնհայտ դարձան մի շարք թերություններ ու բացթողումներ: Այս հարցերը ՀՈՒ ղեկավար մարմինների ու անմիջական պատասխանատուների առանձնահատուկ քննարկման նյութ դարձան, ինչի արդյունքում վերլուծվեցին 2016 թ. ռազմարշավի արդյունքները և կազմվեց թերությունների վերացման պլան: Այդ բովանդակությամբ փաստաթղթերը հույժ գաղտնի ծածկագրի տակ են կամ ոչնչացվել են 2023 թ. սեպտեմբերին:

Հակառակորդը 2016 թ. գարնանային ռազմարշավում ակամա բացահայտեց ԱՀ-ը զավթելու իր նպատակի իրականացման ստրատեգիական պլանի որոշ էական մանրամասներ: Մասնավորապես, բացահայտվեցին Ադրբեջանի ՀՈՒ ստրատեգիական հարձակման գլխավոր՝ Հարավային (Ջրական) և Հյուսիսային (Թալիշ-Մատաղիս) ուղղությունները: Բացի այդ, 2016-ից հետո Թուրքիայի ռազմական մասնագետների և կենդանի ուժի ու սպառազինության ներգրավմամբ ինտենսիվ զորավարժությունների ընթացքում ակնհայտ դարձավ, որ ադրբեջանաթուրքական հրամանատարությունը նախապատրաստվում է ժամանակակից տեխնոլոգիաների ու ՆԱՏՕ-ական մարտավարության կիրառմամբ ԱՀ ՀՈՒ-ի նկատմամբ անհամադրելի առավելության հասնել:

Սակայն, 2020 թ. աշնանային ագրեսիային ԱՀ ՊԲ-ի անբավարար պատրաստ լինելը և վերոնշյալ ու այլ ակնհայտ ազդակների անտեսմամբ վերահաս սպառնալիքները չկանխելը, ինչպես նաև այլ լրացուցիչ փաստեր հիմք են տալիս կասկածի տակ դնելու 2016 թ. գարնանային ռազմարշավի վերլուծության ու համապատասխան հետևությունների թելադրանքով ԱՀ ՊԲ-ում ձեռնարկված միջոցների արդյունավետությունը: Կասկածելու հիմքերի ստուգման և բարձրացված հիմնահարցի ուսումնասիրման աղբյուրագիտական ատաղձը կազմել են «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում պահվող վավերագրերը<sup>2</sup>, ԱՀ ՊՆ «Մարտիկ»<sup>3</sup> և ՀՀ ԶՈՒ «Հայ զինվոր»<sup>4</sup> պաշտոնաթերթերի հրապարակումները, 2016 թ. իրադարձություններին էլեկտրոնային ու տպագիր ԶՏՄ-ների անդրադարձները<sup>5</sup>, թեմային վերաբերող գրականության<sup>6</sup> սուղ տեղեկությունները:

## **Մարտական պատրաստությունը նոր իրադրությունում ԱՀ ՊԲ զինծառայողներին ԱՀ պաշտպանության**

---

<sup>2</sup> «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), ֆ. 9, գ. 12, թթ. 1-75:

<sup>3</sup> Մարտիկ. № 13, 15-16, 17-18:

<sup>4</sup> Հայ զինվոր. № 13, 17:

<sup>5</sup> **Մենեժյան.** 2018, 103-110: **Տեր-Աբրահամյան** 2019:

<sup>6</sup> Հայաստան-2016. չսերտած դասեր. 2016, 16-35, 55-86: **Խաչատրյան.** 2016, մաս I, № 4, 104-115, մաս II, № 5, 114-117, մաս III, № 6, 108-116: **Մինասյան.** 2016, № 4: **Հասրաթյան.** 2017: **Հովհաննիսյան.** 2017, 448-464: **Макиенко.** 2018, 155-168. **Հարությունյան.** 2021, 167-172:

նախարար-պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լ. Մնացականյանի<sup>7</sup> 2016 թ. մայիսի 1-ի կոչում կարևոր մի շեշտադրում կա, որը կարող է հիմք դառնալ 2016 թ. գարնային ռազմարշավը «քառօրյա պատերազմ» համարելու սխալը սրբագրելու համար: Այդ փաստաթղթում արձանագրված է հետևյալը. «Հակառակորդի կողմից մեզ վերստին պարտադրված պատերազմը չի ավարտվել, ռազմաճակատային հաղորդագրությունները վկայում են, որ թշնամին դեռ գլխովին ջախջախված չէ»<sup>8</sup>: Նշվածը հաստատվում է նաև 2016 թ. մայիսի 19-ի թվակիր մեկ այլ վավերագրում. «Ակտիվ մարտական գործողություններից ավելի քան մեկ ամիս անց օպերատիվ իրադրությունն առաջնագծում մնում է լարված, հակառակորդն անընդհատ խախտում է հրադարի վերաբերյալ բանավոր պայմանավորվածությունը: Ներկայումս ՊԲ-ի՝ ըստ պատերազմական ժամանակի հաստիքների համալրված ստորաբաժանումներն իրականացնում են և՛ մարտական հերթապահություն, և՛ հուսալի դիրքային պաշտպանություն: Ակտիվ մարտական գործողությունների ավարտից հետո հակառակորդը դիրքերի ինժեներական կահավորման լայնածավալ աշխատանքներ է իրականացնում»<sup>9</sup>: Մյուս կողմից,

---

<sup>7</sup> Լ. Մնացականյանը 2023 թ. սեպտեմբերի 29-ին Ադրբեյջանի հատուկ ծառայությունների կողմից Արցախի տարածքում ձերբակալվել է և առ այսօր բանտարկված է Բաքվում:

<sup>8</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

<sup>9</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 63:

հատկանշելի է, որ վերոհիշյալ կոչից մեջբերման շարունակության մեջ ճիշտ հետևություն է արված. «Մշտապես պետք է հիշել, որ մեր ոխերիմ թշնամին անընդհատ մտմտում է լայնածավալ գործողություններ սկսել և պետք է պատրաստ լինենք դարձյալ հակահարված հասցնելու ագրեսորներին»<sup>10</sup>: Սա կարելի է նաև ընդունել որպես ԱՀ ՊԲ հրամանատարական կազմի կատարմանը ներկայացված ուղենշող-ղեկավար փաստաթուղթ՝ օպերատիվ-մարտավարական նոր իրադրությանը համապատասխան մարտական պատրաստությունը կազմակերպելու համար:

Լ. Մնացականյանը բարձր է գնահատել ԱՀ ՊԲ մարտունակությունը. «Հիմա մեր բանակը,- մասնավորապես նշել է նա,- մարտական բարձր պատրաստականությանմբ, խոր շարակարգված պաշտպանական բնագծերում ամրացած, բավարար սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով, հմտավարժ ռազմական մասնագետներով համալրված, պատրաստ է այնպիսի հուժկու և ջախջախիչ հակահարված հասցնել լկտիացած թշնամուն, որ դրանից նա այլևս երբեք ուշքի գալ չկարողանա»<sup>11</sup>:

2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ՊԲ մարտունակության վերաբերյալ գաղտնագերծված փաստաթղթերում բավարար տեղեկություններ չկան: Սա-

---

<sup>10</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

<sup>11</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

կայն, Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարության կողմից զինադադարի վերաբերյալ ՌԴ առաջարկին համաձայնելը և հակառակորդի համագորային զորքերի հարձակողական գործողությունների մեկնարկային թափը կորցնելը, մտածել են տալիս, որ ինտենսիվ մարտական գործողությունների արդյունքներից ելնելով ադրբեջանական հրամանատարությունն անբավարար է համարել հաղթանակի հասնելու հնարավորությունները:

2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ԱՀ ՋՈՒ-ում ձեռնարկված միջոցների գաղափարական հիմնավորման մասին որոշակի պատկերացում են տալիս ԱՀ ՊԲ հրամանատարի վերոհիշյալ կոչի հետևալ տողերը. «Առաջնագծի ամրակառույցների մշտական կատարելագործման ու զինծառայողների անհատական պաշտպանության հնարավորությունների ընդլայնման<sup>12</sup> միջոցով կարող ենք հաջողությամբ մարտ վարել՝ միևնույն ժամանակ խուսափելով անհարկի կորուստներից»<sup>13</sup>: Անշուշտ, յուրաքանչյուր պետության ՋՈՒ-ի վերջնանպատակն արտաքին ագրեսիայից երկիրը պաշտպանելն է նաև թշնամուն գլխովին ու վերջնականապես

---

<sup>12</sup> 2020 թ. աշնանային ռազմարշավի փորձը ցույց տվեց, որ 2016 թ. ի վեր ՊԲ առաջնագծում իրականացված ամրաշինական աշխատանքները ակնհայտորեն անբավար էին և ամենևին հուսալի չէին Ադրբեջանի՝ հիմնականում անթաքույց ձեռք բերած ժամանակակից հարձակողական, գերճշգրիտ զենքերի ու հարվածային անօդաչու թռչող ապարատների (ԱԹԱ), թափառող արկերի ու հեռահար հրթիռների ավերիչ ուժի դիմաց:

<sup>13</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:



ջախջախելու միջոցով: Այս տեսակետից ՊԲ նախկին հրամանատարի հետևյալ խոսքերը թեև արտառոց չեն, բայց իրականացնելու հնարավորությունների և բավարար ներուժի առումներով կասկածելի են: Լ. Մնացականյանը գտնում էր, որ «Ժամկետային զինծառայողների, մեր քաջարի սպաների ու կամավորական-ազատամարտիկների, մեր փառապանծ հրետանավորների, տանկիստների, հակաօդայինների, սակրավորների, մյուս զորատեսակների և, իհարկե, մեր առյուծասիրտ հետևակայինների ներդաշնակ գործողությունների արդյունքում թշնամին կջախջախվի գլխովին ու վերջնականապես»<sup>14</sup>: ՊԲ հրամանատարի այդ ինքնավստահության հիմքը ԱՀ ՊԲ անձնակազմի մարտավարամասնագիտական ու բարոյահոգեբանական որակներն էին. «Դա հնարավոր է, - գտնում էր նա, - յուրաքանչյուր մարտիկի ու հրամանատարի մարտավարական ունակությունների, համակողմանի մասնագիտական պատրաստականության ամենօրյա ու հետևողական կատարելագործման շնորհիվ»<sup>15</sup>:

Ընդ որում, ԱՀ ՊԲ անձնակազմի բարոյահոգեբանական ու մարտավարամասնագիտական որակների մասին Լ. Մնացականյանի համոզմունքը հիմնված էր նաև 1991-1994 թթ. պատերազմական գործողությունների արդյունքների և հակամարտ կողմերի ուժերի հարաբե-

---

<sup>14</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

<sup>15</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 26:

րակցության համադրության վրա: Այդ են վկայում ԱՀ ՊԲ միավորումների ու զորամասերի հրամանատարների համար նախատեսված վերլուծական նյութի հետևյալ տողերը. «Բոլոր հաշվարկները կառուցելով ժամանակակից սպառազինության կիրառման և հարձակման անսպասելիության վրա՝ հակառակորդը հույս ուներ էական հաջողության հասնելու, սակայն, ապարդյուն, որովհետև ինչպես 1991-1994 թթ., այնպես էլ 2016-ի ապրիլի սկզբին հաշվի չի առել հայ զինվորի բարձր բարոյամարտական ոգին, ամենաանելանելի իրավիճակում անգամ համախմբվելու և անօրինակ սխրագործության դիմելու նրա ընդունակությունը, սահման պաշտպանող զինվորի կողքին կանգնելու համաժողովրդական պատրաստակամությունը ու այլ հատկություններ, որոնց շնորհիվ ՊԲ նշված զորամասերի մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանումների մարտիկները կարողացել են անհավասար պաշտպանական մարտերում կասեցնել հակառակորդի հարձակումը, նրան պատճառել կենդանի ուժի և սպառազինության ու ռազմական տեխնիկայի զգալի կորուստներ»<sup>16</sup>:

Հարկ է նշել, որ 2016 թ. գարնանային ռազմարշավում Ադրբեջանի ՋՈՒ-ում փորձարկվել է հոգեմետ դեղամիջոցներով անձնակազմի բարոյահոգեբանական վիճակը բարձրացնելու հնարավորությունը և, դատելով այն փաստից, որ նույնը 2020 թ. աշնանը զանգվածաբար

---

<sup>16</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 62:

կիրառվել է Ադրբեջանի ՋՈՒ -ում, հատկապես հատուկ նախանշանակման ստորաբաժանումներում և ԱՀ ՊԲ առաջնագիծը գրոհող վարձկանների ու այլ ուժերի խմբերում<sup>17</sup>, կարելի է եզրակացնել, որ այդ փորձարկման արդյունքները, ըստ երևույթին, գոհացրել են ագրեսոր երկրի ռազմաքաղաքական ղեկավարությանը: Ցավալիին այն է, որ ԱՀ ՊԲ հրամանատարությունն, ըստ երևույթին, անտեսել է հակառակորդի բարոյահոգեբանական վիճակը արհեստականորեն բարձրացնելու հնարավորությունը: Մյուս կողմից, 1994 թ. զինադադարից հետո Ադրբեջանի ամբողջ հասարակությունը, պետական քարոզչամեքենայի նպատակաուղղված գործունեության հետևանքով, թունավորվել ու ատելությամբ է լցվել ամեն հայկականի ու հայ ժողովրդի նկատմամբ: Հայաստյացությունը, հակահայկական քարոզչությունը և ապատեղեկատվությունը (կեղծարարությունը) Ադրբեջանում պետական քաղաքականության անբաժանելի բաղադրամասերն են առայսօր<sup>18</sup>:

---

<sup>17</sup> Սիրիացի վարձկանների ցուցմունքների համաձայն՝ Ադրբեջանը վախի դեմ դեղահաբեր է բաժանել գրոհայիններին/ <https://armenpress.am/arm/news/1034060> (ներբեռնումը՝ 10.02.2024 թ.), По показаниям сирийских наемников, Азербайджан раздавал боевикам психотропные вещества/ <https://armenpress.am/rus/news/1034060> (дата обращения: 10.02.2024 г.), Манукян В., Азербайджан подсел на наркотики (2021-08-14 12:04)/ <https://www.golosarmenii.am/article/126280/podsel-na-narkotiki> (дата обращения: 10.02.2024 г.).

<sup>18</sup> Армянофобия в Азербайджане (исследование проведено с августа 2022 года по февраль 2023 года) <https://www.luys.am/img/artpic/small/c-75ff2c8e4-ab023614e4%D0%90%D1%80%D0%BC%D1%8F%D0%BD%D0%BE%D1%84%D0%BE%D0%B1%D0%B8%D1%8F%D0%B2%D0%90%D0%B7%D0%B5%D1%>

Այս ամենին հավուր պատշաճի չվերաբերվելով ու համապատասխան բավարար միջոցներ չձեռնարկելով՝ ԱՀ ՊԲ հրամանատարությունը, մինչև անգամ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը շարունակել են ՁՈՒ մարտավարության ու ռազմավարության բարոյահոգեբանական ապահովման ասպարեզում հույսը դնել անձնակազմի բարոյահոգեբանական պատրաստության ու ռազմահայրենասիրական դաստիարակության շնորհիվ նրա ձեռքբերած մարտական ոգու վրա. «Քառօրյա մարտերի ընթացքում, - գրել է ԱՀ ՊԲ հրամանատարը,- հայ մարտիկները ցուցաբերել են զանգվածային հերոսություն, ամուր կամք, մինչև վերջին փամփուշտը կռվելու և հակառակորդին հաղթելու վճռականություն: Հայ զինվորին բնորոշ որակները՝ անձնական խիզախությունը, վստահված սպառազինությանն ու ռազմական տեխնիկային հիանալիորեն տիրապետելն ու հարկ եղած դեպքում այն հնարամտորեն, ստեղծագործաբար կիրառելը, հրամանատարական կազմի արհեստավարժությունն ու մասնագիտական գիտելիքները հնարավորություն են տվել արդեն մարտերի սկզբնական փուլում ձախողել հակառակորդի բոլոր հաշվարկները»<sup>19</sup>:

Իհարկե, արդեն 2020 թ. աշնանային ռազմարշավում ԱՀ ՊԲ անձնակազմի և ՀՀ-ից օգնության հասած կա-

---

80%D0%B1%D0%B0%D0%B8%CC%86%D0%B4%D0%B6%D0%B0%D0%BD%D0%B5.pdf (дата обращения: 10.02.2024 г.).

<sup>19</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 62:

մավորականների օժտվածությունը վերոհիշյալ որակական հատկանիշներով օգնել է միառժամանակ հաջողությամբ կասեցնել Ադրբեջանի գերակշռող կենդանի ու միջոցների ագրեսիան, սակայն, դժբախտաբար, բավարար չի եղել, այլ գործոնների բացակայության պայմաններում, բեկում մտցնելու պատերազմական գործողությունների մեջ և թշնամուց խլելու ռազմական նախաձեռնությունը:

### **Հակառակորդի նախապատրաստությունների թերագնահատումը**

2014 թ. մինչև 2016 թ. ապրիլի 1-ը (ըստ ՀՀ և ԱՀ ՊՆ ներկայացուցիչների՝ մամուլում շրջանառված հաղորդումների) Ադրբեջանի ՁՈՒ-ն իր դիվերսիոն-հետախուզական խմբերին մարտական կիրառման նպատակով ներգրավել է առնվազն 150 դիվերսիոն ներթափանցման փորձերի՝ գործի դնելով ականանետային, հրետանային և այլ միջոցներ: Դրանք, փաստորեն, լայնամասշտաբ պատերազմական գործողությունների նախապատրաստություններ էին, որոնք ԱՀ ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմական ղեկավարության համարժեք գնահատականին չարժանացան: 2016 թ. գարնանային ռազմարշավի հետևանքների լույսի ներքո կարելի է կարծել, որ նաև անհրաժեշտ հետևություններ չկատարվեցին, իսկ ձեռնարկված միջոցները երբեմն ցուցադրական ու խիստ անբավարար էին, ինչն ակնհայտ դարձավ 2020

թ. սեպտեմբերի 27-ին թշնամու սանձազերծած լայնամասշտաբ ռազմական գործողությունների ընթացքում, երբ արտակարգ (պատերազմական) իրավիճակում պետական կառավարման համակարգն անկարող գտնվեց պետությունը տեղափոխել ռազմական ռելսերի վրա, իսկ հրամկազմի գործողությունները, երբեմն նաև կաշկանդված լինելով քաղաքական իշխանությունների սխալներով, արդյունավետ չէին, ունեին կազմակերպական ու մարտավարական լուրջ թերություններ, որոնք բացասաբար էին անդրադառնում ռազմաճակատում մարտական խնդիրներ կատարող ստորաբաժանումների և ըստ իրադրության սեփական նախաձեռնությամբ մարտեր վարող անձնակազմերի մարտունակության վրա<sup>20</sup>:

1994-2016 թթ. թշնամու պարտադրած դիվերսիոն-հետախուզական և դիպուկահարային պատերազմին հայկական կողմը հակադարձել է համարժեք գործողություններով՝ ձգտելով անպատասխան չթողնել նշված սադրիչ արտագրոհները: Որպես կանոն կիրառվել են նաև պատժիչ կամ վրիժառության գործողություններ ինչպես դիպուկահարների, այնպես էլ դիվերսիոն-հետախուզական խմբերի հատուկ օպերացիաների կիրառմամբ: Դրանց ռազմավարությունը կարծես թե թշնամուն իր թվական ու ռազմատեխնիկական գերազանցության միջոցով կոշտ ուժի կիրառման և դրանով

---

<sup>20</sup> Հարությունյան. 2021, 167-168:

քաղաքական հարցերը լուծելու հնարավորության անհեռանկարայնության մեջ համոզելն էր<sup>21</sup>:

### **ԱՀ ՊԲ անձնակազմի մարտական ու ոչ մարտական կորուստները**

Ռազմաճակատի մի քանի հատվածներում լարված մարտական հեթապահություն կրելը, առավել ևս հակառակորդի խաբուսիկ հանգստությունը 2016 թ. և դրանից հետո երբեմն պատճառ են դարձել ԱՀ ՊԲ որոշ զինճառայողների զգոնության թուլացմանը, առաջացրել անտարբերություն, ձևական վերաբերմունք ճառայողական պարտականությունների կատարման հանդեպ: Այդ ամենը հանգեցրել է անվտանգության և զենքի օգտագործման կանոնների խախտումների, հրամանատարության կողմից վերահսկողության թուլացման, ինչի հետևանքով եղել են անտեղի կորուստներ: 2016 թ. ապրիլի 7-ից մինչև մայիսի 19-ը ԱՀ ՊԲ-ն ունեցել է տասնյոթ զինճառայողի կորուստ: Նրանցից երեքը զոհվել են հակառակորդի հրետանու կրակի, երեքը՝ զենքի օգտագործման կանոնների խախտման, մեկը՝ տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության կանոնների խախտման, իսկ տասներեքը՝ հակառակորդի կողմից խոցվելու հետևանքով:

Լ. Մնացականյանի վերոհիշյալ վերլուծական նյութում անչափ մտահոգիչ, սխալ ու անչափ վտանգավոր մոտե-

---

<sup>21</sup> Հարությունյան. 2021, 167-169:

ցում է համարվել սեփական կորուստների ընկալման հոգեբանության փոփոխությունը: Եթե նախկինում հակառակորդի կողմից ԱՀ ՊԲ զինծառայողի յուրաքանչյուր խոցման դեպք համարվում էր իր տեսակի մեջ բացառիկ արտակարգ պատահար, ապա հիմա հակառակորդի գնդակից զինծառայողի վիրավորվելու կամ զոհվելու փաստը հաճախ ընկալվում է որպես սովորական, ստեղծված իրավիճակում ինչ-որ առումով անխուսափելի երևույթ:

Եթե 2016 թ. ապրիլի առաջին չորս օրերին ԱՀ ՊԲ կորուստները եղել են մարտադաշտում, արյունահեղ մարտերի ընթացքում, ապա հետագա կորուստներից հնարավոր էր և անհրաժեշտ էր խուսափել: Յուրաքանչյուր զինվորի զոհվելը բացասաբար էր ազդում զորքերի բարոյահոգեբանական վիճակի վրա:

Անտեղի մարդկային կորուստները բացառելու նպատակով ԱՀ ՊԲ հրամանատարությունն անհրաժեշտ է համարել. ա) բոլոր կարգի հրամանատարների անմիջական մասնակցությունը պաշտպանության կազմակերպմանը, բ) լուրջ ուշադրություն դարձնել դիրքերի ինժեներական առումով ճիշտ կահավորմանը, գ) մշտական վերահսկողություն իրականացնել մարտական հերթապահությունում ընգրկված անձնակազմի նկատմամբ՝ բացառելով խտրական վերաբերմունքը զորահավաքային ռեսուրսի և ժամկետային զինծառայողների նկատմամբ, դ) անշեղորեն հետամուտ լինել վերադաս հրամանատար-



րության ցուցումների և հրամանների կատարմանը և մշտապես նույնը պահանջել ենթականերից, ե) ձեռնարկել գործուն միջոցներ՝ մարտական հերթապահության ընդգրկված անձնակազմի զգոնության բարձրացման ուղղությամբ, գ) լուրջ ուշադրություն դարձնել մարտական խնդիրների կատարմանը ընդգրկված անձնակազմի հրահանգավորմանը, անվտանգության կանոնների իմացությանն ու պահպանմանը<sup>22</sup>:

ԱՀ ՊԲ հրամանատարության առաջադրված խնդիրների համաձայն ձեռնարկված միջոցների և վերահսկողության ուժեղացման շնորհիվ անձնակազմի շրջանում ոչ մարտական կորուստների թիվը 2016 թ. հետագա ամիսներին նկատելիորեն նվազել է: Ըստ բարոյահոգեբանական ապահովման և անձնակազմի հետ տարվող աշխատանքների ոլորտի պատասխանատուների հավաստիացումների՝ նույն դինամիկան է նկատվել նաև մարտական կորուստների առումով՝ մարտական հերթապահություն ու դիրքային պաշտպանություն իրականացնող զինծառայողների զգոնության բարձրացման շնորհիվ<sup>23</sup>:

Մարտական պատրաստության ու մարտավարության կատարելագործման ոլորտներում ձեռնարկված միջոցների մասին պատկերացում կարող է տալ ԱՀ ՊԲ-ի 2016 թ. պատրաստության պլանի համաձայն՝ նոյեմբերի

---

<sup>22</sup> ԿԳԿԱ, ֆ. 9, գ. 12, թ. 65:

<sup>23</sup> Մարտիկ. 2017, № 9-10:

4-ից 8-ը կենտրոնական ենթակայության մի շարք զորամասերի հետ անցկացված քառափուլ գնդային-մարտավարական զորավարժությունը: Դրա թեման էր «Զորամասերի դուրսբերում մարտական կիրառման շրջաններ՝ հակառակորդի հանկարծակի հարձակման պայմաններում, վերախմբավորման իրականացում, պաշտպանական մարտի վարում, մխրճված հակառակորդի ջախջախում և առաջնագծի վերականգնում, այնուհետև՝ դիրքերի բարելավման նպատակով հարձակողական մարտի վարում և նպաստավոր դիրքերի զբաղեցում»<sup>24</sup>: ԱՀ ՊԲ հրամանատարի գնահատմամբ, այդ զորավարժության թեման բխում էր վերջին շրջանում հակառակորդի գործողություններից և արդյունավետ է եղել նմանատիպ իրավիճակներում շտաբների ներդաշնակումը: Զորավարժությունը հնարավորություն է ընձեռել մեկ անգամ ևս ստուգելու ԱՀ ՊԲ զորքերի պատրաստականությունը, տեղում որոշումներ ընդունելու և իրագործելու հրամանատարության գործնական ունակությունները: Զորավարժությանն ընդգրկված զինծառայողները հայտնվել են մարտականին մոտ այնպիսի իրադրությունում, որտեղ պարզորոշ դրսևորվել են նրանց ռազմական ունակությունները: Դրանք ԱՀ ՊԲ հրամանատար Լ. Մնացականյանի համոզմամբ՝ ցույց են տվել, որ «մեր զինծառայողները, ստորաբաժանումներն ու դրանց հրամանատարները ի զորու են կատարել իրենց առջև

---

<sup>24</sup> Մարտիկ. 2016, № 45-46:

դրված խնդիրը, ավելին՝ կարող են իրականացնել նաև այլ բնույթի մարտական գործողություններ»<sup>25</sup>:

### **Եզրակացություններ**

Անշուշտ, 2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ԱՀ ՊԲ-ում ձեռնարկված միջոցների արդյունավետության մասին փաստերի ու հրապարակումների շարքը կարելի է շարունակել, բայց 2020 թ. աշնանային ռազմարշավում ունեցած ճակատագրական անհաջողությունները, պատճառահետևանքային կապի շրջանակներում, թույլ չեն տալիս դրանք գնահատել տեղեկատվական-քարոզչական հարթությունից դուրս՝ որպես իրական արդյունք: Ամեն մի ձեռնարկում, միջոցառում, գործողություն գնահատվում է նախ և առաջ իր դրական վերջնարդյունքով: Սակայն, 2020 թ. աշնանային ռազմարշավի փորձությունը ցույց տվեց, որ 2016 թ. գարնանային ռազմարշավից հետո ԱՀ ՊԲ-ում ձեռնարկված միջոցների արդյունավետությունը, նաև այլ հանգամանքների ու օբյեկտիվ պատճառների ազդեցությամբ, բավարար չի եղել: Առաջնագծի տեսադիտարկման համակարգերի ցանցի ստեղծման, զինամթերքի անհրաժեշտ պաշարների կուտակման, կապի միջոցների կատարելագործման, անձնակազմի կենցաղային պայմանների բարելավման և այլ ուղղություններով ձեռնարկված քայլերը թերևս ավելի երկարաժամկետ ապագայի համար էին

---

<sup>25</sup> Մարտիկ. 2016, № 45-46:

նախատեսված՝ թերագնահատելով թշնամու անթաքույց ռազմական նախապատրաստությունները և մշտական սպառնալիքներից անմիջական ազդեսփայի անցնելու վերահաս վտանգը:

Իրադրության, մարտահրավերների ու ռազմական ներխուժման սպառնալիքների օբյեկտիվ գնահատմանը և անհետաձգելի միջոցներ ձեռնարկելուն խանգարել են ինչպես ՀՀ և ԱՀ ռազմաքաղաքական ղեկավարության կոպիտ սխալները<sup>26</sup>, փոփոխված աշխարհաքաղաքական իրադրության անտեսմամբ՝ դաշնակիցների ու միջազգային դերակատարների հետ անհամարժեք փոխհարաբերությունները և դրանցից բխող, բայց չարդարացված ակնկալությունները, ներքաղաքական լարվածությունը, այնպես էլ քաղաքական նպատակահարմարությանն ու ամբոխավարությանը համահունչ գունազարդված հասարակական կարծիք ձևավորելուն նպատակաուղղված տեղեկատվական-քարոզչական էյֆորիկ քաղաքականությունը:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

**Բրուտենց Գ.** 2020, Պարտության համը. ինչպե՞ս տանուլ տրվեց պատերազմը (29 November 2020) <https://acnis.am/en/-analysis/39-2020>. ներբեռնումը՝ 11.02.2024 թ.:

**Խաչատրյան Մ.** 2016, Արցախի 2016 թ. ապրիլյան Քառօրյա պատերազմը և պատերազմների էվոլյուցիան,

---

<sup>26</sup> **Բրուտենց.** 2020:

«Անդին» (գրական-գեղարվեստական, հասարակական-քաղաքական ամսագիր), Երևան, մաս I, № 4, ապրիլ, էջ 104-115, մաս II, № 5, մայիս, էջ 114-117, մաս III, № 6, հունիս, էջ 108-116:

«Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ (ԿԳԿԱ), ֆ. 9, գ. 12, թթ. 1-75:

Հայ զինվոր (ՀՀ ՊՆ պաշտոնաթերթ) 2016, № 13, 17: Հայաստան-2016. չտրտած դասեր 2016, Մանվել Սարգսյան (գիտ. խմբ.), Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Երևան, ՌԱՀՀԿ, 230 էջ:

**Հասրաթյան Ս.** 2017, Ապրիլյան քառօրյա առճակատում: (Արցախ. 02-05.04.2016 թ.), Տ. Առուշանյան (խմբ.), Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 168 էջ:

**Հարությունյան Մ.** 2021, Արցախում ռազմարվեստի զարգացման արդի փուլի առանձնահատկությունները, Շուշի-Երևան, «Կաճառ» գիտական կենտրոնի հրատ., 352 էջ:

**Հովհաննիսյան Ա.** 2017, Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. հեռանկարներ: Համառոտ ուսումնասիրություն, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության իստիտուտ, 661 էջ:

Մարտիկ (ԼՂՀ ՊՆ պաշտոնաթերթ) 2016, № № 13-18, 45-46:

Մարտիկ 2017, № 9-10:

**Մինասյան Ս.** 2016, Ապրիլյան չորսօրյա պատերազմը. պատճառներ և հետևանքներ, «Անդին» ամսագիր, Երևան, № 4, էջ 22-24:

**Մենենջյան Ա.** 2018, Քառօրյա պատերազմ. մեդիաարձագանքներ, «Ժուռնալիստկա և հաղորդակցություն», № 1 (13), Երևան, «ԵՊՀ», էջ 103-110:

Սիրիացի վարձկանների ցուցմունքների համաձայն՝ Ադրբեջանը վախի դեմ դեղահաբեր է բաժանել գրոհայիններին/ <https://armenpress.am/arm/news/1034060> (ներբեռնումը՝ 10.02.2024 թ.).

**Տեր-Աբրահամյան** 2019, Ապրիլյան պատերազմի այլընտրանքային պատմությունը (<https://timestream.mediamax.am/story/12> ներբեռնումը՝ 29.04.2020 թ.):

Армянофобия в Азербайджане (исследование проведено с августа 2022 года по февраль 2023 года) <https://www.luys.am/img/artpic/small/75ff2c8e4ab023614e4АрмянофобиявАзербайджане.pdf>

**Макиенко К.** (ред.) 2018, В ожидании бури: Южный Кавказ (Авторы: М.С. Барабанов, М. Йешильташ, А.В. Лавров, Н.А. Ломов, Ю.Ю. Лямин, Л. А. Нерсисян, А.В. Никольский, М. Серен, И. А. Топчий), Москва, Центр анализа стратегий и технологий, 200 с. (Ссылка на электронную версию: <http://cast.ru/upload/iblock/-b0a/b0a00906a408158d431afb51cdee7440.pdf>)

**Манукян В.** 2021, Азербайджан подсел на наркотики (2021-08-14 12:04)/ <https://www.golosarmenii.am/article/126280/podsel-panarko-tiki> (дата обращения: 10.02.2024 г.).

По показаниям сирийских наемников, Азербайджан раздавал боевикам психотропные вещества/ <https://armenpress.am/rus/news-/1034060> (дата обращения: 10.02.2024 г.).

**Мгер А. Арутюнян, *Институт истории НАН РА, к.и.н., доцент*, К вопросу эффективности мер, принятых в Армии Обороны Республики Арцах после весенней кампании 2016 года**

### **Резюме**

Во время весенней кампании 2016 г., благодаря упорному сопротивлению Армии Обороны (АО) Республики Арцах (РА), в целом удалось сорвать стратегические планы Вооруженных Сил (ВС) Азербайджана, которые возобновили агрессивные военные действия. Однако выявился ряд недостатков и упущений в организации, управлении и тактике, в том числе в обороне и контрнаступлении, боевой подготовке и других областях деятельности ВС РА. Несомненно, эти вопросы стали предметом специального обсуждения руководящих органов и непосредственных военачальников ВС, в результате чего еще в 2016 г. был проведен анализ результатов кампании и составлен план по устранению недостатков. Хотя подобные документы хранятся под грифом «совершенно секретно», можно заметить некоторые показательные факты, которые вызывают сомнения об эффективности принятых мер в АО РА. Неэффективность проявилась в недостаточной подготовке к осенней агрессии 2020 г. и игнорировании очевидных угроз и вызовов.

В 2020 г. храбрость талант и преданность личного состава ВС РА и добровольцев, пришедших на помощь из Армении, на некоторое время сдерживали агрессию преобладающих азербайджанских сил, но, к сожалению, этого оказалось недостаточным для перелома в ходе боевых действий и перехвата военной инициативы у противника.

Хотя существует множество фактов и публикаций о эффективности принятых мер в ВС РА после весенней кампании

2016 года), однако фатальные провалы осенней кампании 2020 г. не позволяют оценить их как реальные достижения) вне информационно-пропагандистского контекста.

**Ключевые слова:** Республика Арцах, Армия Обороны, штаб, кампания, личный состав, фронт, агрессия.

**Mher A. Harutyunyan, Institute of History of NAS RA, PhD in History, Associate Professor, On the effectiveness of measures taken in the Defense Army of the Republic of Artsakh after the spring campaign of 2016**

### Summary

In the spring campaign of 2016, due to the steadyfist resistance of the Defense Army (DA) of the Republic of Artsakh (RA), in general it was possible to thwart the strategic plans of the Armed Forces (AF) of Azerbaijan, which resumed aggressive warfare. However, a number of shortcomings and omissions in the organization, management, tactics, including defense and counter-offensive strategies, combat training and other areas of activity of the RA DA were revealed. Undoubtedly, these issues have been the subject of special discussion of the governing bodies and direct military commanders of the Armed Forces, leading to the analysis of campaign outcomes as early as 2016 and the formulation of plan to address the shortcomings. Although such documents are inaccessible to us being classified as "top secret", certain revealing facts cast doubt on the effectiveness of measures taken in the RA AO. Ineffectiveness lies in insufficient preparation for the fall aggression of 2020 and ignoring obvious threats and challenges.

In 2020, the skill of the personnel of the RA Armed Forces and



volunteers from Armenia, albeit briefly, contributed to halting the aggression of the prevailing Azerbaijani forces. Unfortunately, it was not enough, in the absence of other factors, to make a break in hostilities and intercept the military initiative from the enemy.

Although there are many facts and publications about the effectiveness of the measures taken in the Armed Forces after the spring campaign of 2016, however, the catastrophic failures of the fall 2020 campaign make it impossible to assess them as a genuine outcomes outside the the context of propaganda.

***Key words:*** Republic of Artsakh, Defense Army, headquarters, campaign, personnel, front, aggression.

**ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԿԱՐՄԵԼԻՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՀԱՅՐ  
ՈՒԳՈՆԵԻ (ՀՅՈՒԳՈ)  
ՁԵԿՈՒՑԱԳԻՐ-ՆԱՄԱԿԸ (1709 թ. ԱՊՐԻԼԻ 2)  
ՀՈՈՄԻ ՀԱՎԱՏԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆԸ**

Նոր Զուղայի հայության շրջանում XVII դարավերջին և հաջորդ դարասկզբին կաթոլիկ քարոզիչների գործունեության մասին պահպանվել են բազմաթիվ սկզբնաղբյուրներ՝ ուղեգրություններ, արխիվային վավերագրեր, հուշագրություններ<sup>1</sup>: Այդ վավերագրերի շարքից է Նոր Զուղայի կարմելիտների<sup>2</sup> առաջնորդ հայր Ուգոնեի (Հյուգո)<sup>3</sup> 1709 թ. ապրիլի 2-ի նամակը ուղղված Հռոմի Հա-

---

<sup>1</sup> Նոր Զուղայի XVII-XVIII դարերի պատմության վերաբերյալ խիստ շահեկան են Էլիզաբեթ Թաջիրյանի աշխատությունները: Դրանք սկզբնաղբյուրային նշանակություն ունեն, քանզի պարունակում են եվրոպական աղբյուրներից հայերեն քաղվածո թարգմանություններ՝ արժեքավոր ծանոթագրություններով (Թաջիրյան Է., Նոր Զուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012: Նույնի՝ Նոր Զուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում, մաս II, Երևան, 2017:

<sup>2</sup> Կարմելիտների միաբանությունը ստեղծվել է XII դ.: Անվանումը կապված է Իսրայելի հյուսիս-արևմտյան մասում գտնվող Կարմելոս լեռան հետ, որի վրա հիմնվել է միաբանությունը:

<sup>3</sup> Հայր Ուգոնեն, իբրև «նահանգային փոխանորդ», Իրանում ծառայել է 1705-1708 թթ. ( A Chronicle of the Carmelites in Persia and the papal Mission of the XVII<sup>th</sup> and XVIII<sup>th</sup> centuries, vol. 2, London,

վատի տարածման միաբանությանը (Propaganda Fide): Նամակի գլխավոր նյութը վերաբերում է Նոր Զուղայում կարմելիտ քարոզիչների գործունեությանը: Վավերագիրը, միաժամանակ, ուշագրավ տեղեկություններ է հաղորդում XVII-XVIII դդ. հայ ազատագրական պայքարի նշանավոր ղեկավարներից Իսրայել Օրու 1708 թ. պարսկական դեսպանագնացության և նորջուլայեցի հայ կաթոլիկ Շեհրիմանյանների նշանավոր վաճառականական տոհմից Մուրադի որդի Նազարի գործունեության մասին<sup>4</sup>:

Նամակը գրված է հին իտալերենով, բնօրինակը պահվում է Հռոմի Հավատի տարածման միաբանության

---

1939, p. 726, 730-731): Նրան, որպես «նահանգային փոխանորդ», 1708 թ. հոկտեմբերից հաջորդել է հայր Ժոզեֆը: Թերևս դա է պատճառը, որ խնդրո առարկա նամակում Ուզոնեն ներկայանում է միայն որպես Նոր Զուղայի առաջնորդ (A Chronicle of the Carmelites in Persia and the papal Mission of the XVII<sup>th</sup> and XVIII<sup>th</sup> centuries, vol. 2, p. 731):

<sup>4</sup> Իսրայել Օրու գործունեության մասին մասնրամասն տե՛ս Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Կ. Ք, Երևան, 1957: Շեհրիմանյան տոհմի գործունեության մասին տե՛ս Խաչիկյան Շ., Շեհրիմանյանց ընկերության առևտրատնտեսական գործունեության մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1968, № 9, էջ 57-63: Aslanian S., From the Indian Ocean to the Mediterranean The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, University of California Press, 2011, pp. 149-158. Նազար Շեհրիմանյանի գործունեության մասին տե՛ս Թաջիրյան Է., Նոր Զուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, էջ 84-88:

արխիվում<sup>5</sup>: Մաշտոցյան Մատենադարանի Կաթողիկոսական դիվանում գտնվում է վավերագրի լուսապատճենը՝ թղթապանակ 262, վավերագիր 102ա, և դրա մեքենագիր տարբերակը՝ 102բ:

Նամակին կցված է նաև Հռոմի Հավատի տարածման միաբանության արխիվի 1710 թ. մեկ այլ վավերագիր, որի համաձայն՝ հայր Ուգոնեի նամակը քննարկվել է միաբանության՝ նույն թվականի օգոստոսի 1-ին տեղի ունեցած գլխավոր ժողովում<sup>6</sup>: Վավերագրում հականե անվանե նշված են ժողովի մասնակիցները: Այս վավերագրի հայերեն թարգմանությունը ևս առկա է սույն հրապարակման մեջ:

Նոր Զուղայի կարմելիտների առաջնորդ հայր Ուգոնեի խնդրո առարկա նամակը հատվածական թարգմանությամբ հրատարկել է Հարություն Քյուրդյանն իր «Իսրայել Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն» մեծարժեք աշխատությունում<sup>7</sup>: Նա նույն աշխատության մեջ թարգմանաբար հրապարակել է նաև Հռոմի Հավատի տարածման միաբանության արխիվի 1710 թ. նշյալ

---

<sup>5</sup> Sacrae Congregationis de Propaganda Fide, 1669-1760, vol. 573, p. 48.

<sup>6</sup> Հայտնի է, որ կաթոլիկ քարոզիչների՝ առաջնահերթ կարևորության տեղեկագիր նամակներն ամեն ամիս քննարկվել են Հավատի տարածման միաբանության ընդհանուր ժողովում: <http://www.-archivistoricopropaganda.va/content/archivistoricopropagandafide/en/archivio-storico/fondi-archivistici.html> 01.02.2024

<sup>7</sup> Քիրտեան Յ., 1960, Իսրայել Օրի. պատմաքննական ուսումնասիրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, էջ 171-172:

վավերագիրը: Հարություն Քյուրդյանի թարգմանությունից դուրս են մնացել Ուզոնեի նամակի մի քանի կարևոր հատվածներ, հատկապես՝ Նազար Շեհրիմանյանին վերաբերող տեղիները, դավանափոխության, մուսուլմանների շրջանում քրիստոնեության տարածման մասին վկայությունները, ինչպես նաև Հավատի տարածման միաբանության ժողովի մասնակիցների անունները: Այս ամենը հաշվի առնելով՝ սույն հրապարակմամբ ներկայացնում ենք նշված վավերագրերի հայերեն ամբողջական թարգմանությունը՝ համապատասխան ծանոթագրություններով:

Հռոմի Կղեմես VIII պապի (1592-1605) նախաձեռնությամբ կարմելիտ քարոզիչները 1604 թ. հաստատվեցին Իրանում: Իբրև պապական աթոռի և եվրոպական պետությունների բանագնացներ՝ նրանք հանձնառություն ունեին նպաստելու Սեֆյան Իրանին հակաօսմանյան դաշինքում ներգրավելու գործին<sup>8</sup>: Հռոմի պապական աթոռի քարոզչությունն Իրանում ընդլայնվեց թուրք-իրանական պատերազմների ժամանակ (1512-1639), երբ Արևմուտքը, օգտվելով նպաստավոր իրավիճակից, որոշեց Արևելքում ամրապնդել իր ներկայությունը: Եվրոպական պետությունները և նրանց հետ գոր-

---

<sup>8</sup> A Chronicle of the Carmelites in Persia and the papal Mission of the XVII<sup>th</sup> and XVIII<sup>th</sup> centuries, vol. 1, London, 1939, pp. 68-104. “Carmelites in Persia”, Encyclopædia Iranica <https://iranicaonline.org/articles/carmelites-in-persia> 24.01.2024

ծակցող Հռոմի պապական աթոռը ձգտում էին իրենց ազդեցությունը հաստատել Արևելք-Արևմուտք միջազգային տարանցիկ առևտրի մայրուղիների վրա: Արևելքի անգեն նվաճումը կաթոլիկ Արևմուտքն իրականացնում էր մի քանի ճանապարհով: Դրանցից էր Սեֆյան և Օսմանյան տերությունների քրիստոնյա ժողովուրդների շրջանում կաթոլիկության տարածումը, որի համար պարարտ հող էին ստեղծում նրանց դեմ մուսուլման տիրապետողների հալածանքներն ու հարստահարությունները:

Միսիոներական առաքելությունները նաև նպատակ ունեին պաշտպանելու եվրոպական երկրների առևտրատնտեսական շահերը: Ուստի ամենևին պատահական չէ, որ դրանց մասնակցում էին նաև եվրոպացի առևտրականներ, իսկ քարոզչական կենտրոնները մեծ մասամբ հիմնվում էին առևտրական մայրուղիների վրա գտնվող բնակավայրերում: Լինելով վաճառաշահ կենտրոն՝ Նոր Զուղան գրավում էր Հռոմի պապական աթոռի ազդեցությունն այնտեղ ամրապնդել ջանացող միսիոներների ուշադրությունը:

**ԱՆԻ Ա. ՊԵՏՈՅԱՆ**

*Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի*

*կրպսեր գիտաշխատող*

ani.petoyan@yahoo.it

ID 0009-0004-4736-2479

DOI:

**Հավատի տարածման Սրբազան միաբանության արխիվ, գրություններ ընդհանուր ժողովներից, 1710 թ., հատոր 573, թերթ 47-48:**

Գերապայծա՛ն և ամենապատի՛վ Տեր<sup>9</sup>

Քանի՛ որ պարտավորություն ունենք ամեն տարի ինչ որ կերպ նպաստելու մեր առաքելությանը, տեղեկացնում եմ Ձերդ գերազանցությանը, որ լավագույնը, ինչ այս պահին անում ենք Ջուղայում, աղքատներին կրթելն է<sup>10</sup>: Նրանց մեծ մասը շիզմատիկների (հերձվածողների, նկատի ունի՝ Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալներին – Ա.Պ.) երեխաներն են՝ թվով հարյուրը: Նրանք ամեն կիրակի գալիս են օգնություն ստանալու: Յուրաքանչյուրին տալիս ենք մեկ բայոկո<sup>11</sup>, որը, սակայն, չի տրվում մինչև նրանք բարձրաձայն չաղղթեն: Նրանց ուսուցանում ենք քրիստոնեական հավատի դրույթներ, որոնք պարտադիր է իմանալ առողջական կարիքների համար: [Դա արվում է] խոստովանության և

---

<sup>9</sup> Նկատի ունի Հռոմի Կղեմես XI պապին (1700-1721):

<sup>10</sup> Կաթոլիկության տարածման համար կարմելիտներն օգտագործում էին բազմաթիվ միջոցներ՝ ֆինանսական օժանդակություն, կրթություն, հիվանդների խնամք և այլն (Azam Fooladi\_Panah, Jamal Moosavi, *Missionary Activities of Carmelites under Coverage of Medical Services in Safavid Period*, “The Journal of Research on History of Medicine”, vol. 9, Issue 1, 2020, pp. 35-42):

<sup>11</sup> Արծաթե դրամ, որը շրջանառության մեջ է դրվել XV դ.: <https://en.moneterare.net/baiocco-coin/> 24.01.2024

հաղորդության միջոցով<sup>12</sup> ուսուցանելով նրանց, որ չկա այլ [արժեք], քան եկեղեցին և Քրիստոսը: Լինելով Քրիստոսի ճշմարիտ աշակերտ՝ կարևոր է հավատալ այն եկեղեցուն և այն ամենին, ինչ նա պատվիրում է, [որոնց] մենք ընդհանրապես հավատում ենք: Հարկ չեմ համա-

---

<sup>12</sup> Հաղորդության և խոստովանության մասին հայր Ուգոնեի հիշատակումը դավանափոխության աներկբա վկայություն է: Հայոց եկեղեցին, ի դեմս Ամենայն հայոց կաթողիկոսության, հետևողական պայքար էր մղում կաթոլիկ քարոզչության դեմ ինչպես Հայաստանում (թե՛ Արևմտյան, թե՛ Արևելյան), այնպես էլ նրա սահմաններից դուրս գտնվող հայկական համայնքներում: Այսպես՝ Ալեքսանդր Ա Ջուղայեցի կաթողիկոսը (1706-1714), մտահոգ լինելով Նոր Ջուղայում կաթոլիկության տարածմամբ, դիմում է Իրանի շահ Սուլթան Հուսեյնին՝ խնդրելով սահմանափակել պապական քարոզիչների գործունեությունն իրանահայության շրջանում: Սուլթան Հուսեյնը (1694-1722) բավարարում է կաթողիկոսի խնդրանքը՝ 1710 թ. հրապարակելով հրովարտակ, որը կաթոլիկներին արգելում էր դավանափոխ անել Հայ Առաքելական եկեղեցու հավատացյալների երեխաներին, ինչի մասին հստակ վկայություն կա քննության առարկա նամակում (Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, Հրովարտակներ, պրակ երրորդ (1652-1731), կազմեց Ք. Պ. Կոստիկյանը, Երևան, էջ 160-161): Շահական այս հրովարտակի մասին վկայում է նաև Սիմեոն Երևանցին. «Շահ Հիսեյնի ուղամ, զոր գրե ըստ արգայի Աղեքսանդր կաթողիկոսին Ջուղայեցոյ վասն ֆռանկաց, թէ մի երբէք երևեսցին յիշխանութանս իմում և ոչ զօրէնս իւրեանց ուսուցեն և կամ հրաւիրեսցեն զք ի յաղանդս իւրեանց մի զմանկունս ուսուցեն և ի հայոց զկանայս մի առցեն և այլ այսպիսիք պատուէրք ի ՌՃԻԲ. (1710) թօին տաճկաց: Գի՛տ ցուցական և... համարովն» (Սիմեոն Երեւանցի, Ջամբո, աշխատասիրությամբ Հրանտ Օհանյանի, Տնտեսական պատմության վավերագրեր, հ. Ե, Երեւան, 2022, էջ 257-258):



րել շիզմատիկների երեխաների հետ այս կետից առաջ գնալ՝ թողնելով նրանց իրենց հավատի պարզության մեջ: Այս տարբերակն ավելի շահավետ է և չի կարող տհաճություն պատճառել որևէ մեկին: Այս ամենն ավելի հաճելի է շիզմատիկներին, քան կաթոլիկներին, որոնք հաճախ գալիս էին իրենց երեխաների հետ:

Աղքատների պահանջները լսելու և նրանց կարիքները բավարարելու համար ինձ տրվել է ժամանակ, և հուսով եմ՝ Աստծո շնորհիվ կարճ ժամանակում կգտնեմ կայուն միջոցներ:

Վեց ամիսների ընթացքում մկրտել ենք վեց մահամերձ մուսուլմանների երեխաների, որոնցից միայն մեկն էր տկարամիտ: Նա առայժմ գտնվում է իր՝ ծայրահեղ աղքատ հարազատների հոգաձության ներքո, և երբ փոքր ինչ մեծանա, գաղտնաբար կփախցնենք նրանց ձեռքից՝ տանելով անվտանգ մի վայր, որտեղ կուսուցանենք մեր սուրբ կրոնը և դարձի կրեթենք դեպի քրիստոնեություն:

Ձերդ Գերազանցությանը պետք է տեղեկացնեմ, որ պարսից թագավորի ենթակայության տակ գտնվող մի հայ<sup>13</sup>, ծնված Գիլանի շրջանում, ներկայանալով դես-

---

<sup>13</sup> Խոսքը վերաբերում է Իսրայել Օրուն: Հայր Ուգոնեի զեկուցագիր նամակն ուշագրավ տեղեկություններ է պարունակում Իսրայել Օրու 1708 թ. պարսկական դեսպանագնացության մասին: Աշոտ Հովհաննիսյանը կարմելիտների «Ժամակագրություն»-ից ծանոթ է Օրու մասին հայր Ուգոնեի հայտնած տեղեկություններին, որոնք քննել է իր մեծարժեք աշխատության մեջ (Հովհաննիսյան Ա.,

պան, ապրաքի համար առանց մաքս վճարելու, Հռոմի պապի դրոշով եկել է և հայտնել, որ կաթոլիկ եկեղեցին պետք է վերամիավորվի Հայոց եկեղեցուն:

Այժմ այս տգետ և նսեմ անձը, որը ոչ մի կարևորություն չի ներկայացնում, արժանացավ միսիոներների դատին, և քանի որ նրա նամակները կեղծ են ու շինծու՝ նա արհամարհվեց կաթոլիկներից՝ փոխարենն արժանանալով շիզմատիկների համակրանքին: Նրանց մեծ տոնին իր մարդկանց հետ այցելելով արքեպիսկոպոսական եկեղեցի՝ Օրին ֆրանկի զգեստով հաղորդվեց՝ Ձերդ Սրբազնության դրոշը եկեղեցու դռանը դնելով: Ձերդ Գերազանցությունը թող դատի այս միջադեպը, որը տեղի ունեցավ կաթոլիկների մոտ<sup>14</sup>:

---

Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, էջ 577-578):

<sup>14</sup> Կաթոլիկ քարոզիչները խիստ անհանգստացած էին Իսրայել Օրու պարսկական դեսպանագնացությամբ, ուստի ամեն կերպ փորձում էին խոչընդոտել այն՝ չխուսափելով անգամ նրան վատաբանելուց ու պարսկական իշխանությունների մոտ նսեմացնելուց: Իսրայել Օրին, իր դեսպանագնացության վերաբերյալ կասկածներ չհարուցելու համար, Կղեմես XI պապից ստացել էր Իրանի շահին հասցեագրված 1705 հուլիս թվակիր նամակ, որով Հռոմի քահանայապետը հայտնում էր որ Օրին վայելում է իր վստահությունը: Սակայն Կղեմես XI-ը, ստանալով Շամախիում գործող եզուիտ քարոզիչ Հայր Շապիոնի նամակը, ըստ որի՝ Իսրայել Օրին ոչ թե Հայոց և Հռոմի կաթոլիկ եկեղեցիների միության կողմնակից է, այլ՝ հակառակորդ, անգամ պնդում է, որ Հայոց եկեղեցին պետք է արգելի հայերին՝ միանալու կաթոլիկ եկեղեցուն՝ անմիջապես նամակ է գրում Իրանի շահին՝ հայտնելով, որ այլևս չի սատարում նրան: Իրանում գտնվող ֆրանսիացի բանագնաց ոմն Միքայել

Բացի այդ, մի աղքատ քրիստոնյա (անունն այստեղ չեմ նշում, քանի որ նամակը կարող է հայտնվել անհավատների<sup>15</sup> ձեռքում), թուլամտության պատճառով դառնալով մուսուլման, փորձել է վերադառնալ կաթոլիկությանը: Միսիոներների խնդրանքով նա ապաստան հայցեց դեսպանից<sup>16</sup>, որպեսզի թուրքերը չկարողանան իրեն հալածել: Նա (Իսրայել Օրին-Ա.Պ.) խոստացավ պաշտպանել նրան, իսկ հետո թուրքերի առաջին իսկ պահանջով հանձնեց նրանց: Այս բոլոր արարքների համար նա պետք է պատժվի, եթե համարձակվի Հռոմ գալ և բացատրություն ներկայացնել «իր գեղեցիկ առաքելության համար»<sup>17</sup>: Նրա անունն Իսրայել Օրի է, որը եղել է Ֆրանսիայի զինվոր:

---

անգամ լուրեր էր տարածում, որ Իսրայել Օրու անունը գաղտնագիր է, որը նշանակում է՝ «Նա կլինի թագավոր» “Il sera roi” (A Chronicle of the Carmelites in Persia . . . , p. 565-567): Այդպիսով նա փորձում էր պարսկական իշխանություններին հավաստիացնել, թե Օրու գլխավոր նպատակը հայկական թագավորության վերականգնում է: Հռոմի պապից Օրու ստացած նամակն ամենևին կեղծիք չէր: Կաթոլիկ քարոզիչներին, պարզապես, խստորեն անհանգստացրել էր Հայ Առաքելական եկեղեցում նրա հաղորդություն ստանալը: Հռոմի պապից Իսրայել Օրու ստացած նամակի, նրա պարսկական դեսպանագնացության մասին վկայող վավերագրերը տե՛ս նաև Քիրտեան Յ. Իսրայել Օրի, էջ 151-180:

<sup>15</sup> Նկատի ունի մուսուլմաններին:

<sup>16</sup> Նկատի ունի Իսրայել Օրուն:

<sup>17</sup> Չակերտներում դրված հատվածը թարգմանում ենք բառացի: Ուզոնեն նկատի ունի Իսրայել Օրու՝ վերոնշյալ քայլերը:

Մի քանի ամիս առաջ էր, որ պարոն Նազար Շեհրիմանն ինձ խնդրեց տալ դրական բնութագրով մի վկայագիր: Ես դա արեցի և ստորագրելու տվեցի եպիսկոպոսի ընդհանուր փոխանորդին: Այս հանգամանքը մեծ մտահոգություն պատճառեց նրանց, որոնք անհամաձայնություն ունեին պարոն Նազարի հետ և ասում էին, որ նա վերը նշված վկայագիրն ուղարկել է Սրբազան միաբանություն, որպեսզի ականավոր կարդինալներն անցնեն իր կողմը: Նրանց հանդարտեցնելու և կողմնակալություն չցուցաբերելու համար՝ խոստացա, որ առաջին իսկ հնարավարության դեպքում, երբ պատիվ ունենամ գրելու Ձերդ Գերազանցությանը, կտեղեկացնեմ, որ վերը նշված վկայագիրը երբեք ուղղված չի եղել դատական այն վեճին, որ պարոն Շեհրիմաններն ունեն Հռոմի դատարանում<sup>18</sup>: Աստծո կամոք թող այս վեճը շուտ ավարտ-

---

<sup>18</sup> Պֆալցի կյուրֆյուրստ Հովհան Վիլհելմին հղած 1699 թվակիր նամակում Իսրայել Օրին, խոսելով Իրանից Վենետիկ տեղափոխված հայ մեծահարուստ Շեհրիմանյանների մասին, հայտնում է, որ նրանք փորձել են դատական ճանապարհով հետ ստանալ կես միլիոն ֆլորին արժողությամբ մի կալվածք (Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Բ, էջ 384): Պնդելի է, որ նամակում հիշվում է հենց այս դատական վեճը, որը, ըստ հայր Ուզոնեի, բացասական ազդեցություն է ունենում Նոր Ջուլայում իրենց առաքելության վրա: Վավերագրին կցված է նաև Նազար Շեհրիմանյանին տրված վկայագիրն ստորագրած մագիստրոսների ու կարդինալների հավաստիացումն առ այն, որ նա, ընտանյոք հանդերձ, ջերմեռանդ կաթոլիկ է և չի ձգտում անարդար շահի: Ենթադրել կարելի է, որ Նազար Շեհրիմանյանի հակառակորդները կասկածի տակ են դրել նրա կաթոլիկադավան

վի, քանի որ այն մեծ խոչընդոտ է, որը, [սակայն], չի կարող կարևոր ազդեցություն ունենալ մեր սուրբ կրոնի տարածման ընթացքի վրա. առաջինը, որ չենք կարողանա գնալ [Հայ Առաքելական եկեղեցու հետևորդների] տներ, կամ երեխաներին կրթել, կամ այցելել հիվանդներին, կամ տալ որոշ հոգևոր ցուցումներ՝ առանց կասկած և անվստահություն հարուցելու վիճաբանող կողմերի շրջանում: Այս ամենից զատ, մեծ մասն ունի մի շատ վատ սկզբունք. երբ նրանք վիճում են, չպետք է գան խոստովանության՝ ասելով, որ վեճը թշնամություն է առաջացնում, իսկ դա թույլատրված չէ խորհուրդներով: Եվ շատերն այս պատրվակով խուսափում են զատկական հաղորդությունից՝ հաշվի չառնելով, որ մենք ասում ենք հակառակը: Ահա այսպիսի առաքելությամբ ենք առաջնորդվում Ջուղայում, որի հիմքում Ձերդ Գերազանցության խորհուրդներն են: Եվ վերջում՝ համբուրում եմ Ձեզ ամենայն ակնածանքով:

Ջուղա, 2 ապրիլի, 1709 թ.

---

լինելը: Վավերագրի այս հատվածը, ինչպես նաև Հավատի տարածման միաբանության 1710 թ. օգոստոսի 1-ին տեղի ունեցած ժողովի մասին տեղեկությունը լատիներեն են, որոնց թարգմանության համար շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի «Թարգմանական մատենագրության» բաժնի վարիչ, ք. գ. դ. Գոհար Մուրադյանին:

Ամենախոնարհ եւ նվիրյալ ծառա, Ջուղայի Սուրբ Դիոնիսիոսի (կարմելիտների) փոխանորդ՝ եղբայր Ուգոնե:

**Թերթ 49:** Մենք՝ ներքոստորագրյալներս, վկայում ենք, որ այդ Նազար Շեհրիմանը, ողջ ընտանիքով հանդերձ, ոչ միայն կաթոլիկ դավանանքն է քարոզում՝ ամենաջերմեռանդ խրատով, այլև դրա կողմնակիցն է, ինչպես նեցուկ և գլխավոր սյուններից մեկը: Նշված պարոնի խոսքերից միշտ հասկանալի է եղել, որ ինքը հավատարիմ է ճշմարտությանը, օժտված է աստվածավախ խղճով և ծարավ չէ անարդար շահի:

Ուրիշ ոչինչ չի պահանջում մեզանից պարոն Նազարը, և ոչ մի այլ բանի տակ չենք ստորագրում, քան վերը շարադրվածը:

***Հավատքի տարածման Սրբազան միաբանության արխիվ, գրություններ ընդհանուր ժողովներից, հատոր 80, թերթ 343, 350– 51:***

**Թերթ 343:** Հավատքի տարածման գլխավոր ժողովում, որ տեղի է ունեցել 1710 թ. օգոստոսի 1-ին՝ ժամը 12:00-ին, ներկա էին գերապատիվ մագիստրոսներ և սրբազան հայրեր հետևյալ կարգինալները. Սպադա, դե Աբդուա, Սակրիպանդես, Պրաֆակտուս, Սանկտակրուչիուս, Գաբրիելիուս, Աքուավիվա, Վալեմանուս, Կապ-

րարա, Դելատրամոհլէ, Տաքրոնու, Գազադինու, Իմպերիալիս եւ Բարբերինու:

**Թերթ 350, համար 16:** Սուրբ Դիոնիսոսի փոխանորդ, Ջուղայի բոկոտն կարմելիտ հայրերի առաջնորդ հայր Ուգոնեն 1709 թվականի ապրիլի 2-ի թվակիր նամակով, որը հասել է մի քանի օր առաջ, Ձերդ Գերազանցությանը տեղեկացնում է խմբերի (նկատի ունի միաբաններին-Ա. Պ.) մասին, որոնք ի սրտե իրենց կրոնական բարեգործությունն են անում՝ մասնավորապես ամեն կիրակի կրթելով շիզմատիկ աղքատ հայերի երեխաներին, որոնք թվով միշտ հարյուրն են: Նրանցից յուրաքանչյուրին տրվում է մեկ մետաղադրամ, որն օգնություն է ազգային կաթոլիկներից<sup>19</sup>:

**Թերթ 351:** Տեղեկացնում է նաև միսիոներիներին և այլ կաթոլիկներին հայ շիզմատիկ Իսրայել Օրու պատճառած վնասների մասին, որը փորձում է իր ֆրանկական ապրանքը մտցնել Պարսկաստան՝ թագավորին (շահին – Ա. Պ.) ներկայանալով իբրև Հռոմի պապի դեսպան: Ինչպես նաև ասել է, որ ունի նամակներ [պապից], որոնք միսիոներները կեղծ են համարում՝ կապելով տվյալ ստոր և տգետ անձի հետ: [Ուգոնեն] խորհուրդ է տալիս իր արարքների համար պատժել վերոնշյալ Իսրայելին, եթե նա երբևէ գա Հռոմ:

Ձերդ Գերազանցությանն ըստ կարգի պետք է տեղեկացնեմ, որ կեղծ դեսպանի (Իսրայել Օրու – Ա. Պ.) խա-

---

<sup>19</sup> Նկատի ունի հայ կաթոլիկներին:

բեության մասին հակիրճ ներկայացվել է Ձերդ Սրբազնությանը 1709 թ. նոյեմբերի 12-ի նամակով: Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանից տեղեկանում ենք, որ քրիստոնյա թագավորի<sup>20</sup> ներկայացուցչի միջոցով [ծանուցում<sup>21</sup>] է ուղարկվել Պարսից արքունիք, որը լավ արդյունք է ունեցել, քանի որ [Իսրայել Օրին] կասկածի ենթարկվելով արքունիքում, այնտեղից վերադարձել է Եվրոպա՝ անցնելով Վրաստանով և Մոսկվայով:

Մեկ օրինակ ուղարկիր վերոնշյալ Տեր Հորը:

---

<sup>20</sup> Հավանաբար նկատի ունի Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ին:

<sup>21</sup> Հավանաբար նկատի ունի Կղեմես XI-ի նամակը, որով Հռոմի պապը Պարսից շահին հայտնում է, որ չի սատարում Իսրայել Օրուն:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՀԻՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### **ԿԱՐԵՆ Ս. ԹՈՒՏԱԹՅԱՆ**

Հայաստանի Ժայռափորագիր նշանները և միջնադարյան գաղափարագրերը ..... 3

#### **ԱՐԵԳ Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ**

Արիստակես Լաստիվերցին և երկու ուղղություն XI դ. հայ պատմագրության մեջ ..... 27

### ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### **ՍԱԹԵՆԻԿ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Մանվել վարդապետ Կյումուշխանեցի.  
կյանքն ու գործունեությունը (1768-1801) ..... 44

#### **ՆԱՐԻՆԵ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

Խաչատուր Մալումյանը Գրիգոր Արծրունու կենսագրության և գործունեության առաջին լուսաբանող ..... 58

#### **ԱՍՏԴԻԿ Բ. ՂԱԶԱՐՅԱՆ**

Ամերիկյան միսիոներների կրթական գործունեությունը Օսմանյան կայսրությունում (XIX դարի երկրորդ կես - XX դարի սկիզբ) ..... 70

#### **ՍԻԼՎԱՐԹ Յ. ՄԱԼԽԱՍԵԱՆ**

Պոլսոյ հայ Կարմիր Խաչ ընկերությունը եւ իր գործունեությունը (1918-1922) ..... 87

#### **ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ, ՏԱՐՈՆ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ**

Ռուսաստանի Դաշնությունը Ղարաբաղյան

հակամարտության կարգավորման գործընթացում  
(1991 թ. սեպտեմբեր - 1992 թ. դեկտեմբեր) ..... 107

**ՋԵՆՆԻ Լ. ԹԱՄԱՐՅԱՆ**

Վրաստանի իշխանությունների վերաբերմունքը էթ-  
նիկ փոքրամասնությունների նկատմամբ հետխորհր-  
դային նոր իրողությունների համատեքստում ..... 130

**ՄՎԵՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

2016 թ. գարնանային ռազմարշավից հետո Արցախի  
Հանրապետության պաշտպանության բանակում  
ձեռնարկված միջոցների արդյունավետության հարցի  
շուրջ ..... 147

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ**

**ԱՆԻ Ա. ՊԵՏՈՅԱՆ**

Նոր Զուղայի կարմելիտների փոխանորդ հայր Ուգո-  
ների (Հյուգո) զեկուցագիր-նամակը (1709 թ. ապրիլի 2)  
Հռոմի հավատի տարածման միաբանությանը ..... 170

## СОДЕРЖАНИЕ

### ДРЕВНЯЯ И СРЕДНЕВЕКОВАЯ ИСТОРИЯ

#### **КАРЕН С. ТОХАТЯН**

Наскальные изображения Армении и средневековые идеограммы ..... 3

#### **АРЕГ А. ВАРДАНЯН**

Аристакес Ластиверци и два направления армянской историографии XI в. .... 27

### НОВАЯ И НОВЕЙШАЯ ИСТОРИЯ

#### **САТЕНИК М. ГРИГОРЯН**

Архимандрит (преподобный) Манвел Кюмушханеци: жизнь и деятельность (1768-1801) ..... 44

#### **НАРИНЕ А. АРУТЮНЯН**

Хачатур Малумян как первый автор биографии и деятельности Григора Арцруни ..... 58

#### **АСТХИК Б. ГАЗАРЯН**

Образовательная деятельность американских миссионеров в Османской империи (вторая половина XIX – начало XX вв.) ..... 70

#### **СИЛЬВАРТ О. МАЛХАСЯН**

Константинопольское Армянское общество Красного Креста и его деятельность (1918-1922) ..... 87

#### **РУБЕН Л. АЗИЗБЕКЯН, ТАРОН В. АКОПЯН**

Российская Федерация в процессе урегулирования Нагорно-Карабахского конфликта (сентябрь 1991 г.- декабрь 1992 г.) ..... 107

#### **ДЖЕННИ Л. ТАМАРЯН**

Отношение властей Грузии к этническим меньшинствам в условиях новых постсоветских реалий ..... 130

**МГЕР А. АРУТЮНЯН**

К вопросу эффективности мер, принятых в Армии  
Обороны Республики Арцах после весенней кампании 2016  
года ..... 147

**ПУБЛИКАЦИЯ**

**АНИ А. ПЕТОЯН**

Письмо отца Угоне (Хьюго), заместителя вице-президента  
кармелитов город Нор-Джуга (2 апреля 1709 г.) Конгре-  
гация пропаганды веры в Риме. .... 170

## CONTENT

### HISTORY OF THE ANCIENT AND MIDDLE AGES

#### **KAREN S. TOKHATYAN**

Rock-carved Signs of Armenia and the Medieval Ideograms ..... 3

#### **AREG A. VARDANYAN**

Aristakes Lastivertsi and Two Trends<sup>th</sup> in - 11 Century

Armenian Historiography ..... 27

### MODERN AND CONTEMPORARY HISTORY

#### **SATENIK M. GRIGORYAN**

Reverend Manvel Kyumushkhanetsi: Life and Activity  
(1768-1801) ..... 44

#### **NARINE A. HARUTYUNYAN**

Khachatur Malumyan as the first elucidator of the biography  
and activity of Grigor Artsruni ..... 58

#### **ASTGHIK B. GHAZARYAN**

Educational activities of American missionaries in the  
ottoman empire (the second half of the 19<sup>th</sup> century - the  
beginning of the 20<sup>th</sup> century) ..... 70

#### **SILVART H. MALHASYAN**

The Armenian Red Cross Society of Constantinople and its  
Activities (1918-1922) ..... 87

#### **RUBEN L. AZIZBEKYAN, TARON V. HAKOBYAN**

Russian Federation in the settlement of the Nagorno  
Karabakh conflict (September 1991 - December 1992) ..... 107

#### **JENNI L. TAMARYAN**

The attitude of the Georgian authorities towards ethnic

minorities in the context of new post-Soviet realities ..... 130

**MHER A. HARUTYUNYAN**

On the effectiveness of measures taken in the Defense Army of the Republic of Artsakh after the spring campaign of 2016 ..... 147

**PUBLICATION**

**ANI A. PETOYAN**

A letter from Father Ugone (Hugo), vicar of the Carmelites of New Julfa (April 2, 1709) to the Congregation for the Propagation of the Faith in Rome ..... 170

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ**  
(ԳԻՏԱԿԱՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ)

---

**THE PROBLEMS OF THE HISTORY OF ARMENIA**  
(SCIENTIFIC JOURNAL)

---

**ВОПРОСЫ ИСТОРИИ АРМЕНИИ**  
(НАУЧНЫЙ ЖУРНАЛ)

**1 (28). 2024**

Ռուսերեն և անգլերեն տեքստերի խմբագիր՝ Յու. Կրյուչկով  
Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100, ստորագրված է տպագրության 07.06.2024 թ.  
Тираж – 100, подписано к печати 07.06.2024 г.  
Printed copies – 100, signed for printing 07.06.2024

Հանդեսի պաշտոնական կայքէջը՝ <http://academhistory.am/>  
Официальный сайт журнала: <http://academhistory.am/>  
Official site of the journal: <http://academhistory.am/>

Հանդեսի էլեկտրոնային հասցեն՝ [hayotspatmutyanhartser@gmail.com](mailto:hayotspatmutyanhartser@gmail.com)  
Электронная почта журнала: [hayotspatmutyanhartser@gmail.com](mailto:hayotspatmutyanhartser@gmail.com)  
E-mail of the journal: [hayotspatmutyanhartser@gmail.com](mailto:hayotspatmutyanhartser@gmail.com)

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱ**  
**ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**  
**ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА**  
**INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

---

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,  
Մարշալ Բաղրամյան պող. 24/4, հեռ. 0(10)529263  
Адрес редакции: 0019, Ереван,  
пр. Маршала Баграмяна 24/4, тел. 0(10)529263  
Editorial office address: 0019, Yerevan,  
Marshal Baghramyan Ave., 24/4, tel. 0(10)529263